


**ՀԵՆԳ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԵՎ  
ՍՈՒՐԲ ՏԻՐԱԾՈՐ ԵՐԵՎՈՒՄՆԵՐԸ  
ԱՇԽԱՐԴՈՒՄ**

**ՄԱՍ ԱՌԱՋԻՆ**

**ՍՈՒՐԲ ՏԻՐԱԾՈՐ ՎԱՐԴԱՐԱՆԻ ԱՂՈԹՔԸ  
ՀՆԴԴԵՄ ՄԵՂՔԻ ԵՎ ԱՂԱՆԴՆԵՐԻ  
(Սուրբ Տիրամոր Վարդարանի աղոթագիրքը)**



**ՍՈՒՐԲ ՏԻՐԱԾՈՐ  
ՎԱՐԴԱՐԱՆԸ**

**ԵՐԵՎԱՆ 2023**

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ՆԱԽԱԲԱՆ

Սկսենք նրանից, որ, ի սկզբանե, պետք է տպագրվեր մեկ գրքույկ՝ Սուլրը Տիրամոր նախասիրած աղոթքը՝ Վարդարանը, բայց հետո միտք հղացավ ավելացնել նաև Աստվածամոր բազում երեռումներից մի շարք հայտնի երեռումներ աշխարհում, որոնք հաստատված են Եկեղեցով և կամ ընդունելի, նաև հավելյալ հինգ տեսակի վարդարանի աղոթքներ, և գրքույկը հաստացավ, որի պատճառով որոշվեց, որ կիսենք այն երկու մասի. առաջին գրքույկում լինի միայն մայր Վարդարանը՝ իր 15 խոստումներով՝ տրված Սուլրը Աստվածածնից՝ չհաշված այն մեծ վկայությանս պատմությունը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինի հետ կապված, որը հիմքն է հանդիսանում Վարդարանի տպագրման, նաև թե ինչ է իրենից ներկայացնում Վարդարանը՝ պատմությունը, նրա մեծագույն դերն ու նշանակությունը ողջ աշխարհում, և որը հանդիսանում է նաև այսօր մեր դարի ամենահզոր զենքը Սատանայի դեմ պայքարում, քանզի անտեսանելի պայքարի մեջ հաղթանակը բերում է տեսանելիի հաղթանակին, որովհետեւ այն ամենահամառոտ Ավետարանն է և չարի սարսափը,

այն Աստծո Սուրն է, որով կտրվում են Վիշապի գլուխները, և որ այդ Զենքը տրված է երկրորդ Եվային՝ սուրբ Աստվածածնին, Ում ոտքի տակ ճզմվում է Օձի գլուխը: Իսկ Սուրբ Մայրն այդ աստվածային Զենքը նաև մեզ՝ իր մյուս զավակներին է փոխանցում՝ պայքարելու թշնամու դեմ: Ինչպես որ 1971 թվականին մի էկզորցիզմի (դիվահալածության) ժամանակ Աստծո Հրամանով Սատանան խոստովանել է, որ՝ «Վարդարանի ամեն մեկ հատիկի վրա արված «Ողջո՛ւն Քեզ, Մարիամ» -ը մեկ հարված է իմ գլխին: Եթե քրիստոնյաները իմանային Վարդարանի զորության մասին, իմ վերջը կգար»:

Եվ ահա, երբ հասունացավ աղոթագրքույկի տպագրման պահը, Աստված բացեց շատերի սրտերը սուրբ Տիրամոր բարեխոսությամբ, ու այնպիսի հրաշքով բազում հավատացյալներ մասնակցեցին այս սրբազան հանգանակությանը, այս մեծ ողորմության ծրագրին, որի կազմակերպիչը Տերն է, իսկ ով ջանք է թափում ուրիշի փրկության համար, Տեր Հիսուս Քրիստոս էլ պիտի նրան ողորմի և փրկի (Մատթ. 5.7), քանզի նա երբեք չի մերժում իր Սուրբ Մոր խնդրանքը, Ով մեզ համար՝ իր հոգեոր զավակների փրկության համար գիշեր ու ցերեկ աղաչում է Աստծո Գահի առաջ, իսկ Վարդարանի

աղոթքով մենք շատ ամուր ենք բռնում Տիրամոր Զեռքը, ու երբեք նա չի թողնի, որ փոսը ընկնենք, այլ կտանի միայն ուղիղ ճանապարհով դեպի Աստված՝ դեպի իր Անդրանիկ և Միածին Որդին:

Սուրբ Աստվածածինը նախակարապետն է Քրիստոսի Երկրորդ Գալստյան և Համափրկչուհին: Այսպիսով, շատ արագ տպագրվեց սուրբ Վարդարանի աղոթագրքույկը՝ առաջին մասը, 2023թ. հունիսին: Բայց մինչ տպագրվելը, շատ էի մտածում այն մասին, որ չե՞ի ցանկանա Երկրորդ գրքույկի տպագրությունը հետաձգվեր այլ տարում:

Եվ ահա հունիսի 29-ին՝ ժ. 20:15-ին, փակ պատըշգամբում կանգնած, երբ ընկերուհուս ձայնային հաղորդագրությամբ սրտնեղած ասում էի, որ՝ «...Վարդարանի աղոթագրույկի հետ միասին անպայման ուզում եմ բաժանել «Սուրբ Տիրամոր Երևումները աշխարհում» գրքույկը, ու չեմ ուզում, որ շատ ուշ Երկրորդ մասը տպագրվի, և քանի օր է, ասում եմ՝ Սուրբ Մայր, այնպես արա, որ գրքույկները իրար հետ բոլորին բաժանվեն...», այդ խոսքիս վրա նայեցի պատուհանին, ու հանկարծ տեսնեմ սուրբ Տիրամայրը, ամպերի վրա դիմացս կանգնած, նայում է....:

Եվ այնպիսի մեծ ուրախություն և հրճվանք զգացի այդ պահին ու անմիջապես նկարեցի, քանզի



**ՍԱ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՍ  
ՄԵԿ ԱՊԱՑՈՒՑՑ ԷՐ....:** Այդժամ հասկացա, որ  
ցանկությունս կկատարվի, և այդպես էլ եղավ,  
քանզի Տեր Հիսուս երբեք չի մերժում իր սրբասուրբ  
Մայրիկին, որ նաև մեր բոլորի Մայրն է:

Գթասրտության Օրհնյալ Մայր սուրբ, չնորհակալ  
եմ անհնարին թվացող, բայց Աստծով հնարավոր  
դարձրած Քո բոլոր օգնությունների համար, որ  
արել ես և շարունակում ես անել:

Իսկ այժմ՝ որպես հավելում, ցանկանում եմ այդ  
զորեղ զենքի՝ սուրբ Վարդարանի մասին այստեղ ևս  
կիսվել Խոսքերով մեր Տեր Հիսուսի Քրիստոսի և  
մեր սիրելի Աստվածամոր՝ ասված բոլիվիացի

վիրակիր (այսինքն՝ Քրիստոսի Վերքերը՝ ստիգմատ,  
իր վրա կրող, որ անընդհատ արյունահոսում են)  
տեսանողուհի Կատալինա Ռիվասին:

**23, Հունվարի, 1996թ.  
Սուրբ Աստվածամայրը.**

«Ի՞մ զավակներ, սուրբ Վարդարանով ավելի  
հաճախ աղոթեցեք, բայց արեք դա սիրով և նվիր-  
վածությամբ: Մի՛ արեք դա սովորության համա-  
ձայն կամ վախից: Աղոթեք սուրբ Վարդարանը՝  
Խորհրդածելով նախ և առաջ ամեն Խորհուրդի  
շուրջ, արեք դա շատ դանդաղ, որպեսզի մինչև իմ  
ականջները հասնի սիրո քաղցր շնչոցը. Թույլ  
տվեք ինձ զգալ ձեր սերը, ինչպես երեխաներինը,  
ձեր ամեն բառի մեջ: Դուք դա արեք՝ ո՛չ որպես  
ծառայողական պարտականություն և ո՛չ էլ ձեր  
եղբայրների հարմարության համար, մի՛ արեք դա  
ֆանատիկ ձայներով կամ տեսարաններ ցուցադ-  
րելով: Ամեն ինչ, ինչ որ անում եք ուրախությամբ,  
խաղաղությամբ և սիրով, խոնարհ ինքնանվիրումով  
և պարզությամբ, ինչպես երեխաներ, ընդունելի  
կլինի, ինչպես մի քաղցր և թարմացնող բալասան  
իմ վերքերին»:

**15, Հոկտեմբերի, 1996թ.  
Տեր Հիսուս Քրիստոսը.**

«Տարածեցե՞ք ձեր նվիրվածությունը, քանզի Իմ Մայրը խոստանում է, որ եթե ընտանիքից առնվազն մեկ անդամ Վարդարանի աղոթքը կրկնի ամեն օր, նա կփրկի այդ ընտանիքը։ Եվ այդ խոստումը ունի Աստվածային Սուրբ Երրորդության կնիքը»։

Աստծո մեծ Սերը, Ողորմությունն ու Օրհնությունները և Շնորհները Սուրբ Տիրամոր՝ ամենքիս պաշտպան և օգնական Մայրիկի գթառատ ձեռքերի միջով հեղվեն այս գիրքը սիրով ընթերցող յուրաքաչյուր անձի և իր ընտանիքի վրա։ Տեր Հիսուս Քրիստոս թող պահի ու պահպանի իրենից մեզ ժառանգություն թողած նոյի որդի Հաբեթի, նրա թոռ թորգոմի տուն՝ Արարատյան Թագավորություն, Թորգոմի որդի Հայկի ոստան Հայաստանն ու Հայ ժողովրդին մեր սրտաբուխ աղոթքներով և անսասան պահի Կաթողիկե Սուրբ ԷջՄիածին (Իջավ Միածին)` 301թ. իր իսկ հիմնած Առաքելական Մայր Աթոռ։

**Սիրով՝ Սոֆի Հակոբյան**

## ՀՐԱԺԱՐՈՒՄ

Հրաժարվում ենք Սատանայից և նրա ողջ խարեռթյունից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, ընթացքից, նրա չար կամքից, չար հրեշտակներից, չար սպասավորներից, չար կամարարներից և նրա ողջ չար զորությունից հրաժարվելով հրաժարվում ենք (կրկնել երեք անգամ՝ դեմքով կանգնելով դեպի արևմուտք՝ ձեռքի ափերը դեպի դուրս պարզած): Ապա շրջվել դեպի արեելք և երկրպագելով ու խաչակնքելով՝ ասել. - և փառք ենք տալիս ու երկրպագում ենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

## ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր մեր, որ երկնքում ես.  
Սուրբ թող լինի Քո անունը.  
Քո արքայությունը թող գա,  
Քո կամքը թող լինի երկրի վրա,  
ինչպես որ երկնքում է:  
Մեր հանապազօրյա հացը տու՞ր մեզ այսօր:  
Եվ թո՞ղ մեզ մեր պարտքերը,  
ինչպես և մենք ենք թողնում մեր  
պարտապաններին:  
Եվ մի՛ տար մեզ փորձության,  
այլ փրկի՛ր մեզ չարից:

**Որովհետև Քոնն է արքայությունը եվ զորությունը  
և փառքը, հավիտյանս հավիտենից. ամեն:**

## **ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՀՈԹՔ «ՀԱՅՐ ՄԵՐ», գրաբար.**

**Հա՛յր մեր, որ յերկինս ես,**

**Սուլը եղիցի անուն Քո,**

**Եկեսցէ արքայութիւն Քո,**

**Եղիցին կամք Քո՝**

**Որպէս յերկինս եւ յերկրի:**

**Զհաց մեր հանապազորդ տու՛ր մեզ այսօր,**

**Եվ թո՛ղ մեզ զպարտիս մեր,**

**Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:**

**Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,**

**Այլ փրկեա զմեզ ի չարէն:**

**Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք,**

**յաւիտեանս, յաւիտենից. ամէն:**

## **ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ**

**Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ,**

**Ծնորհներով լի, Տերը Քեզ հետ է:**

**Օրհնյալ ես Դու կանանց մեջ և**

**Օրհնյալ է Քո որովայնի Պտուղ Հիսուսը:**

**Սրբուհի՛ Մարիամ, Մա՛յր Աստծո,**

**Բարեխոսի՛ր մեղավորներիս համար,**

**Այժմ և մեր մահվան ժամին. ամեն:**

**Գրաբար.**

**ՈՂԶՈՒՑՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՄ,**

**Լի շնորհօք, Տէր ընդ Քեզ:**

**Օրհնեալ ես Դու ի կանայս,**

**Եւ օրհնեալ է Պտուղ որովայնի Քոյ Յիսուս:**

**Սրբուհի Մարիամ, Մայր Աստուծոյ,**

**Բարեխօսեա՝ վասն մեր մեղաւորացս,**

**Այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. Ամէն:**

**ՀԱՎԱՏԱՄՔ** (Նիկիական Համգանակ, 325թ.)

**Աշխարհաբար.**

«Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը՝  
երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների  
Արարչին: Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին,  
Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, Միածին,  
այսինքն՝ Հոր էությունից: Աստված՝ Աստծուց,  
Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ Աստծուց ճշմար-  
տապես ծնված և ոչ թե՝ արարված: Նույն ինքը՝ Հոր  
ընությունից, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ  
երկնքում և երկրի վրա՝ երևացող և աներևույթ: Որ  
հանում մեզ՝ մարդկանց, ու մեր փրկության համար  
իջավ երկնքից, մարմնացավ, մարդացավ, ծնվեց  
կատարելապես Սուրբ Կույս Մարիամից, որ հղացավ  
Սուրբ Հոգուց: Որով առավ մարմին, հոգի և միտք  
և այն ամենը, որ կա մարդու մեջ՝ ճշմարտապես և

ոչ կարծեցյալ, երևութական կերպով։ Զարչարվեց,  
խաչվեց, թաղվեց, երրորդ օրը Հարություն առավ,  
նորացված մարմնով բարձրացավ երկինք, նստեց  
Հոր աջ կողմում։ Գալու է նորացված Մարմնով և  
Հոր փառքով՝ դատելու ողջերին և մահացածներին։  
Որի Թագավորությունը չունի վախճան։

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղին և  
կատարյալին, Ով խոսեց Օրենքներում, մարդարե-  
ների և ավետարանների մեջ, Որ իջավ Հորդանանի  
վրա, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց  
սրբերի մեջ։

Հավատում ենք նաև միայն Մեկ, Ընդհանրական  
և Առաքելական սուրբ Եկեղեցու, մեկ մկրտության,  
ապաշխարության, մեղքերի քավության և թողու-  
թյան, մեռելների հարության, հոգիների և մարմին-  
ների հավիտենական Դատաստանին, երկնքի  
Արքայությանը և Հավիտենական Կյանքին»։ Ամեն։

**ՀԱՎԱՏԱՄՔ** (Նիկիական Համգանակ, 325թ.)

Գրաբար.

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ՝  
յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ ան-  
երեւութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝  
ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին՝ այսինքն յէու-

**թենէ Հօր:** Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ,  
Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ  
ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով  
ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի,  
երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան  
եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝  
մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի  
Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ  
զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի  
մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Զարչարեալ,  
խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ  
ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:  
Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել  
զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն  
ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի  
կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ  
յաւետարանս: Որ էջն ի Հորդանան, քարոզեաց  
յառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ  
յառաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն,  
յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն  
մեղաց, ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն  
յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն  
երկնից եւ ի կեանսն յաւիտենականս: Ամեն»:

# ԶՂՋՈՒՄ ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեղա՛ Ամենասուրբ Երրորդությանը՝ ՀՈՐԸ և  
ՈՐԴՈՒՆ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ, մեղանչել եմ Աստծո  
առաջ.

Խոստովանում եմ Աստծո առաջ և Սրբուհի  
Աստվածածնի և քո առաջ, հա՛յր սուրբ, բոլոր  
գործած մեղքերս: Քանզի մեղանչեցի խորհրդով,  
խոսքով և գործով, կամա և ակամա, գիտակցաբար  
և անգիտակցաբար. մեղա՛ Աստծո (մեղք գործեցի  
Աստծո դեմ):

Մեղանչեցի հոգովս և նրա զորությամբ, մտքովս  
և նրա շարժմամբ, մարմնովս և նրա զգայարան-  
ներով:

Մեղանչեցի հոգուս զորությամբ. խորամանկ-  
ությամբ, անզգամությամբ, հանդգնությամբ և  
երկչոտությամբ, շռայլությամբ և ժլատությամբ,  
զեխությամբ և անիրավությամբ, չարահավանու-  
թյամբ, հուսահատությամբ և թերամտությամբ.  
մեղա՛ Աստծո:

Մեղանչեցի մտքիս չար խորհուրդներով. նեն-  
գությամբ, ատելությամբ, խեթ հայացքով, չար  
նախանձով, չարակամությամբ, թուլությամբ, պոռ-  
նկական խորհրդով՝ արվամոլական, իգամոլական,  
անասնական, գրաստական, գաղանական, գիշերն ու

**ցերեկը երազական ցանկասիրությամբ և անրջական գարշելի աղտեղությամբ. մեղա՛ Աստծո:**

**Մեղանչեցի մարմնիս ցանկությամբ. հեշտասիրությամբ, պարապասիրությամբ, քնկոտ հորանջմամբ, մարմնիս շարժումներով և պես-պես ախտերով պղծագործելով, չարին ականջալուր լինելով, աչքերիս արատասիրությամբ, սրտիս ցանկությամբ, ոնդերիս մեղկությամբ, բերանիս անպարկեշտությամբ, անժուժկալությամբ, շվայտությամբ և հարբեցողությամբ. մեղա՛ Աստծո:**

**Մեղանչեցի լեզվիս չարախոսությամբ. ստախոսությամբ, սուտ երդումով, երդում դրժելով, հակաճառությամբ, վիճաբանությամբ, բանսարկությամբ, շողոքորթությամբ, խոսք տանել-բերելով, դատարկաբանությամբ և ծաղրելով, զրապարտելով, մոլորեցնելով, հերձվածախոսությամբ և անիծելով, տրտնջալով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով. մեղա՛ Աստծո:**

**Մեղանչեցի ձեռքերիս գողությամբ, ագահությամբ, զրկելով, հարվածելով, սպանելով և քաշքշելով. մեղա՛ Աստծո:**

**Մեղանչեցի շինվածքիս ողջ կազմությամբ և մարմնիս բոլոր անդամներով, հինգ զգայարաններովս և վեցյակ շարժումներով՝ մեծամտությամբ. ոտնահարելով, ստորաքարշությամբ, աջ և ձախ**

**խոտորվելով, առաջինների հանդեպ մեղանչելով և մյուսներին չար օրինակ լինելով. մեղա՛ Աստծո:**

**Այլև մեղանչեցի յոթ հանցանքների մահացու մեղքերով. Հպարտությամբ և նրա տեսակներով, նախանձով և նրա տեսակներով, բարկությամբ և նրա տեսակներով, ծուլությամբ և նրա տեսակներով, աղահությամբ և նրա տեսակներով, որկըամոլությամբ և նրա տեսակներով, պղծախոհությամբ և նրա տեսակներով. մեղա՛ Աստծո:**

**Այլև մեղանչեցի Աստծո բոլոր Պատվիրանների՝ հանձնառելիների և հրաժարելիների դեմ, քանզի ոչ հանձնառելիները կատարեցի, ոչ էլ հրաժարելիներից հեռացա: Օրենքը ստացա, բայց օրինապահության մեջ զլացա, հրավիրվեցի քրիստոնեության կարգի մեջ և գործերովս անարժան գտնվեցի, չարը գիտենալով՝ կամովին շեղվեցի և բարի գործերից ես ինքս հեռացա. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ. ո՞րն ասեմ կամ ո՞րը խոստովանեմ, քանզի արթիվ են իմ հանցանքները, անասելի են իմ անօրենությունները, աններելի են իմ ցավերը և անբժշկելի են իմ վերքերը. մեղա՛ Աստծո:**

**Հա՛յր սուրբ, դու ես իմ՝ Աստծու Միածին Որդու հետ հաշտության միջնորդն ու բարեխոսը: Քեզ տրված իշխանությամբ արձակի՛ր իմ մեղքերի կապանքները. աղաչու՛մ եմ քեզ:**

## ԱՊՈԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Տե՛ր, այս բոլոր տարիներին  
Դու հանդուրժել ես ինձ  
իմ մեղքերով հանդերձ,  
Բայց Դու նաև ողորմած ես եղել իմ հանդեպ.  
Ես մոլորվել էի բոլոր ճանապարհներին,  
Բայց այլևս չեմ ուզում մեղք գործել:  
Ես ուղիղ չեմ ընթացել Քո առաջ  
և անարդարացի եմ եղել,  
Այլևս այդպիսին չեմ լինի:  
Ես հրաժարվում եմ մեղքից,  
Հրաժարվում եմ Սատանայից,  
Հրաժարվում եմ անօրենությունից,  
որ ապականում են հոգիս:  
Ազատի՛ր հոգիս այն ամենից,  
ինչ դեմ է Քո սրբությանը:  
Աղաչու՛մ եմ Քեզ, Տե՛ր,  
Փրկի՛ր ինձ չարից:  
Ե՛կ այժմ, Հիսու՛ս,  
Ե՛կ և բնակվիր իմ սրտում:  
Ների՛ր ինձ, Տե՛ր,  
և թույլ տուր իմ հանգիստը գտնել Քո մեջ,  
Քանզի Դու իմ Վահանն ես,  
իմ Փրկիչն ու իմ Լույսը,

և ես վատահում եմ Քեզ։  
Այսօրվանից, Տե՛ր,  
Ես անդադար կօրհնեմ Քեզ։  
Ես մերժում եմ չարը  
և բոլոր այլ աստվածներին ու կուռքերին,  
Քանի որ Դու ես Բարձրյալլ ողջ աշխարհում՝  
Անհամեմատ գերազանց  
բոլոր մյուս «աստվածներից»։  
Քո Հզոր Զեռքով փկի՛ր ինձ հիվանդությունից,  
Փրկի՛ր ինձ անհանգստությունից  
և պարտության մատնիր դեմ՝ իմ թշնամուն։  
Շտապի՛ր, ե՛կ և օգնիր ինձ,  
Ով իմ Փրկիչ։ Ամեն։

### «ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» աղոթաշարից (ԺԴ)

Խնամո՛ղ արարածների, պահի՛ր Քո Խաչի նշանով  
իմ հոգին և մարմինը մեղքերի պատրանքներից,  
դերերի փորձություններից, անիրավ մարդկանցից և  
հոգու և մարմնի բոլոր վտանգներից. և ողորմի՛ր  
Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս։

### ԺԵ (15)

Պահապան ամենայնի Քրիստոս,  
Քո Աջը թող հովանի լինի ինձ վրա  
ցերեկ և գիշեր, տանը նստելիս,  
ճանապարհ գնալիս, ննջելիս և արթնանալիս,

որպեսզի երբեք չսասանվեմ.

և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

### ԻԳ (23)

Ամենողորմ Տեր, ողորմի՛ր բոլոր  
Քեզ հավատացողներին, յուրայիններիս  
և օտարներին, ծանոթներին և անծանոթներին,  
ողջերին և մեռյալներին, թողություն շնորհիր  
նաև թշնամիներիս և ատողներին  
իմ դեմ գործած հանցանքների համար  
և հետ դարձրու նրանց չարիքից,  
որ ունեն իմ դեմ, որպեսզի արժանի  
լինեն ողորմությանդ. և ողորմի՛ր Քո  
արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

(Սուրբ Ներսես Շնորհալի)

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՐԴԱՐԱԵ



Սուրբ Աստվածամորը նվիր-  
ված ջերմեռանդական այս  
աղոթքը Սուրբ Ծննդյանը  
պատրաստվելու Վարդարանն  
է և պետք է կատարվի մինչև  
Քրիստոսի Սուրբ Ծննդյան  
Օրը: Աղոթքը սկսվում է նոյեմ-  
բերի 29-ից մինչև դեկտեմբերի  
23-ը ներառյալ, եթե Սուրբ

**Ծնունդը հիշատակվում է դեկտեմբերի 25-ին:** Կամ՝ դեկտեմբերի 11-ից մինչև հունվարի 4-ը ներառյալ, եթե Սուրբ Ծնունդը հիշատակվում է հունվարի 6-ին: Սուրբ Ծննդյանը պատրաստվելու Վարդարանը 1000 «Ողջույն...» է պարունակում: Սկսում ենք աղոթքը՝ Սուրբ Ծննդյան Վարդարանը. Խաչը բռնած՝ ասել. «Հավատամք»՝ ը: Այնուհետև, 1 «Հայր մեր», 3 «Ողջույն Քեզ, Մարիամ» և 1 «Փա՛ռք Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և հավիտեանս հավիտենից. ամեն...», և սկսում տասնյակը:

1. *Oրհնյա՛լ է ժամն այն, ո՞վ սուրբ Կույս Մարիամ, Որում դարձար Մայր Աստծո:*

Ապա 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջույն Քեզ, Մարիամ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

2. *Oրհնյա՛լ է ժամն այն, ո՞վ սուրբ Կույս Մարիամ, Որում ճնեցիր Որդին Աստծո:*

Ապա 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջույն Քեզ, Մարիամ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

3. *Oրհնյա՛լ է ժամն այն, ո՞վ սուրբ Կույս Մարիամ, Որ տվիր առաջին համբույրը Որդւոյն Աստուծոյ:*

Ապա 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջույն Քեզ, Մարիամ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:

4. *Oրհնյա՛լ է առաջին շիթը կաթիդ, ո՞վ սուրբ Կույս Մարիամ, Որ կրծքիցդ սնեցավ Որդին Աստծո:*

**Ապա 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ,  
Մարիամ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:**

**5. Օրհնյա՛լ է ժամն այն, ո՞վ սուրբ Կույս Մարիամ,  
Երբ առաջին անգամ լսեցիր «Մայր» բառը  
շրթներեն Որդւոյն Աստծո:**

**Ապա 1 «Հայր մեր...», հետո՝ 10 «Ողջու՛յն Քեզ,  
Մարիամ...» և 1 «Փա՛ռք Հոր...»:**

**Դեկտեմբերի 23-ին կամ հունվարի 4-ին,  
Վարդարանի 1000 «Ողջույններով» աղոթքը ավար-  
տելուց հետո ասել.**

**«Ո՛վ Հզոր Թագուհի Հրեշտակների,  
Սրբուհի և Մայր Քրիստոսի, գթած և ողորմած  
Տիրուհի, մենք՝ Քո անարժան որդեգիրներս,  
Խոնարհվելով Քո ամենասուրբ ոտքերի առաջ՝  
Աղաչում ենք Քեզ, ընդունիր մեզանից՝  
Քո տառապյալ և մեղավոր ծառաներից,  
Քո Սուրբ Վարդարանի Ուրախության հինգ խոր-  
հուրդները, որ անարժանապես մատուցեցինք Քո  
մեծավայելչությանը:**

**Եվ այժմ, աղաչու՛մ ենք Քեզ, Տիրամայր և Կույս,  
1000 «Ողջույններ»-ի փոխարեն, Քո Նորածին  
Որդուց Շնորհներ ընդունիր և տուր մեզ, որպեսզի  
մեր կյանքում ամբողջ սրտով զղջանք  
Եվ մահվան ժամին անվտանգ հասնենք  
Հավիտենական կյանքին: Ամեն:**

## ՕՐՈՐ

Սուլրբ գիշեր է լուռ, Բեթղեհեմում,  
Քնած են արդեն բոլորը վաղուց,  
Արթուն է միայն Ընտանիքը Սուլրբ.  
Ծնվել է մի հրաշք Մանուկ,  
Անումը Նրա դրած էր Հիսուս:  
Ու հիմա Մայրը օրոր է ասում.  
«Օրո՛ր, օրո՛ր, Որդի՛ս,  
Օրո՛ր, քնի՛ր, Որդի՛ս»:

## ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ՕՐՈՐՈՅԱՅԻՆԸ

Սուլրբ Կույսը երգել է այս օրորոցայինը, երբ Տեր  
Հիսուսը եղել է մոտ 6-8 ամսական փոքրիկ՝ Բեթ-  
ղեհեմյան տանը: Առավոտյան երանելի Մարիա  
Վալտորտան լսել է Աստվածամոր քաղցրահնչյուն  
երգը: Սա այդ Օրորոցայինի վերջին հատվածն է:  
«...Ես հավետ կմնամ Քեզ հետ,  
Դու հարազատ դարձար իմ հոգուն,  
Ինչպես ծաղիկը բնության գրկում,  
Որ արմատավորվել է հողի մեջ, Որդի՛ս:  
Նա քնեց. մի՛ արթնացրեք Նրան,  
Գուցե նա տեսնի իր Հորը,  
Ում Սերը չորացնում է ցողը Քո աչքերից:  
Թանկագին իմ Հիսուս, քնի՛ր, քնի՛ր, քնի՛ր,  
Հանգստացի՛ր և նանիկ արա...»:

# ՅԱՎԱԳԻՆ ՏԵՐԱՄՈՐ ՅՈԹ ՎԵՐՋԵՐԻ ՎԱՐԴԱՐԱՆԸ



Յավագին Տիրամոր բարեպաշտությունը տարածվելով աշխարհում՝ Սուրբ Մարիամի Յոթ Վերքերի հիման վրա սկսվում է Յոթ Խոցերի Վարդարանի աղոթքը:

Յավագին Տիրամորը նվիրված Վարդարանը սովորական՝ հինգ տասնյակի փոխարեն, կազմված է յոթ յոթնյակից: Աղոթքը սկսվում է զղ-

ման ներգործությամբ, ապա արտասանում են 1 անգամ «Հայր մեր»-ը և 7 անգամ «Ողջույն Քեզ, Մարիամ»-ը՝ ի հիշատակ Տիրամոր արցունքների, և 1 «Փա՛ռք Հոր...»: Ապա յուրաքանչյուր յոթնյակ աղոթելիս՝ խորհրդածում են համապատասխան Վերքի շուրջ: Յոթնյակներն իրարից բաժանվում են մեղալներով, որոնց վրա պատկերված են սուրբ Մարիամի Վերքերը:

**Վարդարանը սկսում ենք նույն կերպ.**

Խաչը բռնած՝ ասել. «Հավատամք»-ը,  
Այնուհետև, ըստ հատիկների քանակի, 1 «Հայր  
մեր», 3 «Ողջույն Քեզ, Մարիամ» և 1 «Փա՛ռք  
Հոր...» և սկսում ենք ասել վերք-խորհուրդն ու  
յոթնյակը:

## Սուրբ Մարիամի Յոթ Վերքերը

1. Սիմեոն ծերունու վկայությունը այն մասին, որ  
Մարիամի Սիրտը կխոցվի սրով:
2. Սուրբ Ընտանիքի Եգիպտոս փախչելը
3. Հիսուսի՝ երեք օրով կորչելը
4. Հիսուսի դատապարտությունը
5. Խաչի մոտ Տիրամոր ուշաթափելը
6. Հիսուսի՝ Հոգին  
ավանդելը
7. Հիսուսի թաղումը



Վ ա ր դ ա ր ա ն ն  
ավարտում են՝ 3  
անգամ Տիրամորն  
աղաչելով.

«Ո՞վ Ցավագին Սուրբ  
Կույս, բարեխոսի՛ր  
մեզ համար»:

## «ԱՐՅՈՒՆԱԼԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐՈՎ» ԱՂՈԹՔԸ



Այս վարդարանի  
տեսակը նույնպես  
յոթ յոթնյակով է  
կատարվում: Մեր  
ս ի ր ե լ ի  
Աստվածամոր  
բառերը.

«Աղոթեցե՛ք  
«Ա ը յ ո ւ ն ա լ ի  
Ա ր ց ունքներով»  
աղոթքը, տարածեք  
այն. Սատանան կոր-  
չում է այստեղ, որ-

տեղ աղոթում են այդ աղոթքը»:

**Սկզբում ասում ենք.**

**Խաչյա՛լ Հիսուս,** ծնկի գալով Քո ոտքերի առջև՝  
զոհաբերում ենք Քեզ Սուրբ Մորդ Արյունալի  
Արցունքները, որ անկեղծ, ցավալի սիրով ուղեկցում  
էին Քեզ Քո բազմաչարչար Խաչի ճանապարհին:

**Օ՛, Բարի՛ Ուսուցիչ,**

Տո՛ւր, որ մենք մեր սրտերին մոտ ընդունենք այն  
դասը, որ տալիս են մեզ Քո Ամենասուրբ Սոր  
Արյունալի Արցունքները,

Եվ երկրի վրա այդպես կատարենք Քո սուրբ Կամքը, որ արժանի լինենք երկնքում փառաբանել և գովաբանել Քեզ հավիտյանս հավիտենից. Ամեն: Այսուհետև սկսում ենք յոթնյակը.

«Հայր մեր»-ի փոխարեն՝ **1** անգամ աղոթում ենք. «Ո՞վ Հիսուս, նայիր Նրա Արյունալի Արցունքներին, Ով երկրի վրա Քեզ ամենից շատ է սիրել և ամենից անկեղծ է սիրում Քեզ երկնքում»:  
Ապա «Ողջո՛ւյն Քեզ, Մարիամ» - ի փոխարեն՝ **7** անգամ աղոթում ենք.

«Ո՞վ Հիսուս, լսիր մեր աղաչանքները՝ Հանուն Քո Ամենասուրբ Մոր Արյունալի Արցունքների»:  
Վերջում նորից **3** անգամ աղոթում ենք.  
«Ո՞վ Հիսուս, նայիր Նրա Արյունալի Արցունքներին, Ով երկրի վրա Քեզ ամենից շատ է սիրել և ամենից անկեղծ է սիրում Քեզ երկնքում»:  
Որից հետո **1** անգամ աղոթում ենք.

«Ո՞վ Մարիամ,  
Սիրո, տառապանքի և գթության Մայր,  
Աղաչում ենք Քեզ՝ միացրու՝ Քո Աղոթքները  
մեր աղոթքներին, որպեսզի  
Հիսուսը՝ Քո Աստվածային Որդին,  
Ում որ մենք դիմում ենք,  
լսի մեր աղաչանքները՝ հանուն Քո Մայրական

**Արյունալի Արցունքների, ու Երանության հետ, որը  
որ մենք խնդրում ենք, պարզեի մեզ Հավիտենական  
Կյանքի Պսակը»: Ամեն:**

**«Քո Արյունալի Արցունքները, ո՞վ Վշտալի Մայր,  
Կործանում են Դժոխքի տիրապետությունը.**

**Քո Աստվածային Խոնարհության միջոցով,  
Ո՞վ Խաչյալ Հիսուս,  
Պահպանիր ամբողջ աշխարհը՝  
Նրան սպառնացող մոլորությունից». ամեն:**

## **ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ԵՐԵՎՈՒՄՆԵՐԸ ԱՃԽԱՐՀՈՒՄ**

### **ՆԱՐԵԿԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ**

**(10-րդ դար, Հայաստան)**



Հայոց պարծանք Սուրբ Գրիգոր Նարեկացու տաղերն ու աղոթքներն առ Տիրամայր լայն ճանաչում ունեն ամբողջ աշխարհում։ Սուրբ Տիրամայրն այդ համեստ, խոնարհ և հրաշագործ վանականին շնորհում է իրեն տեսնելու պարգև։

Մեծ սուրբը ծնվել է 944թ. մայիսի 26-ին (Ս. Ղ.) Վասպուրականի Անձևացյաց գավառում։ Նա Խոսրով Անձևացի եպիսկոպոսի որդին էր։ Սկզբում երկու եղբայրների՝ Սահակի և Հովհաննեսի հետ դաստիարակվում է հոր մոտ, ապա ընտրելով վանականությունը, մոր հորեղբոր՝ փիլիսոփա Անանիա Նարեկացու մոտ՝ Նարեկա վանքում։ Նարեկ գյուղը գտնվում էր Վանա լճից մեկ ժամ հեռավորության վրա, ցածր բլրակի գագաթին։ Այդտեղ՝ ապառաժի վրա կառուցվել է մինչև օրս կանգուն մենաստանը, որտեղ ապրել է Գրիգոր Նարեկացին։

Հրաշագեղ տաճարը բաժանվում է երեք մասի. կենտրոնական մասը չորս քառակուսի սյուներով սահմանագատված Սուրբ Աստվածածին եկեղեցին է։ Աջ կողմում, առանց սյուների, սրբուհի Սանդուխտի մատուռն է, որից դեպի աջ և ներքե, սրբի անունով մատուռն ու գերեզմանն է։ Զախից՝ աջ կողմի նման դարձյալ Սուրբ Աստվածածի մատուռն է։ Եկեղեցու մուտքի մոտ Անանիա Նարեկացու գերեզմանն է, իսկ տաճարի մուտքի մոտ՝

**Եղբոր՝ Հովհաննեսի գերեզմանը:**

Վանքից դեպի հյուսիս, մեկ ժամ հեռավորության  
վրա գտնվող բարձր քարաժայուղ դարեր անց  
հայտնի է՝ որպես Գրիգոր Նարեկացու ճգնարան ու  
աղոթատեղի:

Ապառաժը ծակոտկեն քարից էր և բազմաթիվ  
տեղերում բնական փոքր քարայրներ ուներ, բայց  
զարմանալին այնտեղ, չգիտես երբ, հանքագործների  
կառուցած քարայրներն են: Սակայն հայտնի է, որ  
մինչև Գրիգոր Նարեկացին այնտեղ ուրիշներն էլ են  
աղոթել: Շինությունը երկհարկանի է, որ ունի ինը  
սենյակ: Բոլորը ծովահայաց պատուհանածե բաց-  
վածքներ ունեն: Վերնահարկի սենյակները, որ նույն-  
պես իրար մեջ են բացվում, նրանցից մեկը մատուռն  
էր՝ քարեղեն սեղանով, որտեղ, ասում են, պա-  
տարագում էր Սուրբը:

Մի առավոտ, երբ նա այնտեղ աղոթում էր՝ աչքը  
ծիծաղախիտ Վանա ծովին, Առտեր կղզու կողմը,  
նշմարում է լճի վրա ցոլացող երկու տարօրինակ՝  
փայլականման արեգակնային ճառագայթներ: Շտապ  
վազում է այդ կողմը: Երկու ժամ հեռավորության  
վրա գտնվող ծովն անցնում է սլացքով, ինչպես  
ցամաքով: Հասնելով այնտեղ՝ տեսնում է Ամեն-  
օրհնյալ և միշտ կույս Աստվածածնին՝ Մանուկ  
Հիսուսը գրկին: Նուան նման այտեր ուներ, սրտից


սաթի նման սեր էր ծորում, բերանը երկթերթ էր՝ շուրջերից վարդ էր կաթում, ձայնը քաղցրահունչ տավղի երգ էր, գանգրահեր հյուսված ծամը թափ-վում էր ուսից: Լուսափայլ՝ կարմիր վարդերով և մանուշակներով լի ծոցից աստվածային կրակով վառված անուշահոտ խունկ էր բուրում: Պատ-մուճանը կապույտ էր, գոտին՝ արծաթափայլ՝ թան-կագին քարերի հորինվածով պճնված և ոսկեգույն ծոպերով էր: Քայլելիս՝ շարժվում էր մարդար-տափայլ գեղեցկությամբ, ոտքերից շողեր էին կա-թում: Երկնավոր Մայրը՝ իրեն թագադրող նորածին Փրկչին՝ Աստվածորդուն, իր գրկից պարզելով Գրիգորին, ասում է. «ԱՌ ԿՏԵՐ ՔՈ» («Վերցրո՛ւ քո Տիրոջը»):

Այս սքանչելի տեսիլքի մասին Գրիգոր Նարեկացին պատմում է իր «Աչքն ծով ի ծով» գրությունում: Ներշնչված, Սուրբ Հոգով լցված՝ նա գրել է հրաշալի աղոթագիրքը՝ «Մատյան ողբեր-գության», որն ավարտել է 1002թ. մահից մեկ տարի առաջ: Սուրբ Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003թ. և թաղվել Նարեկա վանքում, որը նախկի-նում կոչվել է սուրբ Մանղուխտի՝ առաջին նա-հատակ կույսի անունով:



**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ.** Հավելենք, որ 2015թ.-ին Հռոմի Կաթողիկե (Հռոմարեն «կատահոլոն») եզրից է, որ նշանակում է «ըստ ամենայնի», ըստ ընդհանուրի, Փրանսերեն հայտնի ձևով՝ Կաթոլիկ) Եկեղեցին՝ գլխավորությամբ Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, Հայոց Եղեռնի 100-ամյակին սրբադասեց մեր սուրբ Գրիգոր Նարեկացուն՝ որպես ՅԵ-ՐԴ Տիեզերական վարդապետ՝ գերազանց դոկտրինա համարելով Աստծո Սուրբ Հոգով գրված նրա **«Մատյան ողբերգության»** աշխատությունը, որը համարվում է վերծանված Աստվածաշունչ և դարերով համարվել է ամենահին հոգեբուժական ձեռնարկը, քանզի ամբողջովին ապաշխարություն է, որի չնորհիվ էլ բժկվում է և՛ Հոգին, և՛ մարմինը: Բայց սրբադասման իրավական հիմքը այս էր.

**27 տարի առաջ... ԿՆՔՎԵՑ ՀՐՁԱԿԱԳԻՐ, ՈՐՈՎՎԵՐԶ ԴՐՎԵՑ ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ 1500 ՏԱՐՎԱ ՊԱՌԱԿՏՄԱՆԸ**



Գարեգին Ա. Վեհափառը աննախաղեալ հարդանք էր վայելում միջեկեղեցական և միջազգային հարթակում: 1996թ.-ի դեկտեմբերի 13-ին Հայ Առաքելական Եկեղեցու և Հռոմի Կաթողիկե (Կաթոլիկ) Եկեղեցու առաջնորդներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի և սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի կողմից ստորագրվեց առ Աստված ու Հիսուս Քրիստոս ընդհանուր հավատքի մասին համատեղ հոչակագիրը, որով վերջ դրվեց Երկու Եկեղեցիների 1500 տարվա պառակտմանը: Փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարության շրջանակներում Հռոմի Պապն այցելեց Հայաստան:

Երկու Եկեղեցիների միջև փոխադարձ շփումներն աշխուժացան նաև հետագայում: Վատիկանում Հայոց ցեղասպանությանը նվիրված Պատարագի, Սուրբ Գրիգոր Նարեկացուն Կաթոլիկ Եկեղեցու բարձրագույն՝ Տիեզերական Եկեղեցու 36-րդ վարդապետի (դոկտորի) կոչմանն արժանացնելու և Հռոմի Ֆրանցիսկոս Պապի Հայաստան այցելությանն անդրադառնալիս՝ միջազգային մամուլը հաճախ էր հիշատակում երջանկահիշատակ Երկու Հովհապետերի մտերմությունն ու նշված հոչակագիրը՝ դրան վերագրելով Երկու Եկեղեցիների հարա-

**բերությունների սերտացման հիմնայունը:**

Հոչակագրից մեջբերվում էին հատվածներ, որտեղ խոսվում էր առ Աստված ու Քրիստոս երկու Եկեղեցիների ընդհանուր հավատքի մասին, ափսոսանք հայտնվում նախկինում փոխադարձ թյուրըմբոնումների վերաբերյալ և շեշտվում, որ քրիստոսաբանական լեզվախոսական տարբերությունները չպետք է պատճառ հանդիսանան երկու Եկեղեցիների բաժանման համար։ Հենց այդ հոչակագիրն էր իրավական առումով հնարավոր դարձրել հայ սրբին Վատիկանի երևելիների հետ նույն շարքում դասելը և երկու Եկեղեցիների հարաբերությունների հետագա սերտացումը։

Իսկ 2018թ. օգոստոսի 16-ի իր «Լույսի Կաթիլներ» Պատգամների գրքում **Տեր Հիսուս Քրիստոս փաստեց**, որ «Մատյան Ողբերգության»-ը իր զարդանախշված Խոսքերն են. (2019թ. Հայ Առաքելական Եկեղեցու Սուրբ Խորհուրդը՝ իր նվիրական նախաձեռնությամբ, միասնական ընդհանության առաքելությամբ կողմ եղավ Հայաստանում Հիսուս Քրիստոսից Սուսաննա Ղարիբյանին թելադրված Պատգամներին)։

«Զեր կյանքի ամեն մի վայրկյանը ինձ նվիրեք և փոխարենը, ինձանից ավելին կստանաք, ավելին կունենաք, ավելին կամբարեք, որ ոչ ոք չկարողանա

իր մեջ եղած չարությունը, նախանձը, վիրավորանքը, ատելությունը ձեզ հասցնել, քանզի ինձանով ձեռք բերվածը, ձեզանում եղած սրտի և հոգու անարատ բաժինը երբեք չի կարող խառնվել, երբեք չի կարող միավորվել չարից եկող այն կեղծիքին, որ զուտ հյուսվել է մեղքի և սատանայական գրավիչ սարդոստայնում։ Դուք ականատես եղեք աշխարհում տեղի ունեցող այն գործողություններին և ձեր մեջ եղած օրենքների գործող առաջադիմությանը. Դուք հոգևոր աշխարհի թանկ Գանձերը չեք կարող դնել աշխարհում եղած գանձերի կողքին, դուք իմ Խոսքերը չեք կարող համեմատել աշխարհում գործող խոսելաձեին, այլ վերցրեք **Իմ պաշտպանիչ Վահանը՝ Իմ Ողորմությունը, Զորությունը և Ուժը,** որոնք մեծ բացատրությամբ դեմ դուրս կդան աշխարհին՝ ձեզ ցույց տալով փրկության ճամփան։

Այս օրվա **Պատգամը սիրով չնորհում** է ձեզ այնպիսի գաղափար, որ **«ՄԱՏԹԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ»** ամեն Խոսքով դուք ևս միավորվեք և ինձ հասցնեք ձեր սրտի անկեղծությունը, սրբությունը և **ԶԱՐԴԱՆԱԽՇՎԱԾ ԻՄ ԽՈՍՔԵՐԸ** ձեզանում ամենաթանկ զարդերը դարձնեք՝ հոգին և մարմինը զարդանախշելու։

**(Հիսուս Քրիստոս)**

**16, Օգոստոսի, 2018թ. «Լույսի Կաթիլներ»:** (Ա. Ղ.)

# ԿԱՐՄԵՂՈՍ ԼԵՌԱ ՏԻՐԱՄԱՅՐԸ

(12-րդ դար, Էլգֆորդ, Անգլիա)



Կարմեղոս (Կարմել, Կարմելոս, Կարմեղոս)  
Նազարեթից 32 կմ հեռավորության վրա, Սամարիայի և Գալիլեյի սահմանին գտնվող լեռ է:  
Անունը եբրայական ծագում ունի և նշանակում է  
այգի, խաղողի այգի՝ Քրիստոսի որթատունկ:

Շրջակայքը հայտնի էր իր գեղեցկությամբ և փարթամ բուսականությամբ, որի հետևանքով հին ժամանակներից համարվում էր Աստծո շնորհի և օրհնության փաստը: Այդ լեռան վրա, եղիա մարդարենքի միջոցով, Քրիստոսից ինը դար առաջ Աստված նորոգում է իր Ուխտը Խորայելի ժողովրդի հետ: Խաչակիրների հետ, 1100 թվականի վերջին, Կարմեղոս լեռան վրա սկսվում է հայեցող վանականների՝ Կարմեղոս լեռան Սուրբ Կույս Մարիամի եղբայրների հոգևոր կյանքը, այսինքն՝ Խաչակիրները եղել են առաջին կարմեղականները: Խաչակիրների արշավանքից հետո այս միաբանությունը դառնում է մուրացիկ, և անդամներից շատերը վերադառնում են Արևմուտք՝ իրենց հոգում պահելով Սուրբ Կույսի հատուկ ջերմեռանդությունն ու սերը:

Սայմն Ստոկը, խաչակիրների արշավանքների ժամանակ ուխտագնացության մեկնող մի խումբ ճգնավորների հետ այցելելով Ավետյաց Երկիր, դառնում է Կարմեղոս լեռան Տիրամոր՝ Կարմեղականների միաբանության անդամ:

Երբ սարացենների հալածանքը սպառնում է քրիստոնյաներին, եղբայր Ստոկը վերադառնում է Անգլիա և հաստատվում էլզֆորդում:

Այդ շրջանում աննկարագրելի դժվարություններ

Էին բաժին ընկել մուրացիկ միաբանություններին ու նրանց անդամներին:

1251թ. հուլիսի 16-ին, հուսալքված եղբայր Ստոկն աղոթում է Տիրամորը՝ խնդրելով Նրա օգնությունը, երբ հանկարծ, հրեշտակներով շրջապատված, երկնքի թագուհին երևում է նրան ու հանձնում կարմեղականների կրկնուրարը (կրկնուրարը պատմության մեջ վանականների և հոգևորականների զգեստի արտաքին մասն է) և տալիս է հետեւյալ պատգամը. «Միրելի՛ որդիս, ընդունի՛ր այս կըրկնուրարը քո միաբանության համար: Սա հատուկ Շնորհ է, որ ստացել եմ քո և Աստծո բոլոր այն որդիների համար, ովքեր հարգում են Կարմեղոս լեռան Տիրամորը: Բոլոր նրանք, ովքեր այն հավատարմությամբ կրելով կմահանան, կպաշտպանվեն հավիտենական կրակից»:

Այս երևումից հետո եղբայր Ստոկը հիմնում է Կարմեղականների միաբանության նոր կենտրոններ Անգլիայում (հիմնականում համալսարանական թաղամասերում), Ֆրանսիայում և Իտալիայում: Երկար ժամանակ զբաղեցնում է միաբանության ընդհանուր մեծավորի պաշտոնը:

Մինչև օրս **կրկնուրարը** օգտագործվում է՝ որպես **Տիրամեռանդության խորհրդանշան:** **Կրկնուրարը** **Տիրամոր** զգեստի կտորն է: **Սուրբ գրու-**

Թյուններում զգեստը խորհրդանշում է ծածկույթը՝ մեղքի ամոթից կամ ներելու նշան է, ինչպես Անառակ որդու առակում: Հայտնության գրքում Սբ. Հովհաննեսը մեզ մատնանշում է ահեղ Դատաստանի ժամանակ սպիտակ զգեստով Գառան դիմաց կանգնած ժողովրդին: Սուրբ Պողոսն իր նամակներում մեզ ցույց է տալիս Քրիստոսի զինվորի զգեստը՝ ողջախոհության գոտին, արդարության զրահը, հավատի վահանը և փրկության սաղավարտը:

Գորշ կրկնուրարը փրկության խորհրդանշական զգեստ է, հոգեսոր զրահ, վահան, անմեղության պատմուճան, գրավական խաղաղության և հատուկ պաշտպանություն մինչև ժամանակների վերջը, որ մեզ Աստվածամայրն է տալիս: Զգեստը նշան է պատկանելության նրան, Ով մեզ տալիս է այն: Մի խոսքով, կրկնուրար կրելով՝ կամովին նվիրվում և պատկանում ենք Երկնավոր Մորը, և նա իր հերթին խոստանում է փրկել նրան, ով այն հավատարմորեն կրում է՝ հատկապես մահվան ժամին:

Հարկ է նշել, որ կրկնուրար կրելը ոչ թե ավելորդություն է, այլ Աստծո Շնորհ՝ վստահության խորհըրդանիշ. միաժամանակ, մեղք գործելով և կրկնուրար կրելով, չենք կարող փրկվել դժոխքի կրակից: Դա հակասություն է և դեմ Տիրամոր հանդեպ բարեպաշտության. ինչ խոսք, այլևս արժանի չենք լինի

Նրա շնորհներին: Անկասկած, երկնավոր Մայրը աստիճանաբար մեզ կտանի դարձի ճանապարհով և մեզ կշնորհի մահից առաջ մեղքերի թողություն ստանալու պարզեց կամ վերջին օծումը:

Տիրամայրը խոստանում է.

ա. Փրկություն հավիտենական կրակից,

բ. Ազատում քավարանից,

գ. Պաշտպանություն մարմնի և հոգու դեմ վտանգներից:

Կրկնուրար կրելու մի քանի գործնական խորհուրդներ. Կրկնուրարը կրում են ուսերին: Այն պետք է օրհնված լինի հոգեսորականի կողմից: Այն կազմված է երկու քառակուսի կամ ուղղանկյունաձև բրդե սրճագույն կտորներից, որոնք միանում են կապերով այնպես, որ կրելիս մի կտորը լինի կրծքի, մյուսը՝ մեջքի վրա:

Տիրամոր պատկերը պարտադիր չէ, սակայն բարեպաշտ ավանդությամբ ընդհանրապես պահպանվում է:

Հարկավոր է կրկնուրարը մշտապես կրել. լվացվելիս՝ այն հանում են, իսկ կեղտոտվելիս՝ փոխում: Կարելի է պահել հագուստի տակ: Փոխելիս՝ հին կրկնուրարը այրում են:

Կա նաև կրկնուրարի մեղալը, որտեղ մետաղը փոխարինում է գործվածքին: Մի կողմում Հիսուսի

**Սուրբ Սիրտն է, մյուսում՝ Տիրամայրն է Մանուկ Հիսուսի հետ՝ կրկնուրար տալիս:**

**Ահա մի քանի դեպք, որ վկայում են Տիրամոր Հավատարմությունն իր խոստմանը:**

**19-րդ դարի սկզբին Օհայոյում (ԱՄՆ) մի մարդ, անզգուշությամբ անցնելով երկաթգիծը, ընկնում է գնացքի տակ: Ի զարմանս բոլորի՝ թեպետ մարմինը երկու կես էր եղել, դեռ ողջ էր և խնդրում է վերջին օծում: Անմիջապես վարդապետ են կանչում, որը նրա մեղքերին թողություն և վերջին օծում է տալիս: Երբ հոգին ավանդում է, կրծքի վրա գտնում են կարմելոս լեռան Տիրամոր կրկնուրարը:**

**1957թ. Գերմանիայում՝ Վեստբադեն թաղամասում, հրդեհ է բռնկվում: Այնտեղ ապրող մի բարեպաշտ, տեսնելով իր տանը սպառնող կրակը, դռան վրա կախում է կրկնուրարը և փախչում: Հինգ ժամ անց, երբ վերջապես հաջողվում է հրդեհը մարել, բոլորը ականատես են լինում Տիրամոր հրաշքին. Թաղամասի բոլոր տներն այրվել էին, կանգուն էր մնացել միայն այն տունը, որի դռան վրա կախված էր կրկնուրարը:**

**Գերապայծառ Փոլդինգը միսիոներ էր հեռավոր Ավստրալիայում: Մի անգամ նա ծանր հիվանդանում է, և մի այրի մեծ հոգատարությամբ խնամում է նրան: Երբ գերապայծառն առողջանում է,**

կնոջը խոստանում է, որ անկախ տարվա ժամանակից և եղանակից, կդա նրան վերջին օծում տալու:

Տարիներ են անցնում: Աշնան մի մռայլ օր գերապայծառ նամակ է ստանում, որտեղ իրեն կանչում են հարգելու խնամողին տված խոստումը: Չնայած աննպաստ եղանակին՝ անվարան շտապում է հասնելու այրուն: Մի քանի օր քայլելով՝ վերջապես հասնում է նրա տուն, սակայն այն դատարկ է գտնում: Հանկարծ լսում է փայտահատի կացնի ձայնը: Մոտենում է և տեսնում է մի թիկնեղ իռլանդացու, որ ծառ էր կտրում: Նրանից իմանում է որ ծեր այրին, վախենալով մեռնել առանց վերջին օծման, թեպետ շատ տկար էր, մեկնել էր քահանա գտնելու: Գերապայծառ Փոլղինգն իռլանդացուն առաջարկում է խոստովանվել: Փայտահատը, որ երկար ժամանակ չէր խոստովանվել, երկմտանքից հետո, վերջապես ծնրադրում է: Միսիոները նրան հորդորում է Տերունական սուրբ Կիրակի օրը գնալ Պատարագի և Հաղորդվել ու հեռանում է: Հազիվ էր մի քանի քայլ արել, հանկարծ թրմփոց է լսում, ապա՝ տնքոցներ: Վազում է ձայնի ուղղությամբ ու տեսնում փայտահատին՝ անշնչացած ընկած խառի տակ: Պարզվում է, որ այդ փայտահատը նույնպես Տիրամոր կրկնուրարն էր կրում:

Ֆրանսիացի մի քահանա գնում էր եկեղեցի՝

Կիրակնօրյա Պատարագ մատուցելու: Արդեն համարյա հասել էր, երբ նկատում է, որ կրկնուրարը մոռացել է: Առանց ծովանալու՝ վերադառնում է Տիրամոր զգեստի հետևից: Պատարագի ընթացքում մի երիտասարդ մոտենում է խորանին և ատրճանակը պարզելով՝ կրակում քահանայի վրա: Ի զարմանս բոլորի՝ նա շարունակում է աղոթքը, կարծես ոչինչ չի եղել: Բոլորը կարծում են, թե հավանաբար երիտասարդը վրիպել էր, բայց իրականում գնդակը խրվել էր կրկնուրարի մեջ:



**ԳՎԱԴԱԼՈՒՊԵԻ ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐԻԱՄԻ  
(ՕԶԵՐԻՆ ՍՊԱԾԱՅՈՂ)  
ՇԵԶԵՌԱԿԵՐՏ, ՀՐԱՇՎՈՐԾ,  
ԿԵՆԳԱՄԻ ՊԱՏԿԵՐԸ**  
**(1531թ. Գվադալուպե, Մեքսիկա)**



**Տիրամոր այս անձեռակերտ սրբապատկերը հրաշքով արտատպվել է Մեխիկոյում՝ 1531թ. 57-ամյա Խուան Դիեգո անունով մի հնդկացի գյուղացու տիլմայի՝ (կակտուսի թելիկներից գործված կտոր է, ացտեկների ազգային տարազը) թիկնոցի վրա: Թարգմանաբար Գուղլալլող բառը (որից առաջացել է Գուադալպուպե անունը) նշանակում է «օձերին սպառնացող»:**

**Գվադալպուպեի Տիրամոր պատկերի մակերեսույթը տաք է, ու թվում է, թե զարկերակը գործում է: Դա է հենց պատճառ հանդիսացել ՆԱՍԱ-ի գիտական հետազոտության: Փորձագետները պարզել են, որ Սրբապատկերի ջերմաստիճանը կազմում է 36,6 C, այսինքն՝ համապատասխանում է մարդկային մարմնի նորմալ ջերմաստիճանին: Իսկ ստետոսկոպի օգնությամբ արված լսումները ցույց տվեցին, որ պատկերի ներսում զարկերակը իսկապես զարկում է ըոպեռում 115 զարկ արագությամբ: Այդպիսի հաճախականությամբ զարկում է հղի կնոջ արգանդում պտղի սրտիկը:**

**Նկարի բարձրությունը 175 սմ է, լայնությունը՝ 45 սմ: Պատկերում աստղերը ոսկեգույն են, Տիրամոր վերնազգեստը կապտականաչավուն է, զգեստը՝ վարդագույն: Բնական գույների տեսք ունեն: Բայց ահա ներկերը, որով ներկված է պատկերը, ո՛չ**

բուսական, ո՞չ կենդանական և ո՞չ էլ հանքային  
 ծագում ունեն: Հետազոտությունները պատկերի  
 վրա ներկի բաղադրության և վրձնի հետքեր չեն  
 հայտնաբերել: Սա վկայում է նրա գերբնական  
 ծագումը: Այն փաստորեն ստեղծվել է ոչ երկրի  
 վրա: Ահա այստեղից է նրա անձեռակերտ լինելը  
 բնորոշվում: Նաև մասնագետները անցկացրել են  
 Աստվածամոր աչքերի ակնաբուժական փորձաքըն-  
 նություն: Պարզվել է, որ լույսը մոտեցնելիս՝ ակնա-  
 բիբերը փոքրացել են և մեծացել են, երբ լույսը  
 հեռացը ել են: Այսինքն նկարի Աստվածամոր աչ-  
 քերը կենդանի են և լույսին արձագանքում են ճիշտ  
 նույն կերպ, ինչպես որ կենդանի մարդու մոտ: Մեկ  
 այլ ուշագրավ երևույթ. ըստ ակնաբույժների  
 մանրակրկիտ ուսումնասիրության՝ Տիրամոր աչք-  
 երի եղջերաթաղանթում 13 մարդկանց պատկերներ  
 են նկատվում՝ ներառյալ Խուան Դիեգոյի պատկերը  
 և եպիսկոպոս Զումմարագայի, ըստ որում, երկու



աչքերի մեջ էլ տարբեր դիտանկյուններով, ինչպես  
որ մարդու աչքերի մեջ են արտացոլվում որևէ  
պատկեր դիտելիս: Նաև ավելացնենք, որ Խուան-  
Դիեգոյի թիկնոցը այդ ժամանակ շատ տարածված,  
կակտուսի բարակ մազիկներից հյուսված գործվածք  
էր, որը երկար չի դիմանում, բայց ահա այդ  
սրբապատկերն անվնաս է մնացել այսքան երկար  
տարիներ՝ ի ապացույց երկնային ու հրաշագործ  
միջամտության:

### Սուրբ Աստվածամոր երևման պատմությունը.

Սուրբ Կույսը չորս օրվա մեջ՝ 1531թ. դեկտեմբերի  
9-12, հինգ անգամ երևացել է:

Առաջին երևումը շաբաթ օրն էր, երբ Տեպեյակ բլրի  
վրա հատնվում է Տիրամայրը Խուան Դիեգոյին, երբ  
նա շտապում էր հասնելու Մեխիկոյում մատուցվող  
Սուրբ Պատարագին: Նա բլրի վրա տեսնում է  
արեգակի նման պայծառ, լուսաշող գեղեցիկ մի  
տիկին, որը տեղի բարբառով հարցնում է.  
«Խուանի՛տո, իմ ամենահամեստ որդյակ, ու՞ր ես  
գնում»: Պատասխանից հետո Տիկինը շարունակում  
է. «Իմ սիրելի՛ որդյակ, սիրում եմ քեզ: Ուզում եմ  
իմանաս, թե ես ով եմ: Ես հավերժ Կույս Մարիամն  
եմ՝ ճշմարիտ կյանք պարգևող և գոյությունը  
պահպանող Աստծո Մայրը: Նա է ստեղծել ամեն  
ինչ: Նա ամենուրեք է: Նա երկնքի և երկրի

Թագավորն է: Յանկանում եմ, որ տաճար կառուցվի այստեղ, որտեղ քո ժողովուրդը կվայելի իմ սերը, գութը, օգնությունը և պաշտպանությունը: Ես ձեր՝ քո, այս երկրի բնակիչների և բոլոր նրանց, ովքեր սիրում, դիմում և վստահում են ինձ, Ողորմած Մայրն եմ՝ պատրաստ լսելու գանգատները, օգնելու կարիքի, տառապանքի և վշտի պահերին: Այստեղ կգտնեն իմ Մայրական Սիրտը: Այստեղ կտեսնեմ նրանց արցունքները, կմխիթարեմ նրանց, և նրանք խաղաղության մեջ կլինեն: Գնա՛ հիմա եպիսկոպոսի մոտ և հայտնիր նրան այստեղ իմ պատվին տաճար կառուցելու ցանկությունս և պատմիր նրան այն ամենը, ինչ տեսար և լսեցիր: Վստահ եղիր, որ երախտապարտ կլինեմ և քեզ կպարգեեմ... Այժմ, երբ պատգամս լսեցիր, գնա՛, իմ համեստ որդյակ»:

Եպիսկոպոսը՝ Հայր Խուան դէ Զումարրագան, պատմությունը համարում է գյուղացու երևակայության արգասիք և հայտնում է, որ հաշվի կառնի Տիրամոր խնդրանքը: Վրդովված Խուանը, հասկանալով, որ բարձրաստիճան հոգևորականին համոզելն անիմաստ է, տիսուր վերադառնում է իրեն սպասող Աստվածամոր մոտ: Խնդրում է, որ ուրիշը ստանձնի այդ պարտականությունը: Ի պատասխան, Երկնավոր Մայրն ասում է. «Որդի՛ս, կարող էի շատերին ուղարկել, սակայն քեզ ընտրեցի...»:

Պատվիրում է, որ Հաջորդ օրը Խուանը դարձյալ  
գնա դէ Զումմարագայի մոտ:

Հաջորդ օրը բարձրաստիճան հոգևորականը,



երկար սպասեցնելուց հետո, ընդունում է Խուանին,  
որը լացակումած կրկնում է պատմությունը և  
հայտնում ընդմիշտ Կույս Մարիամի փափագը:  
Եպիսկոպոսը պատվիրում է, որ Տիրամայրն իր  
իսկությունը ապացուցելու համար մի նշան տա:

Խեղճ գյուղացին հնազանդ վերադառնում է իրեն  
սպասող Թագուհու մոտ ու փոխանցում նրա խոս-  
քերը: Եվ Տիրամայրն ասում է. «Մի՛ վախեցիր, որ-  
դյա՛կս, չէ՞ որ Ես քո Մայրն եմ: Եպիսկոպոսը  
կստանա իր ուզած նշանը: Վերադարձի՛ր վաղն

**այստեղ:** *Միայն խաղաղությո՞ւն քեզ, զավա՛կս»:*

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին, սակայն Խուան Դիեգոն չի կարողանում կատարել խոստումը. հիշանդացել էր հորեղբայրը՝ Խուան Բեռնարդոն, և նա պետք է խնամեր նրան: Դեղաբույսերը չեն օգնում, և նրա վիճակը գնալով ծանրանում է: Եվ մահամերձի վերջին օժման համար քահանա կանչելու նպատակով, Դիեգոն, Տեպեյակ բլրից խուսափելով, փորձում է այլընտրանքային ճանապարհով գնալ Սուլբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովվին կանչելու: Բայց ճանապարհին Տիրամայրը կանգնեցնում է նրան և հարցնում, թե ինչու՞ նա չդիմեց իրեն օգնության համար՝ ասելով. «**Մի՞թե ես այստեղ չեմ, ես քո Մայրն եմ** (այս խոսքերը հետագայում փորագրվել են Մեխիկոյում կառուցված Գվադալուպեի Տիրամոր տաճարի դռան վրա): Զէ՞ որ իմ հովանու և պաշտպանության ներքո ես: Քո հորեղբայրը չի մահանա: Քահանայի կարիք չկա, որովհետեւ արդեն լրիվ առողջ է: Նա բավական լավ է զգում: Գնա՛ բլրի գագաթը, քաղի՛ր այնտեղ աճող ծաղիկներից և բե՛ր ինձ»:

Բարձրանալով սառած բլրի լանջը՝ Խուան Դիեգոն տեսնում է այնտեղ կաստիլյան վարդեր: Դեկտեմբերին վարդե՞ր: Իսկ տվյալ տեղանքում աճում էին միայն անապատային բույսեր, նաև այսպիսի

վարդերն էլ հարազատ չէին Մեքսիկային։ Զարմանքով նա քաղում, լցնում է տիլմայի մեջ և տանում Աստվածամորը։ Սուրբ Մարիամը, դասավորելով դրանք, ասում է. «Որդի՛ս, սա այն նշանն է, որ ուղարկում եմ եպիսկոպոսին։ Ասա՛ նրան, որ այս նշանով պահանջում եմ նրա մեծագույն ջանքերը այն տաճարի համար, որ ցանկանում եմ այստեղ կառուցվի։ Միայն այս ծաղիկները ցույց տուր նրան։ Դու իմ վստահված դեսպանն ես։ Այս անգամ եպիսկոպոսը կհավատա այն ամենին, ինչ պատմես»։

Եպիսկոպոսն ու խորհրդականները դարձյալ լսում են Խուանի վկայությունը։ Եվ երբ տեսանողը բացում է տիլման, ի մեծ զարմանս Խուանի, ներկաները միանգամից ծնրադրում են։ Նրանք ոչ թե ծաղիկները, այլ տիլմայի վրա դրոշմված Տիրամոր պատկերն էին տեսել այնպես, ինչպես նկարագրել էր Խուանը։ Տիլման ցույց տալու և եպիսկոպոսին տեսիլքի վայր տանելու հաջորդ օրը տեսնում է առողջացած հորեղբորը, որը պատմում է, թե նախորդ օրը տեսել էր գեղեցիկ, լույսով պարուրված մի աղջիկ, որն ասել էր, թե Խուանը իր պատկերը տարել էր եպիսկոպոսին։ Հանձնարարել էր, որ թե՛ իրեն և թե՛ նկարն անվանեն «Գվադալուպեի Սրբուհի Մարիամ»։ Շուտափույթ կերպով կառուց-

վում է վանք և Տիրամոր անձեռակերտ սրբապատկերը դրվում է այնտեղ, և Աստծո Սուրբ Հոգու առաջնորդությամբ սկսում են գալ ու մասսայաբար մկրտվել տեղի դեռևս հեթանոս ու վայրենաբարո հնդկացիները, որոնք չեին հավատում Տիրոջը:

Դրանից հետո, 1555թ. կառուցվում է մեծ տաճար՝ ի պատիվ Գվաղալուպեի Տիրամոր, և սրբապատկերը տեղափոխվում այնտեղ, որտեղ էլ մինչ օրս միլիոնավոր ուխտավորներ են այցելում:

Երևումներից հետո հազարավոր ացտեկներ դարձի են գալիս: Տիլման, որը գտնվում է կառուցված տաճարում, թեպետ դարերի ընթացքում ենթարկվել է տարբեր բացասական գործոնների՝ հրդեհ, հեղեղ, մոմի ծուխ և այլն, սակայն միշտ մնացել է անապական: Նույնիսկ 20-րդ դարում ապստամբության ժամանակ եկեղեցու վրա նետված մեծ շառավղով գործող ռումբից, որից ավերվել էր ամբողջ եկեղեցին խորանով, բայց նկարը չէր վնասվել, միայն կոտրվել էր ապակյա պատյանը:

Այժմ էլ ամեն տարի տասնյակ միլիոնավոր ուխտավորներ են այցելում Մեխիկոյի այդ սրբավայրը՝ Տիրամոր Կենդանի ներկայությունը վայելու ու իր բարեխոսությունը խնդրելու, քանի որ այժմ էլ դեռ կիսահեթանոսական բարքերով ապրողներ շատ կան, իսկ բոլորիս սուրբ Մայր

**Աստվածածնի անկասելի բարեխոսությունը նրանց-ից շատերին իր Որդուն է մոտեցնում, առանց ազգ-երի խտրականության, ու փրկության տանում:**

**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ.** 2020թ. նոյեմբերի 6-ին, երբ Հայաստանում 44-օրյա պատերազմի թեժ մարտերն էին ընթանում, ուրբաթ օրը պահքի, ծոմի օր էր, և պահք էի պահել (հաց և ջուր): Երեկոյան ուղեցալավաշ չորացնել էլեկտրական տաք քարի վրա և ուտել, ու հանկարծ հրաշք. Մայր Աստվածածնի պատկերը արտապատկերվեց ձեռքերիս մեջ պահած տաք լավաշի վրա, և տեսա, որ ճիշտ Գվադալուպեի Տիրամոր պատկերն է. վերևում քրիստոնյաների առաջին նշանն էր՝ ձուկը, կողքին՝ խաչը, իսկ Աստվածամոր որովայնի վրա հեզ ու խոնարհ գառնուկն էր պատկերված: Եվ մի քանի օր անց, Գվադալուպեի սուրբ Տիրամոր բարեխոսությամբ առ Միածին Որդի, կասեցվեց 44 - օրյա պատերազմը:



## ԱԼՈՅՔ ԳՎԱԴԱԼՈՒՊԵԻ ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐԻԱՄԻՆ

Հիշե՛ր, ո՞վ Անարատ Կույս այն խոսքերը, որ ասացիր քո հավատարիմ բարեպաշտին. «Ես Ողորմության Մայրն եմ քո և այն բոլոր մարդկանց համար, ովքեր սիրում են ինձ, վստահում են ինձ և դիմում են իմ Օգնությանը: Ես լսում եմ նրանց հառաջանքները և սփոփում եմ նրանց բոլոր ցավերն ու տառապանքները»: Պաղատո՛ւմ եմ Քեզ Ողորմած Մայր լինել ինձ համար, քանի որ ես անկեղծորեն սիրում եմ Քեզ, վստահում եմ և աղերսում եմ Քո Օգնությունը: Աղաչու՛մ եմ, Գվաղալուպեի սրբուհի Մարիամ, ընդունիր իմ խնդրանքը (.....), եթե դա համապատասխանում է Տիրոջ կամքին: Այնպես արա, որ կարողանամ վկա լինել Քո սիրո, Քո կարեկցանքի, Քո օգնության և Քո պաշտպանության: Մի՛ լքիր ինձ իմ կարիքների մեջ: Գվաղալուպեի Տիրամայր, բարեխոսի՛ր մեզ համար: Այնուհետև՝ «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ...»:



# ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՏԻՐԱԾԱՅՐԸ

(1571թ. Լեպանտոյի ծովային ճակատամարտը)



Տիրամոր այս տիտղոսը հնագույններից մեկն է Համարվում: Բյուզանդական գրություններում սուլթան Մարիամին անվանում են «Օգնական Կայսրուհի»: Վաղ շրջանում՝ 5-րդ դարում, Աֆրիկայի տաճարներից մեկի պատին հայտնաբերվել է «Սրբուհի Մարիամ, օգնի՛ր մեզ» գրությունը:

10-րդ դարում հունական ծիսարանում հատուկ ջերմեռանդություն է սկսվում Տիրամոր հանդեպ՝ խնդրելով Նրանից «քրիստոնյա ժողովրդի պաշտպանությունը»:

Սուրբ Տիրամոր այս վեհագույն տիտղոսը հատկապես տարածվում է 1571թ. օսմանյան թուրքերի դեմ մղված Լեպանտոյի (Հունաստանի արևմտյան մասում գտնվող բնակավայր) ծովային ճակատամարտին, որ տեղի ունեցավ Հոկտեմբերի 7-ին: Թուրքական նավատորմիղի ուժերը մի քանի անգամ գերազանցում էին քրիստոնեական «Սրբագան Լիգա»-ի ուժերին, և ամբողջ Եվրոպան կանգնած էր թուրքական ներխուժման վտանգի առջև: Սուրբ Պիոս 5-րդ Քահանայապետը Տիրամոր պաշտպանության տակ դրեց քրիստոնյա բանակները, արեմուտքն ու քրիստոնյաներին՝ խնդրելով բոլոր եկեղեցիներում այդ օրը միասնաբար աղոթել Սուրբ Վարդարան և խնդրել Աստվածամոր օգնությունը Լիգայի ուժերի համար:

Քրիստոնյա զինվորները, ստանալով ճակատամարտի սկսվելու ազդանշանը, ծնկի իջան խաչելության առջև և շարունակեցին աղոթել՝ մինչ թուրքական բանակի նավատորմը կմոտենար: Այդ նույն ժամանակ Հռոմում հազարավոր հավատացյալներ Վարդարան էին աղոթում սուրբ Պիոս V Պապի հետ, ով շարունակ խնդրում էր Աստծուն վեր բարձրացրած ձեռքերով, ինչպես Մովսեսը: Եվ հաջորդ առավոտյան Պապը ելավ ու հայտարարեց հրապարակում գտնվող բոլոր ներկաներին սպասված

**Առւրը. Սուրբ Աստվածամայրը Տիրոջով հաղթանակ էր շնորհել քրիստոնյաներին:**

Սուրբ Կույսը ցույց տվեց, որ Ինքը պաշտպանում է իր Սուրբ Եկեղեցին և լսում իր զավակների աղոթքը: Եվ ահա քրիստոնեական բանակը կասեցրեց թուրքերի առաջխաղացումը դեպի Եվրոպա նաև ծագումով հայ Անտոն Սուրյանի դիպուկ հրանոթային հարվածների օգնությամբ: Ազատագրվեցին 12000 գերիներ:

Հաղթանակ տարած բանակը Տիրամորը շնորհակալություն հայտնելու համար վերադարձին անցավ Լորետոյի ուխտավայրով, ուր ոչ մի պահ չէր դադարել աղոթքը, աղաչանքն ու մաղթանքները՝ ուղղված սուրբ Տիրամորը, որոնց էլ Քրիստոնյաների օգնական Մայրը պսակել էր փայլուն հաղթանակի ցնծությամբ: Վենետիկի Դոժերի պալատում՝ Լեպանտոյի ճակատամարտին նվիրված նկարի ներքո, Սենատը գրեց. «Մեզ հաղթանակի չտարավ ո՛չ իշխանությունը, ո՛չ զենքը, ո՛չ դեկավարները, այլ միայն՝ ՎԱՐԴԱՐԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ»:

Այսպիսով՝ «Միիթարիչ վշտացյալների», և «Ապաստան մեղավորներին հինավուրց տիտղոսների կողքին ժողովուրդն ու Եկեղեցին սիրելի Աստվածամորը փառավորեցին նաև «Օգնական Քրիստոնյաների» ճշմարիտ անունով:

Այս հաղթանակից հետո Պիոս 5-րդ Քահանա-  
յապետը հոկտեմբերի 7-ը հռչակեց Վարդարանի  
տոն, և ամբողջ հոկտեմբեր ամիսը նվիրվեց Վարդ-  
արանի աղոթքին:

Վարդարանը երկմակարդակ աղոթք է: Առաջին  
մակարդակն իրականացվում է աղոթքի որոշակի  
տեխնիկայի կիրառմամբ. դա աղոթքի ոիթմիկ կըրկ-  
նությունն է: Խոսքերի մեղեղայնության ու ոիթմի  
շնորհիվ սիրտն ու գիտակցությունը ազատվում են  
մտքերի հոսքից ու զգացմունքներից՝ կենտրոն-  
անալով դեպի աստվածայինը: «Հայր մեր» կամ  
«Հրեշտակային Ողջույնը» աղոթքների խոսքերը մեզ  
օգնում են սրտով զգալ սրբերի օգնությունը:  
Կրկնությունը այն մեթոդներից մեկն է, որը մտոր-  
ման ժամանակ օգնում է հիշել ու զգալ Սուրբ  
Երրորդության Անձանց ու Սուրբ Մարիամի ներ-  
կայությունը: Սուրբ Կույսին անվանակոչելը թույլ  
է տալիս տեսնել, թե ինչպես է Փրկչի անունը  
ներթափանցում մեր կյանք: Ոիթմիկ կրկնության  
մակարդակը սերտորեն կապված է համրիչի օդտա-  
գործման հետ, որն օգնում է չափել աղոթքի ոիթմն  
ու կենտրոնանալ... Վարդարանի խորհուրդներն  
անվանում են Փռքըիկ Ավետարան: (Հիմնական  
Վարդարանի աղոթքը տես նախորդ՝ «Սուրբ  
Տիրամոր Վարդարանը» աղոթագրքույկում):

# ԱՊԱՎԻՆՈՒՄ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Ամենասուրբ Կույս Մարիամ Աստվածածին,  
Աստծուց կարգված Օգնական քրիստոնյաների,  
Աղաչո՛ւմ ենք Քեզ, բարեհաճիր ցույց տալ մեզ Քո  
Հզոր Օգնությունը:


Պահպանիր չարագործներից, պատերազմից,  
դժբախտություններից, արկածներից և այն բոլոր  
աղետներից, որ Դու գիտես,

Բայց ամենից առաջ տուր մեզ ամենակարևորը՝  
**ՄԵՂՔԻՑ ԽՈՒՍԹԵԼՈՒ ՇՆՈՐՀԸ:**

Օրհնի՛ր, պաշտպանի՛ր, պահպանի՛ր, պատըս-  
պարի՛ր,

Հսկի՛ր՝ որպես Քոնը այն բոլոր մարդկանց, որ  
Քեզ են ապավինում:

Սուրբ Աստվածածին, Օգնական քրիստոնյաների,  
Բարեխոսիր մեզ համար: Ամեն:



# ՍԵՎԱՆԱՎԱՐԵՔԻ ՏԵՐԱՄԱՅՐԸ

(1692 թ. Հայաստան)



Հայոց աշխարհում Վարդարանի աղոթքը մեծ տարածում է գտել 1692 թ.-ից, Մխիթար Սեբաստացու միջոցով:

Սևանա կղզու վանքում՝ սուրբ Տիրամոր գեղեցիկ նկարի դիմաց ծնրադրած, 16 - ամյա պատանի Մխիթարը ջերմորեն աղոթում էր: Երկար ժամանակ էր, որ հեռացել էր ընտանիքից և ծննդավայրից՝ Սեբաստիայից: Որոնում էր վանական ջերմեռանդ և բարեպաշտ կյանք: Էջմիածնից անցել էր Սևանա կղզի: Թեպետ վանքում տիրում էր աղօթքի, ճգնության և աստվածպաշտության մթնոլորտը,

միւնույն է, նա չէր գտնում այն կենդանի ջուրը, որով կհագեցներ իր ծարավը:

Սևանը շրջապատող Գեղամա վեհ լեռները անընդհատ ներշնչում էին Աստծո Զորությունը: Վանականները սաղմոսներ էին աղոթում, ծոմ էին պահում, խարազանազգեստ էին հագնում, բայց այդ մժնոլորտում մի էր բան պակասում: Զկար ամենահասարակ բարեպաշտությունը, հոգու թոիչքը և ամեն ինչում գերբնականը փնտրելը: Միակ միսիթարությունը աղոթքն էր և անձի ամբողջական նվիրումը Աստծուն: Վիշտը կրծում էր սիրտը... Ի՞նչ անել: Հոգնած էր երկար ճանապարհորդություններից, հուսահատված իր փնտրած գանձերի չգոյությունից. արդեն քայլայված էր առողջությունը, մանավանդ որ աչքերի լույսն էլ էր արդեն նվազել: Եվ ահա մի օր էլ, մինչ մտահոգ և ընկճված տրամադրությամբ շրջում էր Սևանա կղզում, ինքնաբերաբար հասավ այնտեղ կառուցված Առաքելոց եկեղեցին: «Ինչ բան, որ մարդիկ չեն կարող տալ, Աստված իր Հայրական բարությամբ և ողորմածությամբ կարող է երկնքից մատուցել», - այդպես խորհեց և երեսը խաչակնքելով՝ ներս մտավ եկեղեցի: Երկրպագեց Ամենակալ Աստծուն, և երեկոյան այդ առանձնության մեջ սաղմոս մրմնջաց Ավագ Խորանի առջև, ապա կանգնեց Աստվածամոր

նկարի դիմաց, աչքերն հառեց նկարին։ Տիրամոր հայացքը քաղցր էր և հուսադրող. սիրտը հուզվեց և աչքերից արցունքներն սկսեցին հոսել։ Եվ սրտի ողջ գորովն ու վստահությունը համախմբելով՝ աղոթեց այսպես.

«Ո՞վ Սրբուհի Կույս Մարիամ, ի՞նչ պիտի լինի իմ վիճակը, ո՞վ պիտի հագեցնի իմ սրբության և գիտության ծարավը։ Աստված ահա ինձ մեծ-մեծ ներշնչումներով փափագներ իրագործելու է մղում, բայց ինչպե՞ս դրանք իրագործեմ, երբ դեռ պատրաստ չեմ։ Ահա տեսնում եմ մեր ազգի ծանր վիճակը և մեր վանքներն ու վանականներին, որ կոչված են առաջնորդելու մեզ ու մեր ազգին։ Ափսո՛ս, ու ափսո՛ս, ցա՛վ է ինձ համար, որովհետև գիտությունն ու սրբությունը նվազել են այդ ակունքների մեջ։ Ես կուզեի ամենքին ծառայելու համար սուրբ լինել. ճշմարիտ սուրբ և՛ խոսքով, և՛ գրչով, և՛ մանավանդ իմ կյանքի օրինակով լրացնել այն պակասը, որ կա իմ ժողովրդի մեջ։ Բայց, ավա՛ղ, ինքս չունեմ անհրաժեշտի չափ իմաստություն և սրբություն։ Սրբուհի՝ Տիրամայր, Դու հասիր օգնության։ Դու բարեխոսիր, Դու առաջնորդիր ինձ, Դու՛, որ գթում ես ամենքին, ինչպես Քո որդիներին»։

Այսպիսի անկեղծ, խոնարհ ու սրտագին աղոթքը

պիտի շարժեր ամենակարծը սրտերն անդամ, ուր  
մնաց Հիսուսի Մոր մեծ Սիրտը չշարժեր:

Եվ ահա թմրություն է իջնում վրան, ու հանկարծ  
կիսամութ տաճարը լուսավորվում է աչքերը շաց-  
նելու պայծառությամբ, և երեսում է Թագուհի Սուրբ  
Աստվածամայրը՝ ծաղկանկար զգեստով՝ երկու  
աղավնակերպ կույսերի ընկերակցությամբ: Եվ  
Թագուհին, մոտենալով Մխիթար սարկավագին,  
ասում է.

— Ինչու՞ ես այդպես տիսուր, զավա՛կ իմ, ի՞նչ  
ես փափագում ինձանից:

— Սիրելի՛ Սրբուհի, պատմեցի արդեն իմ վիշտը,  
և գիտես իմ փափագների ու կարիքների մասին:

— Մի՛ տիսրիր, սիրելի՛ սարկավագ, ես այսու-  
հետեւ միշտ քեզ հետ պիտի լինեմ և պիտի քեզ  
առաջնորդեմ քո ողջ կյանքի ընթացքում:

— Շնորհի՛ր ինձ, Տիրուհի՛ Մայր, այնքան սուրբ  
լինել, որպեսզի ուրիշներին էլ կարողանամ օգնել  
սրբանալու:

— Պիտի տա՛մ Քեզ այդ Շնորհը:

— Տու՛ր ինձ, Տիրուհի՛ Մայր, որպեսզի մեր սուրբ  
հայրերի պես ես էլ իմաստուն և սուրբ լինեմ.  
Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալի հայրա-  
պետի և մյուս հայրերի նման զարդացած և  
Աստվածասեր:

– Եղիցի՛: Վստա՛հ եղիր, որ Որդիս սիրում է քեզ  
և քեզ պիտի ուղղի այնպիսի ճանապարհներով, որ  
հասնես նպատակներիդ և օգտակար պիտի լինես  
նաև ուրիշներին էլ, մանավանդ՝ հայո՛ց ազգին:

Եվ մինչ խոսում էր, կողքին գտնվող կույսերը  
ժպտում էին Միսիթար սարկավագին, որի արցունք-  
ներն ավելի առատ էին այժմ հոսում, բայց արդեն  
ոչ թե ցավի ու տրտմության, այլ ուրախության  
արցունքներ էին: Միսիթարը մի քայլ առաջ գնաց՝  
համբուրելու Տիրամոր օրհնյալ աջը, բայց հանկարծ  
լույսերն անէացան և կրկին կիսամութը տիրեց տա-  
ճարում: Միսիթարը սթափկեց և կարծես արթնացավ  
տեսիլքից: Այդ պահին նաև բժշկվեցին Միսիթարի  
աչքերը: Սակայն նրա մտքի ու սրտի մեջ մի նոր  
լույս ծագեց, որ նրան առաջնորդեց ողջ կյանքում:  
«Այդ օրից, պատմում է կենսագիրը, տեսիլքի այդ  
պատկերը տպավորվեց Միսիթարի մտքի մեջ և  
կյանքի ամենադժնդակ օրերին նրա հոգու նավը  
առաջնորդող փայլուն Աստղը եղավ»:

Եվ երբ հաջողվեց Միսիթարյան Միաբանությունը  
հաստատել, նրա դրոշի վրա Միսիթարը դրոշմել  
տվեց **ՈՐԴԵԳԻՐ ԿՈՒՅՍԻՆ՝** հիշեցնելու համար իր  
հաջորդներին, թե հարկ է ամենքին էլ այդ որդե-  
գրությունը փնտրել ու գտնել, ապրել այդ որդե-  
գրությամբ ու գործել, որովհետեւ Սրբուհի Կույսը,

**Հիսուսի Մայրը լինելով, Մայրն է բոլոր ճշմարիտ  
քրիստոնյաների:**

**Նկարը, որի դիմաց աղոթում էր, այժմ գտնվում  
է ՀՀ ազգային պատկերասրահում:**

**Մխիթարյան Միաբանությունը արդեն երեք դար  
է շարունակում է աստվածահաճո և ազգանվեր գոր-  
ծունեություն ծավալել, երկու դար էլ՝ Վիեննայում:  
Մայրավանքը գտնվում է Իտալիայի Վենետիկի  
Սուրբ Ղազար կղզում: Այդ փոքրիկ Հայաստանը,  
ինչպես բոլորն են կոչում, բոլոր ժամանակներում  
եղել է և մնում է սփյուռքի հայապահպանության  
առաջին և հզոր օջախը: Իսկ այդ տեղի ընտրության  
հարցում նույնպես կա Սուրբ Տիրամոր աջակ-  
ցությունը: Երբ Մխիթարը, հալածանքներից փախ-  
չելով, հասնում է Իտալիա, և տեղի խնդիր կար,  
սուրբ Տիրամայրը հայտնվում է նրան երկրորդ ան-  
գամ, և Սուրբ Ղազար կղզին այնուհետև տրվում է  
Մխիթարյան միաբանությանը անհատույց մինչ օրս:**

**Վարդարանի տարածման հիմնական ալիքը հայոց  
մեջ սկսվել է Մխիթարյան Միաբանության հայրերի,  
հատկապես, Մխիթար Սեբաստացու ջանքերով:  
Սեբաստացին մեծագույն հայ մարիամասերներից  
էր, ով հայկական մշակույթի մեջ ամրացրել է Վար-  
դարանի աղոթքը և այլ մարիամական աղոթքներ:**

**1735թ. Սուրբ Տիրամոր նախասիրած աղոթքը՝**

**Վարդարանը, Սուրբ Գրքից ու Նարեկից հետո հայ աշխարհում ամենաշատ տպագրվող աղոթքն է դառնում։ Որդեգիր Կույսի կոչումը կրող հայրերը իրենց հիմնադրի սկսած գործունեությունը շարունակում են Աստվածամոր հանդեպ նույն հավատով ու նվիրումով։**

**Վարդարան նշանակում է «վարդերի պարտեզ»։ Անվանումը ծագել է Աստվածամորը վարդեր նվիրելու հինավուրց սովորությունից. այս աղոթքը նմանեցվել է վարդերի մի փնջի, որ ամեն անգամ հավատացյալը նվիրում է Սուրբ Կույսին։**

**Տիրամայրը տարբեր երեսումների ընթացքում մարդկանց բազմիցս հայտնել է, որ յուրաքանչյուր անգամ «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ» աղոթելով, Նրան ենք նվիրում մի գեղեցիկ Վարդ։ Վարդը ծաղիկների թագուհին է, իսկ Վարդարանը՝ ջերմեռանդությունների վարդը, հետևաբար՝ ամենագեղեցիկը, և ամեն «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ»-ի և «Հայր մեր»-ի համար դրված հատիկները՝ իբրև վարդեր, պատկաճե շարված են աղոթահամրիչի վրա, և աղոթքները ասելով՝ մենք վարդեր ենք նվիրում Տեր Հիսուսին և սուրբ Աստվածածնին։ Ահա այսպես «Վարդարան» բառի՝ որպես վարդերի պսակ, բացատրության առաջին սահմանումը տվել է աբրահայր Մխիթար Սեբաստացին։**


**1749թ. ապրիլի 27-ին Վենետիկի սուրբ Ղազար կղզում ի Տեր ննջեց մեծ մարիամասեր արքահայրը՝ հայ ժողովրդի համար անգնահատելի ավանդ թողած Միհիթարյան Միհաբանության հիմնադիրը:**

**Թող հավերժ վառ մնա Միհիթար Սեբաստացու հիշատակը հայ ժողովրդի սրտում և աղոթելով նրան՝ խնդրենք նրա սրտագին բարեխոսությունը առ Ամենօրհնյալ Տիրամայր և առ մեր Տեր Հիսուս Քրիստոս Աստված, հայ ազգի, Հայոց աշխարհի խաղաղության ու փրկության համար:**

## **ԼԱՍ - ԼԱԽԱՍԻ ՏԻՐԱՄՈՐ ԱՆՁԵՌԱԿԵՐՏ ՀՐԱԾԱԳՈՐԾ ՊԱՏԿԵՐԸ** (1754թ. Կոլումբիա)



Հատինական Ամերիկայի Կոլումբիայի յոթհրաշալիքներից մեկն է համարվում Լաս - Լախասի (Ժայռեր) սուրբ Տիրամոր հոյակերտ տաճարը՝ նեղութական ոճով բազիլիկ եկեղեցին, որը գըտնըվում է Էկվադորի սահմանին՝ անտառների, սարերի ու ձորերի մեջ՝ Գուախտարա գետի կիրճում՝ նրա վրա կառուցված կամրջին, իպյալես քաղաքից յոթ կմ հեռավորության վրա։ Այն Կոլումբիայի ամենաշատ այցելու ունեցող եկեղեցիների շարքին է դասվում։ Տաճարի կառուցումը կապված է Սուրբ Աստվածամոր անձեռակերտ գունավոր պատկերի հետ, որ հրաշքով արտատպվել է ապառաժի վրա, և որը մինչ օրս խորանի պատկերն է հանդիսանում ու գլխավոր սրբատեղին։



Համաձայն պատմության՝ տաճարի տեղում  
քարայր կար, որը ոչ այնքան բարի համբավ ուներ  
տեղի բնակիչների համար, և նրանք աշխատում էին  
արագ շրջանցել այն։ Մոտակա Պոտոսի գյուղում  
ապրում էր մի հնդկացի կին՝ Մարիա Մյուսիս դե  
Կվինյոնես անունով, որը հաճախ էր գնում իպյալես  
քաղաք, և նրա ճանապարհը անցնում էր կամրջի  
վրայով՝ ոչ հեռու այն քարայրից։ Կինը շատ էր  
վախենում այդ տեղից, դրա համար, կողքով անց-  
նելիս, աշխատում էր կանգ չառնել։ Մի օր էլ  
Մարիան իր հետ ճանապարհին վերցնում է աղջկան՝  
փոքրիկ Ռոզային, որը ի ծնե խուլ ու համր էր։  
Նրանք գնում էին սովորական իրենց ճանա-  
պարհով, բայց հանկարծակի վատ եղանակի պատ-  
ճառով, փոթորիկից, հորդառատ անձրեկից պաշտ-  
պանվելու համար, կինը ստիպված իր աղջկա հետ  
թաքնվում է քարայրում։ Մինչև որ նրանք թաքըս-  
տոցում սպասում էին անձրեկի դադարելուն, փոք-  
րիկ աղջեկը որոշում է բարձրանալ քարայրի բե-  
կորների վրա։ Եվ ահա այդ լուսության մեջ պայթում  
է աղջկա ձայնը. ապառաժի քարերից մեկի վրա Ռո-  
զան տեսնում է Կույս Մարիամի հրաշք պատկերը՝  
Մանուկ Հիսուսը գրկին և գոչում է. «Մայրի՛կ,  
նայի՛ր, այստեղ մետիսուհի է՝ փոքրիկ մետիսին  
գրկին, իսկ նրանց կողքին՝ էլի երկու մետիսներ»։

Մարիան աներևակայելի երջանկության մեջ էր, որ իր Ռողան խոսեց: Եվ ուրախությունից նա արագ վերցնում է երեխային ու դուրս է փախչում՝ վազելով դեպի գյուղ: Մարդիկ չէին կարողանում հասկանալ, թե այդ ի՞նչ պատճառով հանկարծ աղջնակը սկսեց խոսել, իսկ Մարիայի պատմածին՝ քարի վրայի պատկերի մասին, ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Մի քանի օր անց, երկար փնտրելուց հետո, Ռողային չեն կարողանում գտնել. կարծես անհետացել էր: Մայրը չգիտեր էլ ինչ մտածեր: Գյուղից ոչ ոք աղջնակին չէր տեսել: Բայց Մարիան սրտով զգում էր, որ երեխան կարող է այն խորհրդավոր քարայրում լինել և որոշում է գնալ այնտեղ. և նա չէր սխալվում, Ռողան այնտեղ էր, ու պատմում է մայրիկին, որ այդ պատկերի կինն էր նրան իր մոտ կանչել և նա արձագանքել էր նրա կանչին: Այդ օրվանից, Մարիան սկսում է աղջկա հետ հաճախ գնալ քարայր՝ աղոթելու Սուրբ Կույս Մարիամի պատկերի առջև: Նրանք բերում էին դաշտային ծաղիկներ, մոմեր և աղոթում նրան, Ով պատկերված էր քարին անտեսանելի ձեռքով: Իսկ իրենց կատարածի մասին նրանք ոչ ոքի չէին պատմում:

Ամեն ինչ այդպես էլ գաղտնիք կմնար, եթե չլիներ այս արտառոց միջադեպը:

Մի անգամ Ռոզան ծանր հիվանդանում է և շուտով մահանում: Մարիան վշտից անմիխթար վիճակում, մահացած աղջկան գրկած տանում է քարայր՝ Կույս Մարիամի պատկերի մոտ՝ հույս ունենալով, որ Նա կարող է վերադարձնել իրեն երեխային: Մարիան երկար աղոթում է սրբապատկերի առջև, լաց է լինում և խնդրում սուրբ Աստվածածնին կենդանացնել երեխային: Այդ ժամանակ տեղի է ունենում երկրորդ հրաշքը: Եվ երեխան իսկապես կենդանանում է: Այդ դեպքից հետո Մարիան որոշում է այլևս չթաքցնել շրջապատից ժայռի վրայի այդ հրաշագործ պատկերի մասին և ուրախացած գնում է պատմելու բոլորին հրաշքի մասին: Սկզբում նրանք չեն հավատում և Մարիային ցնորվածի տեղ են դնում, բայց հետո գյուղում հավաքվում է մեծ բազմություն և քահանայի հետ բոլորը միասին ուղևորվում են դեպի քարայր: Այն բանից հետո, երբ նրանք իրենց աչքով տեսնում են անձեռակերտ պատկերը, քահանան ընկնում է ծնկների վրա և արցունքներն աչքերին ասում, որ բոլորը հանեն իրենց աղոթահամրիչները և սկսեն Վարդարան աղոթել, չէ՞ որ իրենց երևացել է հենց ինքը՝ Աստծո Մայրը: Նկարի մի կողմում սուրբ Դոմինիկոսն էր արտապատկերված, որտեղ սուրբ Մայրը նրան է հանձնում սուրբ Վարդարանը,

(սուրբ Դոմինիկոսին այդ երեսումը եղել է 1208 թ. Պրուի մատուռում), իսկ մյուս կողմում՝ սուրբ Թրանցիսկոս Ասիզացին (նա էլ դարձել էր Վարդարանի այլ տեսակների հիմնադիրը): Եվ հենց այդ նույն օրը նույն տեղում մատուցվում է առաջին սուրբ Պատարագը՝ որպես շնորհակալություն Աստծուն, իրենց երկրում սուրբ Տիրամոր ներկայության համար:

Այդ ամենը կատարվում է 1754թ. սեպտեմբերի 15-ին: Այդ օրվանից ի վեր, ամեն տարի այդտեղ նշվում է սուրբ Մարիամի տոնը, մանավանդ երբ եկեղեցին պաշտոնապես է հաստատում այն՝ որպես սրբատեղի, ավելի է մեծանում ուխտավորների հոսքը: Այսպիսով, սուրբ Տիրամոր պատկերի մասին լուրերը սկսում են տարածվել ամբողջ մայրցամաքով: Մարդիկ գալիս էին ժայռի նկարի մոտ՝ աղաչելու Երկնքի Թագուհուն բժշկության կամ զանազան կարիքների համար, և շատերը ստանում էին իրենց խնդրածը:

Քարանձավում գտնված Սուրբ Կույս Մարիամի անձեռակերտ պատկերը իրենից ներկայացնում է մի մեծ նկար. Նրա բարձրությունը կազմում է 3 մ 20սմ, իսկ լայնությունը՝ 2մ 3սմ: Որպեսզի սուրբ պատկերը պահպանվեր, հենց նույն տարում կառուցվում է առաջինն այդ վայրում՝ ծղոտե եկե-

ղեցին՝ տասը տարիների ընթացքում մի քանի  
անգամ վերակառուցվելով։ 1769թ. կառուցվում է  
երկրորդ եկեղեցին՝ տրված ողորմությունների հաշ-  
վին, որը տևում է յոթ տարի։ Երրորդ տաճարի  
կառուցմանը օգնում են Եկվադորի ճարտարա-  
պետները։ Կառուցման ընթացքում եկեղեցուն կից  
փորփում է մի գեղատեսիլ ջրվեժ, որն այսօր էլ հի-  
ացնում է ամեն այցելուի։ Չորրորդ անգամ տաճարի  
կառուցումը սկսվում է 1916թ. և տևում 33 տարի,  
ուխտավորների նվիրատվությունների շնորհիվ ա-  
վարտին է հասցվում 1949թ., որն արդեն ունի  
ասօրվա տեսքը։ Այսքան տարիների ընթացքում  
սրբապատկերը ոչ մի անգամ ռեստավրացիայի  
(վերականգնում) չի ենթարկվել, այն իր սկզբնական  
գունագեղ և պայծառ տես-  
քը պահպանել է մինչ օրս։



Իսկ գիտնականները, թեև  
անցկացրեցին շատ հետա-  
զոտություններ, բայց այդ-  
պես էլ չկարողացան պար-  
զել ո՞չ սուրբ պատկերի  
բնույթը, ո՞չ էլ թե ինչ  
նյութերով երբ և ինչպես է  
այն արտապատկերվել ժայ-  
ռին։ Ներկերը այնքան

թարմ են, որ թարմացման կարիք չունեն, և կարծիք կա, որ սրբապատկերը ապառաժի մեջ մեկ մետրից ավելի խորությամբ ներծծված է ներկով, իսկ թե ինչպես, ապա այդպիսի տեխնոլոգիան դեռևս մեզ հայտնի չէ: Իսկ ինչ վերաբերում է հրաշք սրբապատկերի բուժիչ հատկություններին, ապա այս 200-ից ավելի տարիների ընթացքում ավելի են շատացել, եթե սկզբում հայտնի էր փոքրիկ աղջնակի ի ծնե խլության ու համրության բժշկումը, ապա այժմ յուրաքանչյուրը կփաստի, որ բժշկվում է ամեն հիվանդություն՝ սկսած թմրամոլության կախվածությունից, հարբեցողությունից, օնկոլոգիական հիվանդություններից մինչև ամուսնական դավաճանություն:

Դրա մասին կարող են վկայել Լաս-Լախասի տաճարի շուրջը փակցված շնորհակալությամբ լի հազարավոր քարետախտակները՝ գրված այն անձանց կողմից, որոնց Սուրբ Տիրամայրը ազատել է զանազան ախտերից:

Ներկայումս եկեղեցու մասին հոգ են տանում երկու Փրանցիսկյան միաբանություններ. մեկը՝ կոլումբիական, մյուսը՝ էկվադորյան:

Այդպիսով Լաս-Լախասի տաճարը դարձավ երկու հարավ-ամերիկյան ժողովուրդների միջև խաղաղության և միության գրավականը:

# ՀՐԱՇՎՈՐԾ ՄԵԴԱԼԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ

(1830 թ. Փարիզ, Ֆրանսիա)



1830թ. Սուրբ Տիրամայրը Փարիզի Բակ փողոցի  
մատուռում երևաց 24 տարեկան Կատրին Լա-  
բուրեին, որ Գթության աղջկների միաբանության  
քույրերից էր:

Հուլիսի 18-ի գիշերը Կատրինը քնից արթնանում

Է՝ երեք անգամ լսելով իր անունը. մի փոքրիկ, գեղեցիկ տղա է տեսնում. «Արի՛, կանչում է նա, արի՛ մատուռ. Սուրբ Կույսը քեզ է սպասում»:

Գիշերվա ժամը 11:30-ն էր: Զէ՞ որ կարող էին լսել նրան: Չորս-հինգ տարեկան մանջուկն ասում է. «Մի՛ անհանգստացիր, բոլորը քնած են: Արի՛, սպասում եմ քեզ»: Կատրինը անմիջապես հագնվում է ու հետևում առաջնորդին, որը միշտ ձախ կողմից էր քայլում: Միջանցքները լուսավոր էին, և փոքրիկ տղայի թեթև դիպչելուց անգամ բոլոր փակ դռները բացվում էին: Մատուռը լուսավորված էր և մոմեր էին վառվում՝ կարծես գիշերվա Պատարագ լիներ: Ծնրադրում է մատուռի աստիճանների մոտ և սպասում: Ժամանակն անվերջ է թվում: Մոտ կես ժամ անց՝ կեսգիշերին, մանջուկը գոչում է. «Ահա՛ Սուրբ Կույսը: Մետաքսի շրջունի նմանվող ձայնի ուղղությամբ հետևելով՝ տեսնում է, որ **Հոգեւոր Հոր աթոռին նստած է գեղեցիկ Տիկինը**: Ծնրադրելով նրա դիմաց՝ միանձնուհին ձեռքերը դնում է ծնկներին: Կատրինը չի հիշում՝ որքան է տևել այդ երանելի պահը, որտեղ Տիրամայրը նրա հետ խոսում և հանձնարարում է իր պատգամները և նախագդուշացնում դժվարությունների ու պատերազմի մասին: «Դու կներշնչվես քո աղոթքների պահին»: Ուղղություն է տալիս փորձության պա-

Հերի համար և մատնանշելով խորանը՝ հայտնում, որ այնտեղ կդտնի ամեն տեսակի միսիթարություն։ Տիրամայրն ասում է, որ Աստված առաքելություն ունի Կատրինի համար։ Շատ փորձությունների կենթարկվի, բայց նրան բազմաթիվ չնորհներ կպարգևի, ուստի նա վախենալու բան չունի։ Այս խոսքերից հետո Տիրամայրը հեռանում է։ Հոգեոր հայրը Կատրինին խստորեն պատվիրում է բացի իրենից ոչ մեկի չպատմել այդ այցելության մասին։

1830թ. նոյեմբերի 27-ի երեկոյան՝ մատուռում՝ միաբանության անդամների մտածական աղոթքի ժամանակ, լսվում է խշոց, և Տիրամայրը դարձյալ երեսում է Կատրինին։ Զգեստը ճերմակ մետաքսից էր, պատմուճանը՝ կապույտ, իսկ քողը՝ սպիտակ։ Ոտքերը սպիտակ գնդի վրա էին. Ոտքով տրորում էր կանաչավուն օձի գլուխը։ Զեռքերի մեջ կար մի այլ գունդ, վրան փոքրիկ խաչ. աղերսագին հայցքը հառում էր երկնքին։ Հանկարծ մատներին հայտնվում են գոհարազարդ մատանիներ, յուրաքանչյուր մատին՝ երեք հատ, որոնք ճառագայթներ էին արձակում։ Խոսելով միանձնուհու հետ՝ հայտնում է, որ այդ գունդը երկիրն է, մասնավորապես՝ Թրանսիան։ «Սա խորհրդանիշն է այն չնորհների, որոնցով կողողեմ ինձ դիմողներին»։ Հենց այդ պահին Տիրամոր շուրջը երեսում է հավկիթաձև

**ստվեր, որտեղ գրված էին հետեւյալ խոսքերը. «Ո՞վ  
Կույս Մարիամ՝ Անարատ Հղացյալ, աղոթիր մեզ  
համար, որ Քո պաշտպանությանն ենք դիմում»:** Մի  
ձայն հորդորում է այդ ձեռվ մեղալ ունենալ: **Ով  
այն կրի և վստահի, առատ չնորհների կարժանանա:**  
**Մեղալի հակառակ երեսին M տառն էր և խաչի  
նշանը: Ներքեռում կար երկու սիրտ. մեկը՝  
փշեպսակով պատված, մյուսը՝ սրով խոցված:**  
**Տասներկու աստղեր շրջապատում էին այս պատ-  
կերը:**

**Կատրինը Հայր Ալադելին՝ իր խոստովանահորը,**

**անմիջապես պատմում  
է տեսիլքի և մեղալի  
մանրամասները: Ի դեպ,  
այդ մի քանի անգամ  
երեռում է երիտա-  
սարդ միանձնուհուն:**

**Անցնում է երկու  
տարի, իսկ Տիրամոր  
պատգամը դեռևս կա-  
տարված չէր: Ներքին**

**ձայնը մեղադրում էր Կատրինին: Երկնավոր Մայրը  
նրան ասել էր, որ չանհանգստանա, որովհետեւ կգա  
այն օրը, երբ նա կդիտակցի և կվախենա Տիրամոր  
դժգոհությունից:**



Խոստովանահայրը, որին Կատրինը պատմում էր իր հետ կատարվող բոլոր մանրամասները, հասկանում է, որ այդ խոսքերը իրեն են վերաբերում: Ի վերջո, Հոգևոր իշխանությունների արտօնությամբ տպվում է մեղալը և տարածվում բազմաթիվ երկրներում: 46 տարի Կատրինը պահում էր իր տեսիլքների գաղտնիքը, որոնց մասին տեղյակ էր միայն խոստովանահայրը: Մահից քիչ առաջ Սուրբ Կույսը կոտրում է նրա լուսաթյունը, և միանձնուհին իր վկայությունը ամբողջապես գրառում ու հանձնում է մեծավորներին:

Մեր օրերում Կատրինի՝ «Լոռության Սրբուհու» ստացած պատգամով բազմաթիվ հավատացյալներ կրում են հրաշագործ մեղալը, որը դեռևս շարունակում է պարգևել Տիրամորից Աստծո շնորհները:



Ուշագրավ փաստ. Հրաշագործ մեղալը Մայր Թերեզան բաժանում էր բոլոր հանդիպածներին: Նա իր գրպանում պահում էր մեղալներով լի փոքր տուփ. Նրա Գթության քույրերը շարունակում են այդ բարի առաքելությունը:

**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հայաստանում՝ Երևանում, նույնպես եղան Հրաշքներ ինձ հետ, Տիրամոր Հրաշագործ մեղալի հետ կապված, որը ցանկացա անպայման վկայել:

2020թ. մի կիրակի, երբ Պատարագից հետո ինձ նվիրեցին սուրբ Տիրամոր մեղալյոնը, շատ մեծ սիրով կախեցի պարանոցիս, խաչիս և Տեր Հիսուսի փոքրիկ նկար-մեղալյոնի հետ միասին՝ նույնիսկ չիմանալով այս պատմության մասին: Մի քանի ամիս անց, լոգանքի պահին (վզնոցս հանել և դրել էի դիմացի հայելու մոտ) մի անտրամաբանական դեպք պատահեց. չհասկացա, թե ինչպես, բայց կարծես միտքս անջատվեց, ոտքս առաջ դրեցի և մեկնվելով՝ բռնեցի Տիրամոր մեղալից, ու հենց այդ պահին՝ իմ առաջ գալու նույն վայրկյանին, վերևի ջրի հին խողովակից երկաթի մի սուր կտոր պոկվեց ու ընկավ գլխիս տեղը, սակայն ընկավ գետնին և ինձ չվնասեց: Լաց լինելով՝ չնորհակալություն հայտնեցի Սուրբ Տիրամորս այդ մեծ պաշտպանության համար, քանզի հասկացա, որ հենց

Ինքը անձամբ օգնեց: Ի դեպ, մեջբերում անեմ, այդ նույն ամսվա մեջ մի մահափորձից էլ փրկվեցի, այս անգամ Մեջուգորիեի սուրբ Տիրամոր միջոցով, երբ սրբապատկերը տոպլրակիս մեջ անցնում էի փողոցը, հետիւտնի կանաչ լույսի տակ, և բոլոր մեքենաները կանգնած, հեռվից մի մեքենա, առանց կանգ առնելու, կարծես դիմացը ոչինչ չտեսնելով, շատ մեծ արագությամբ գալիս էր, և ասես մեկը գլուխս թեքեց ու տեսա մեքենան և հետ գնացի, այլապես օդում կհայտնվեի: Փա՛ռք Աստծուն, որ մեր ամեն-օրհնյալ Սուրբ Մայրիկին մեզ մեծ պաշտպան է կարգել երկրի վրա, ու Նրա հովանու տակ ենք:

Այժմ շարունակեմ վերեռում ասվածը. 2021թ.-ին, երբ նույն օրհնյալ անձը, որ նվիրել էր ինձ Տիրամոր մեղալը, ով տարիներ հետո դարձավ այս գրքի էջադրողը, նվիրեց ինձ նաև «Երկնավոր Մոր պատ-գամը» սքանչելի գիրքը, որտեղից էլ հիմնականում արտագրված են այստեղ Տիրամոր երեսումների պատմությունները, ու որի մեջ զարմանքով տեսա իմ մեղալի նկարը և կարդացի պատմությունը և մեծ ցանկություն առաջացավ, որ ես էլ բաժանեմ ուրիշներին: 2022թ. սկզբին, մի քանիսը, որ բերված էր Ֆրանսիայից, Հայ Կաթողիկե Եկեղեցու քահա-նայի միջոցով վերցրի և բաժանեցի: Իսկ երբ մայիսին Աստծո մեծ Հրաշքով գնացի Երուսաղեմ՝

Ավետյաց Երկիր ուխտագնացության (գնալու հրաշքը այսպիս եղավ. փետրվարյան մի օր՝ Երեկոյան, համացանցում տեսա այն կարմրած քարը, Երբ Գողգոթայում Տեր Հիսուսը խաչված՝ Նրա Արյունը կաթալով՝ ներծծվել էր հողի մեջ և գետնի տակի սպիտակ քարերը ներկվել էին Տերունական Արյան գույնով։ Ու նայելով այդ քարին՝ անձայն արտասվեցի ու սրտումս ասացի. «Տե՛ր Հիսուս, տեսնես իմ կյանքում կինի՞ մեկ օր, որ ես էլ գամ Քո սուրբ Վայրերը ու ծնկաչոք Քո քարերը համբուրեմ, Քո հպված տեղերին ես էլ հպվեմ»։ Անցավ Երկու օր, և ինձ ծանոթ մի հավատացյալ կին զանգահարեց ու ասաց. «Աստված ինձ ասել է, որ քեզ դրամ ուղարկեմ, որ գնաս Երուսաղեմ»։ Աննկարագրելի ուրախություն և զարմանք ապրեցի այդ պահին. օրհնյալ լինի այդ կինը իր ընտանիքով, այնքան շնորհակալ եմ, և հազար փառք Տիրոջը, որ լսեց իմ անձայն սիրո աղաղակը իր հանդեպ ու կատարեց Երազանքս, իհարկե, Սուրբ Տիրամոր անկասելի բարեխոսությամբ, և մի օր Գեթսեմանիի պարտեզի մոտ գտնվող «Հիսուսի վերջին աղոթքի եկեղեցու» աստիճանների մոտ, Երբ նկարվեցինք, նկարի մեջ Տիրամոր հրաշագործ մեղալի օվալը արտապատկերվեց, բայց որը ես նկատեցի Երկու ամիս անց միայն՝ Հայաստանում նկարները

**Թերթելիս:** Այդ հրաշքը տեսնելուց երկու օր հետո, ինձ գրեց մի անծանոթ տղա Վիեննայից և հարցրեց թե կուզենայի՞՝ արդյոք սուրբ Տիրամոր հրաշագործ մեղալներից։ Ուղղակի ապշած էի և համաձայնեցի՝ հետո իմանալով, որ Մխիթարյան միաբանության համայնքից է (ուղարկել էր նաև Մխիթար Աբբահոր կենսագրական գրքույկը և Վիեննայի 200 տարեկան Մխիթարյան միաբանության մասին գրքույկ)։ Նա Տիրամոր հրաշագործ մեղալներն առաջին անգամը ուղարկեց հենց հուլիսի 18-ին, լրիվ պատահական համընկնումով, չնայած որ պատահական ոչինչ չի լինում. այն Աստծո օրագրից մեզ համար ծրագրված մի էջ համարենք։ Դա էլ բաժանեցի, այնուհետև ընկերուհիս Լիբանանից ուղարկեց, որ սահմանին կանգնած զինվորներին ուղարկենք։ Օրհնեց քահանան և դա էլ բաժանեցի։ Այս գրառման պահի դրությամբ՝ մոտ 1400 հատ արդեն բաժանված է և կարծում եմ, որ Աստծո Կամոք կլինի շարունակական, մինչդեռ Սուրբ Տիրամայրը սկսել էր փոխանցել մի քանի հատիկից։ Աստծո անսահման Ողորմությամբ լցվեն և օրհնյալ լինեն բոլոր նրանք, ովքեր օգնական եղան այս աստվածային բարի գործում, թող Աստծո և սուրբ Տիրամոր օրհնությամբ շատերը դեռ բաժանենք և թող շատ հրաշքներ ու բժշկություններ լինեն Սուրբ Կույսի բարե-

Խոսությամբ, ովքեր որ Նրան սրտանց հավատում,  
վստահում են և պաշտպանությանն են դիմում,  
քանզի Տեր Հիսուսի և Սուրբ Աստվածամոր Սրտերն  
իրարից անբաժան են և որտեղ Տիրամայրն է կանգ-  
նած, այնտեղ նաև Տեր Հիսուսն է, և հայոց աշ-  
խարհն ու հայ ժողովուրդն էլ պաշտպանված է  
Նրանց Սուրբ Սրտերի գորությամբ:



## ՀԱ - ՍԱԼԵՏԻ ՏԵՐԱՄԱՅՐԸ

ՀԱ - ՍԱԼԵՏԻ ԳԱՂՏՆԻՔԸ

(1846թ. Լա - Սալետ, Ֆրանսիա)



1846թ. Սուլը Տիրամայրը Ֆրանսիայում իր երեման վայր է ընտրում լեռնային շրջան և երկու տեսանող հովիվ երեխաների՝ 15-ամյա Մելանիին և 11-ամյա Մաքսիմենին, որոնք իրենց ողջ կյանքում մնում են Աստվածամոր հավատարիմ պատգամաբերները: Երեխաները ծննդով իզեր շրջկենտրոնին պատկանող Լա - Սալետից 8 կմ հեռու գտնվող Քոր գյուղից էին, բայց միմյանց չէին ճանաչում, մինչև երեման նախորդ օրը:

Եվ ահա 1846թ. սեպտեմբերի 19-ին փոքրիկները հոտի հետ բարձրանում էին գեղատեսիլ ալպյան լեռները: Սար տանող ճանապարհը մինչև Լա-Սալետի հին եկեղեցին այն ժամանակներից մինչև

մեր օրերը անհնար է մեքենայով բարձրանալ։  
Որպես փոխադրամիջոց՝ հիմնականում ծառայում  
էին անասունները։ Եկեղեցուց հետո սկսվում է  
աստիճանաբար ավելի դժվարացող վերելք։ Երեխա-  
ները եկեղեցու կողքի արահետով բարձրանում են  
սար։ Կեսօրին եկեղեցու զանգը հնչում է «Հրեշ-  
տակային Ողջույն»-ի համար։ Կովերի ջուր խմելու  
ժամն էր։ Անասուններին տանում են Շոմուար  
կոչվող արոտավայրը՝ Գարգա սարի ստորոտ, այն-  
տեղ թողնում արածելու, իսկ իրենք իջնում են  
առվակի մոտ և նստում հաց ուտելու։

Հանկարծ Մելանին տարօրինակ պայծառություն  
է նկատում։ Տեսնում է աչք շլացնող լուսավոր մի  
գոմդ, որին հնարավոր չէր երկար նայել։ Կարծես  
արևն ընկած լիներ, թեպետ պայծառ երկնքում  
շողում էր։ Ընկերոջ ուշադրությունն է հրավիրում։  
Մաքսիմենը գոչում է որտե՞ղ է։ Մելանին ցույց է  
տալիս այն փոսը, որտեղ քնել էին։ Մանչուկը  
վախեցած, ցուալը ամուր բռնած ձեռքին, մոտենում  
է։ Պայծառությունը շարժվում է ու պտտվում։ Մի  
նստած կին է երեւում. դեմքը ձեռքերի մեջ,  
արմունկները՝ ծնկներին, խորը կսկիծի մեջ։ Գեղեցիկ  
ծիկինը վեր է կենում։ Երեխաները չեն շարժվում։  
Նրանց իր մոտ է կանչում։ «Երեխանե՛ր, մի՛  
վախեցեք, մոտեցե՛ք։ Ես այստեղ եմ՝ ձեզ մեծ

## Նորություն Հայտնելու»:

Հանգստացած առաջանում են ու նայում նրան: Լացում էր մի մոր նման, որի երեխաներին ծեծել էին ու սարերում էր թաքնվել: Գեղեցիկ կինը լուսավոր էր ու բարձրահասակ, շրջանի գեղջուկների նման հագնված. ճակատին իջնող սպիտակ գլխաշոր՝ երիզված գույնզգույն՝ դեղին, կապույտ և կարմիր վարդերով, որոնք կարծես ծփում էին գլխի շուրջը: Հագուստը ճերմակ էր, լայն թեզանիքներով: Գոգնոցը դեղին կամ ոսկեգույն էր: Ուսնոցը նույնապես զարդարված էր վարդերով: Ոտքին սպիտակ կոշիկներ էին, գուլպաները՝ դեղին: Ուսնոցի ծաղիկների կողքին դեղին շղթա էր: Պարանոցից կախված էր երկար խաչով նուրբ շղթա՝ համարյակ ծրծքի վերին մասից մինչև խաչված ձեռքերը: Խաչի թևերին մի կողմում աքցան էր, մյուսում՝ մուրճ:

Մելանին պատմում է, որ այդ պահին ինքը ոչինչ չէր մտածում, չէր էլ ենթադրում, թե ով էր այդ լուսավոր էակը: Գեղեցիկ Տիկինը սկսում է խոսել.

«Եթե իմ ժողովուրդն ինձ չանսա, ստիպված կլինեմ բաց թողնել իմ Որդու բազուկը: Այնքան ուժեղ է և ծանր, որ այլևս չեմ կարողանում պահել: Որքա՞ն ժամանակ է, տառապում եմ ձեր պատճառով: Որպեսզի Որդիս ձեզ չլքի, ստիպված եմ անընդհատ աղոթել ձեզ համար, իսկ դուք չեք

**աղոթում:** «Որքան էլ աղոթեք, ինչ էլ անեք, չեք հատուցի այն Վիշտը, որ կրել եմ ձեզ համար: Վեց օր եմ տվել ձեզ աշխատելու և յոթերորդ օրն ինձ եմ պահել, բայց նույնիսկ այն չեք տրամադրում ինձ»: Ահա թե ինչն է այնքան ծանրացնում Որդուս բազուկը: Իսկ կառապաննե՞րը, որոնք առանց Որդուս անունը տալու չեն հայՀոյում: Եթե բերքը փչանա, միայն ձեր մեղքով է: Անցյալ տարի ձեզ ցույց տվեցի այն՝ գետնախնձորի բերքի օրինակով, իսկ դուք այդ բոլորը հաշվի չառաք: Հակառակը, երբ տեսնում էիք, որ փչացել է, հայՀոյում էիք՝ դարձյալ իմ Որդու անունը տալով: Դա կշարունակվի նաև այս տարի, և Սուրբ Ծննդյան տոներին դուք ոչինչ չեք ունենա: Եթե ցորեն ունեք, պետք չէ ցանել: Ինչ ցանեք, կենդանիները կուտեն կամ կվերածվի փոշու: Մեծ սով կլինի. մինչ այդ յոթ տարեկանից փոքր երեխաները ցնցումների մեջ կընկնեն և կմեռնեն իրենց պահողների ձեռքերում: Մյուսներն իրենց մեղքը սովով կքավեն: Ընկույզը փուչ կլինի, իսկ խաղողը կփաթի»:

Այդ պահից Տիկինը շարունակում է խոսել Մաքսիմենի հետ, սակայն Մելանին չի լսում, հետո սկսում է խոսել Մելանիի հետ, մինչ այդ Մաքսիմենը խաղում է մերթ գլխարկով, մերթ քարերով:

Երկու երեխաներին առանձին գաղտնիքներ

փոխանցելուց հետո Աստվածամայրը շարունակում է. «Եթե դարձի գան, քարերն ու ժայռերը կվերածվեն ցորենի կույտերի, իսկ գետնախնձորները կցանվեն հողում: Իսկ դուք լավ աղոթու՞մ եք, երեխանե՛ր», - հարցնում է նրանց:

«Այնքան էլ չէ», - պատասխանում են միաբերան: «Ո՛հ, փոքրիկներս, հարկավոր է առավոտյան և երեկոյան աղոթել. եթե ուրիշ աղոթք չգիտեք, գոնեմեկ անգամ «Հայր մեր» և մեկ անգամ «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ» ասեք: Երբ շատ իմանաք, ավելի շատ աղոթեք: Ամռանը միայն մեծահասակ կանայք են գնում Պատարագի, մյուսները կիրակի օրերն էլ են աշխատում: Զմռանը, երբ անգործությունից չգիտեն ինչ անել, գնում են եկեղեցի և ծաղրում կրոնը: Պահքի շրջանում շների նման մսավաճառների մոտ են գնում...»:

Տիրամայրը վերջում ասում է. «Այս պատգամը, սիրելի՝ փոքրիկներ, կփոխանցե՛ք իմ ժողովրդին»:

Ապա Աստվածամայրը բարձրանում է Գարգասարով. Մելանին պատմում է, որ Աստվածածինը ոչ թե քայլում, այլ սահում էր խոտի վրայով (մոտ 20 սմ): Եվ ապա հանդարտ երկինք է բարձրանում՝ թողնելով լուսավոր պայծառություն, որն անհետանում է: Մելանին մտածում է. «Երեկի մեծ սըրբուհի է»: Մաքսիմենը ասում է, որ եթե նախօրոք

**իմանային, կիսնդրեին իրենց հետը տաներ:**

**Երեկոյան տեղի ունեցածը պատմում են տերերին, ապա գյուղի քահանային ու գյուղապետին:**

**1846-47թթ. սովէ է ընկնում Ֆրանսիայի տարբեր շրջաններում: Քորում, մյուս գյուղերի համեմատ, երեք անգամ ավելի շատ երեխա է մահանում:**

**1851թ.-ին սեպտեմբերի 19-ի այս դեպքի կապակցությամբ Գրենոբլի եպիսկոպոս դը Բրուի-յարը հայտնել է, որ երկու փոքրիկ հովիվներին Լա-Սալետի լեռան Տիրամոր երևումը պարունակում է ճշմարտության բոլոր անհրաժեշտ բնորոշումները և հավատացյալներն ունեն վստահության աներկրայելի հիմքեր:**

**Ինչ վերաբերում է գաղտնիքներին, երեխաները գրում են այն և մոտ 30 տարի անց հանձնում Հռոմի Պիոս Թ. Պապին:**

**Երբ ծանոթ մարդիկ Մելանիին հարցնում էին այդ գաղտնիքների մասին, նա պատասխանում էր. «Լա - Սալետի գաղտնիքն եք ուզում իմանալ.**

**Եթե ԶԱՊԱՇԽԱՐԵՔ, ԲՈԼՈՐԴ ԿԿՈՐԾԱՆՎԵՔ»:**

## **Լա-Սալետի Գաղտնիքը**

**Սուրբ Տիրամայրը Լա - Սալետի երևման ընթացք-ում երկու անգրագետ երեխաներին գաղտնիք է հայտնում: Առայժմ հրապարակվել է միայն Մելանիի գաղտնիքը:**

Մարդարեռություն է ողջ աշխարհի համար՝ մինչև  
Վերջին ժամանակների ավարտի օրերը, որ շուտով  
պիտի լինի, և այդ շուտովը մեր շուտովն է,  
ապաշխարենք, ինչպես Տեր Հիսուսն ասաց.  
«Արագացրե՛ք, թե չէ, չեք հասցնի» (2022թ. Ա.Հ.):

«Մելանի, քեզ Իմ հայտնածը ընդմիշտ գաղտնիք  
չի մնա, այն կարող ես հրապարակել 1858  
թվականից հետո: Վարդապետները՝ Որդուս նախա-  
րարները, իրենց անբարո վարքով և անարգանքով  
և պղծությամբ, դրամասիրությամբ, փառասի-  
րությամբ և հաճոյասիրությամբ սուրբ խորհուրդ-  
ները (Եկեղեցական խորհուրդները) կատարելիս  
դարձել են պիղծ աղքանոցներ: Այո՛, վարդապետ-  
ները վրեժ են պահանջում, մինչդեռ վրեժը կախված  
է նրանց գլխավերեռում: Վա՛յ վարդապետներին և  
Աստծուն նվիրված մարդկանց, որոնք իրենց ան-  
հավատարմությամբ և անսանձ բարքերով դարձյալ  
խաչում են Իմ Որդում: Աստծուն նվիրված մեղքերը  
աղաղակում են առ երկինք և վրեժի կոչում, իսկ այդ  
վրեժը նրանց դռների առաջ է, որովհետև այլևս չկա  
մարդկանց ողորմություն և ներում չնորհող որևէ  
մեկը: Զկան այլևս շռայլ հոգիներ, չկա այլևս  
արժանի մեկը, որ աշխարհի համար անարատ Զոհ  
կմատուցի Հավերժին:

Աստված անսպասելիորեն կհարվածի: Վա՛յ երկրի

բնակիչներին։ Աստված կթափի իր զայրույթը, և ոչ  
ոք չի կարողանա խուսափել այդ ցավից։ Պետերը՝  
Աստծո ժողովրդին առաջնորդողները, արհամարհել  
են աղոթքն ու ապաշխարությունը, և Սատանան  
մթագնել է նրանց միտքը. նրանք դարձել են այն  
թափառող աստղերը, որոնց ծեր Սատանան պոչով  
կառաջնորդի դեպի մահ։ Աստված թույլ կտա Օձին  
բաժանումներ դնել բոլոր հասարակությունների և  
ընտանիքների կառավարողների միջև. նրանք մարմ-  
նական և հոգեկան տառապանքներ կլրեն։ Աստված  
կլքի մարդկանց և պատիժներ կուղարկի, որոնք  
իրար կհաջորդեն 35 տարի շարունակ։

Հասարակությունն ահավոր պատուհասների և  
մեծագույն աղետների շեմին է։ Մարդկությունը թող  
սպասի, որ նրան երկաթե գավազանով կառավարեն  
ու խմի Աստծո զայրույթի բաժակից։

Թող Որդուս փոխանորդ Պիոս Թ. գերագույն  
քահանայապետը 1859թ. - ից հետո այլևս Հռոմից  
դուրս չգա։ Բայց թող հաստատակամ ու առատա-  
ձեռն լինի սիրո և հավատի զենքերով պայքարի. Ես  
նրա կողքին կլինեմ։ Թող Պապը զգույշ լինի նա-  
պոլեոնից. նա երկերեսանի է, ուզում է միա-  
ժամանակ և՛ Պապ, և՛ կայսր դառնալ։ Շուտով  
Աստված կհեռանա նրանից։ Նա այն արծիվն է, որ  
ձգտելով անընդհատ վեր բարձրանալ, կընկնի այն

սրի վրա, որն ուզում էր օգտագործել՝ մարդկանց բարձրանալ ստիպելու համար:

Իտալիան կպատժվի իր փառասիրության պատճառով՝ ցանկանալով տերերի Տիրոջ լուծը թոթափել: Ուստի նա պատերազմի մեջ կմտնի և արյունը ամեն կողմից կհոսի, եկեղեցիները կփակվեն կամ կապականվեն: Վարդապետները, կրոնավորները կվռնդվեն. նրանց մահապատժի կենթարկեն, այն էլ՝ դաժան ձեռվ: Շատերը կուրանան հավատը, և ճշմարիտ կրոնից հեռացող վարդապետների ու կրոնավորների թիվը շատ մեծ կլինի, նրանց մեջ նույնիսկ եպիսկոպոսներ կլինեն:

Թող Պապը զգուշանա հրաշք գործողներից, որովհետեւ ժամը եկել է, երբ ամենազարմանալի հրաշքները տեղի կունենան երկնքում և երկրի վրա:

1864թ. -ին Լյուցիֆերը բազմաթիվ դեերի հետ ազատ կարձակվի Դժոխքից. նրանք աստիճանաբար կոչնչացնեն հավատը և անգամ Աստծուն նվիրված մարդկանց աչքերը այնպես կկուրացնեն, որ **ԲԱՑԻ ՀԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԻՑ**, ուրիշ կերպ այդ մարդկանց հնարավոր չի լինի հրաժարվել չար հրեշտակների ոգուց: Բազմաթիվ կրոնական միաբանություններ լրիվ կկորցնեն հավատը և անդամներ կուրանան:

Երկրի վրա կշատանան վատ գրքերը և խավարի հոգիները համաշխարհային ազատություն կսփռեն

այն ամենի հանդեպ, ինչը կապված է Աստծո ծառայության հետ։ Շատ մեծ ուժ կունենան բնության վրա։ Եկեղեցիներ կլինեն այս հոգիների ծառայության համար։ Այդ վատ հոգիների միջոցով մարդիկ կտեղափոխվեն մի վատ վայրից մյուսը, նույնիսկ վարդապետները, որովհետև նրանք չեն առաջնորդվում Ավետարանի ոգով, որը խոնարհության, սիրո և Աստծո փառքի եռանդուն ոգի է։ Հարություն կտան մահացածների և արդարների այսինքն՝ մահացածները կստանան երկրի վրա ապրած արդար հոգիների տեսք, որպեսզի ավելի լավ գայթակղեն մարդկանց։ այսպես կոչված սուտ հարություն առնողներ, որոնք այլ բան չեն, եթե ոչ մարդկային կերպարանք ընդունած այդ կերպարանքների ներքո թաքնված դեեր, կքարոզեն այլ ավետարան՝ Քրիստոսի Ավետարանի հակապատկեր՝ հերքելով երկնքի և անիծված հոգիների (դժոխքի դատապարտված հոգիներ) գոյությունը։ Այս հոգիները կերեան կարծես իրենց մարմիններին միացված։

Ամենուր արտասովոր հրաշքներ կլինեն, որովհետև իսկական հավատը մարել է, և կեղծ լույսն է լուսավորում աշխարհը։ Վա՛յ եկեղեցու իշխանավորներին, որոնք զբաղված են միայն հարստություն դիզելով, միայն իշխանությունը պահպանելով և

**ամբարտավանությամբ ղեկավարելով։**

Որդուս հետեւորդը շատ կտառապի, որովհետեւ որոշ ժամանակ եկեղեցին շատ կհալածվի. խավարի ժամանակներ կլինեն, և եկեղեցին մեծ տագնապի մեջ կլինի։

Աստծո ճշմարիտ հավատը կմոռացվի՝ յուրաքանչյուր անհատ ուզենալով անկախ առաջնորդվել և առաջնորդել իր նմաններին։ Կոչնչանան եկեղեցական և աշխարհիկ իրավունքները, ամեն տեսակի կարգ ու կանոն և արդարություն կոտսահարվեն. կտեսնեք միայն մարդասպանություն, ատելություն, նախանձ, սուտ և անհամաձայնություն՝ առանց հայրենիքի և ընտանիքի նկատմամբ սիրո։

Պապը շատ կտառապի։ Նրա հետ կլինեմ մինչեւ վերջ՝ ընդունելու նրա զոհողությունը։ Զարերը բազմիցս կփորձեն վտանգել նրա կյանքը՝ չկարողանալով, սակայն, կարճացնել նրա կյանքի օրերը. բայց ո՛չ նա, ո՛չ էլ նրա հաջորդը, որը երկար չի ղեկավարի, չեն տեսնի Աստծո եկեղեցու հաղթանակը։ Աշխարհի բոլոր կառավարությունները նույն ծրագիրը կունենան, որի նպատակը կրոնական սկզբունքների ոչնչացումն ու վերացումն է՝ դրանք փոխարինելով նյութապաշտությամբ, անաստվածությամբ և ամեն տեսակի անառակության հոգեբանությամբ։ 1865թ. կտեսնենք սուրբ վայրերի

**ոչնչացում:** Վանքերում եկեղեցու ծաղիկները կթառամեն և Սատանան սրտերի տիրակալ կդառնա: Թող կրոնական միաբանությունների առաջնորդները զգուշանան այն մարդկանցից, որոնց ընդունում են, որովհետև Սատանան իր խորամանկությունը գործի կղնի կրոնական միաբանություններում ընդունել տալու մեղքին նվիրված մարդկանց, քանզի խառնակության և մարմնական հաճույքների սերը կտարածվի ամբողջ երկրով:

Ֆրանսիան, Իսպանիան, Իտալիան և Անգլիան կպատերազմեն: Արյունը կհոսի փողոցներով. Փրանսիացին դուրս կգա Փրանսիացու դեմ, իտալացին՝ իտալացու դեմ, հետո կլինի ընդհանուր պատեռազմ, որը սարսափելի կլինի: Որոշ ժամանակ Աստված չի հիշի և՝ Ֆրանսիան, և՝ Իտալիան, որովհետև Քրիստոսի Ավետարանը կմոռացվի: Զարացածները կօգտագործեն բոլոր հնարավորությունները. իրար կսպանեն, կկոտորեն՝ անգամ տան ներսում: Կայծակնային սրի Նրա առաջին իսկ հարվածից լեռներն ու ամբողջ երկիրը ահից կդողան, որովհետև խառնակությունն ու մարդկանց ոճիրները ծածկել են երկնակամարը: Փարիզը կհըրկիզվի, իսկ Մարսելը կկլանվի: Բազմաթիվ մեծ քաղաքներ երկրաշարժից կցնցվեն և կու կդնան: Մարդիկ կհավատան, որ ամեն բան ավարտված է.

մարդասպանությունից բացի ուրիշ ոչինչ չեն տեսնի, կլսեն միայն զենքերի շաչյուն և հայհոյանք:

Արդարները շատ կտառապեն. նրանց աղոթքները, զոհողություններն ու արցունքները կբարձրանան մինչև երկինք, և Աստծո ժողովուրդը ներողամտություն ու ողորմություն կխնդրի, իսկ ինձանից բարեխոսություն և օգնություն կաղերսի: Այդ ժամանակ Հիսուս Քրիստոս, արդարների նկատմամբ մեծ ողորմածությամբ և արդարությամբ, կհրամայի հրեշտակներին մահվան դատապարտել բոլոր թշնամիներին: Հանկարծ Հիսուս Քրիստոսի եկեղեցին հալածողները և մեղքին տրված մարդիկ կմեռնեն, և երկիրը կնմանվի անապատի: Այդ ժամանակ խաղաղություն կտիրի, Աստծո և մարդկանց միջև՝ հաճություն: Հիսուսին կծառայեն, կպաշտեն և կփառավորեն: Սերը կծաղկի ամենուրեք: Նոր թագավորները կինեն եկեղեցու աջ թևը. Եկեղեցին կդառնա ուժեղ, համեստ, բարեպաշտ, ոգեշունչ և Հիսուս Քրիստոսի առաքինությունների կրկնօրինակը: Ամեն տեղ Ավետարանը կքարոզվի և մարդիկ կամրապնդվեն իրենց հավատքի մեջ, որովհետեւ միասնություն կլինի Աստծո մշակների միջև և մարդիկ կապրեն Աստծո երկյուղով:

Սակայն մարդկանց միջև խաղաղությունը երկար չի տեսի: 25 տարվա առաջ բերքը մարդկանց

**կմոռացնի, որ աշխարհում բոլոր ցավերի պատճառը մեղքն է:**

**Հակաքրիստոսի նախակարապետը իր զանագան ազգություններից հավաքած խմբերով կպայքարի ճշմարիտ Քրիստոսի՝ աշխարհի միակ Փրկչի դեմ:** Շատ արյունահեղություն կդորձի՝ կամենալով վերացնել աստվածապաշտությունը, որպեսզի ինքն Աստված համարվի:

**Բացի ընդհանուր ժանտախտից և սովից, բազմաթիվ վերքեր կխոցեն աշխարհը. պատերազմներ կլինեն մինչև վերջին պատերազմը, որը կծագի տասը հակաքրիստոնյա թագավորների պատճառով, և նրանք բոլորը նույն նպատակը կունենան. նրանք կտիրեն աշխարհին: Մինչ այս, թվացյալ խաղաղության ժամանակաշրջան կլինի, որի ժամանակ բոլորը միայն զվարճալիքների մասին կմտածեն: Զարերը կնվիրվեն իրենց մեղքին:**

**Սակայն սուրբ Եկեղեցու զավակները՝ հավատի որդիները և ինձ իսկապես նմանվողները կաճեն Աստծո սիրո և առաքինությունների մեջ, որոնք ինձ այնքան թանկ են: Երջանիկ են Սուրբ Հոգով առաջնորդվող հոգիները: Կպայքարեմ նրանց հետ մինչև նրանց տարիների բոլորումը:**

**Բնությունը վրեժ է պահանջում մարդկանց համար և սարսում է ահից՝ սպասելով ոճրից կեղտոտված**

**Երկրի ճակատագրին:** Դողա՛ Երկիր, և դու՛ք, ովքեր  
ուխտ եք անում ծառայել Հիսուս Քրիստոսին, իսկ  
ներքուստ ձեզ եք պաշտում: Դողացե՛ք, որովհետեւ  
սուրբ վայրերը ապականված են. բազմաթիվ վանքեր  
այլևս Աստծո տուն չեն, այլ Ազմող դեկի հետևորդ-  
ների անդաստան:

Ահա այդ ժամանակ է, որ կծնվի Քրիստոսի  
հակառակորդը երրայեցի միանձնուհուց՝ սուտ կույ-  
սից, որ հաղորդակցվում է Հին Օձի՝ անմաքրության  
վարպետի հետ: Նրա հայրը եպիսկոպոս կլինի:  
Ծնվելով՝ նա անեծքներ կթափի, ատամներ կունենա.  
մի խոսքով, մարմնացյալ Սատանա կլինի: Սարսա-  
փազդու ճիշեր կարձակի, հրաշքներ կգործի, կսնվի  
միայն անմաքրությամբ: Կունենա եղբայրներ, որոնք  
թեպետ մարմնացյալ Սատանա չեն, սակայն չարի  
զավակներ են: Տասներկու տարեկանից աչքի կընկ-  
նեն տարած հաղթանակներով. շուտով յուրաքան-  
չյուրը Դժոխքի լեգեռնների (Հին Հռոմում մեկ  
լեգեռնը կազմված էր 5000-ից մինչև 8000 զին-  
վորից) մի բանակ կգլխավորի:

**Եղանակները կփոխվեն:** Երկիրը միայն վատ  
պտուղներ կտա, աստղերը սովորականի պես չեն  
շարժվի, լուսինը պարզապես աղոտ կարմրավուն  
լույս կունենա: Կրակն ու ջուրը Երկրագնդին կըծ-  
կանքային շարժումներ կտան և ահոելի երկրա-

շարժեր, որոնք կլանեն սարեր, քաղաքներ և այլն:

Հոռմը կկորցնի հավատը և կդառնա Հակա-քրիստոսի նստավայր: Օդի սատանաները Հակա-քրիստոսի հետ երկրի վրա և երկնքում մեծ հրաշքներ կգործեն և մարդիկ ավելի ու ավելի կմոլորվեն: Աստված տեր կկանգնի իր հավատարիմ ծառաներին և կամքի ուժ ունեցողներին: Ամեն-ուրեք Ավետարանը կքարոզվի, բոլոր ազգերն ու ժողովուրդները հասու կլինեն Ճշմարտությանը:

**ԵՏԱՊ ԿՈ՛Չ ԵՄ ԱՆՈՒՄ ԵՐԿՐԻՆ:** Կանչու՞մ եմ երկնքի Տիրակալ կենդանի Աստծո իսկական աշակերտներին: Կանչու՞մ եմ մարդացած Քրիստոսին՝ միակ և ճշմարիտ Փրկչին իսկական նմանվողներին: Կանչու՞մ եմ իմ զավակներին, իմ իսկական նվիրյալներին, որոնք ինձ նվիրվեցին, որպեսզի նրանց առաջնորդեմ դեպի իմ Աստվածային Որդին, այսինքն նրանց, որոնց իմ գրկում եմ պահում, նրանց, որոնք իմ ոգով ապրեցին: Ի վերջո, կո՛չ եմ անում Վերջին ժամանակների առաքյալներին՝ Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտներին, որոնք ապրում են՝ արհամարհելով աշխարհն ու իրենց անձը, աղքատության և խոնարհության մեջ, խոնարհության և լուռների մեջ, աղոթքի և մա-հացուցման (ծոմապահության, զոհողության) մեջ, ողջախոհության և Աստծո հետ միության մեջ,

տառապանքի մեջ և անծանոթ են աշխարհին։ Ժամանակն է, որ դուրս գան և լուսավորեն Երկիրը։ Գնացե՛ք ու երևացե՛ք՝ որպես Իմ սիրելի որդիներ։ Ես ձեզ հետ և ձեր մեջ եմ, միայն ձեր հավատը թող լինի լույսը, որ կլուսավորի դժբախտության այս օրերը։ Թող ձեր եռանդը ձեզ դարձնի կարոտ Հիսուս Քրիստոսի փառքին ու պատվին։ Պայքարե՛ք, լույսի՝ զավակներ, որքան էլ սակավաթիվ լինեք, որովհետեւ ահա ժամանակների ժամանակը, Վերջի ավարտը։

Եկեղեցին կխավարի, աշխարհը սարսափի մեջ կլինի։ Բայց ահա ենովքն ու եղիան՝ լի Աստծո Հոգով, Աստծո Զորությամբ, կքարոզեն և բարի կամեցող մարդիկ կհավատան Աստծուն, և շատ հոգիներ կմխիթարվեն։ Սուրբ Հոգու առաքինությամբ մեծ առաջադիմության կհասնեն և Հակաքրիստոսի դիվական սխալները կդատապարտեն։

Վա՛յ Երկրի բնակիչներին։ Արյունահեղ պատերազմներ և սով կլինի, բորոտություն և վարակիչ հիվանդություններ. ահռելի կենդանիների չափ կարկուտով անձրև կտեղա, որոտը կցնցի քաղաքները, Երկրաշարժերը կլանեն Երկիրը, Երկնքում ձայներ կլսվեն, մարդիկ գլուխները պատին կտան. մահ կկանչեն, իսկ մահը կտանջի նրանց։ Ամենուրեք արյուն կհոսի։ Ո՞վ կհաղթահարի, Եթե

Աստված չպակասեցնի փորձության ժամանակը։ Արյունով, արցունքներով և արդարների աղոթքներով Աստված կների։ Ենովքն ու Եղիան մահվան կդատապարտվեն։ Կռապաշտ Հռոմը կանհետանա, կրակ կթափվի երկնքից ու երեք քաղաք կայրի։ Ամբողջ տիեզերքում սարսափ կտիրի, և շատերը կշահան, որովհետև չեն պաշտել իրենց մեջ ապրող կենդանի Քրիստոսին։ Ժամանակն է. արեւ կխավարի, միայն հավատը կապրի։


Հասել է ժամը. Անդունդը բացվում է։ Ահավասիկ թագավորը՝ խավարի թագավորը։ Ահա Գաղանը ենթակաների հետ, ինքն իրեն փրկիչ է կոչում։ Հպարտությամբ կբարձրանա օդ՝ երկինք գնալու։ Սակայն կխեղդվի Միքայել Հրեշտակապետի սրից և կընկնի։ Ու երկիրը, որ **Յօր շարունակ** զարդացման մեջ էր, կբացի իր կրակը։ Հավիտյան կսուզվի նա իր հետևորդների հետ Դժոխքի հավիտենական անդունդներում։

Ապա ջուրն ու կրակը կմաքրեն երկիրը մարդու հպարտության գործերից, և ամեն ինչ կսկսվի նորից։ Տիրոջը կփառաբանեն ու կծառայեն»։



# ԼՈՒՐԴԻ ՏԵՐԱՄԱՅՐԸ

(1858թ. Լուրդի, Ֆրանսիա)



1858թ. Ֆրանսիայում՝ Լուրդում, Սուրբ Տիրամայրը կես տարվա ընթացքում 18 անգամ երեսում է տասնչորս տարեկան Բեռնադետ Սուրբի ըռտին:

Աղջկա ընտանիքը շատ աղքատ էր ապրում: Մի օր էլ, 1858թ. փետրվարի 11-ին, Բեռնադետը քրոջ՝

Տուանետի հետ գնում է փայտ հավաքելու, և ճանապարհին նրանց է միանում քրոջ ընկերուհին՝ Ժանն Աբատին։ Մառախլապատ օր էր, մուայլ և ցուրտ. Բեռնադետի մայրը խնդրում է, որ աղջիկը տաք հագնվի և զգույշ լինի, գլուխը ծածկում է սպիտակ գլխաշորով. Նա տառապում էր թոքային հեղձուկից (ասթմա): Շնչահեղձության նոպաներից հետո լինում էր անուժ և թույլ՝ վիշտ ու վախ պատճառելով մորը, իսկ հետագայում՝ միաբանության քույրերին։ Եվ ահա ճանապարհին հանդիպում են մի պառավի, որը նրանց խորհուրդ է տալիս գնալ Մասարիել, որտեղ Գավ գետի ջրերը միախառնվում են Սավի ջրաղացի առվի հետ։ Դա շատ հեռու չէր։ Անցնում են կամուրջը և դաշտով ուղղվում դեպի ժայռոտ Մասարիել, որը նրանցից բաժանվում էր ընդամենը մեկ առվով։ Տուանետը և Ժաննը, տրեխները նետելով առվի դիմացի ափը, ոտարբիկ մտնում են շատ սառը ջրի մեջ։

Բեռնադետը վարանում է. չէ՞ որ հարբուխով հիվանդ էր։ Քույրն առաջարկում է օգնել, բայց նա մերժում է։ Ոտքերին բրդե գուլպաներ են։ Ակսում է հանել. Ժամը 12:30-ն է։ Բեռնադետը կանգնած էր մեջքով դեպի Լուրդի հին ամրոցը, աջ կողմից Գավի ջրերն էին հոսում, ձախից առվի դիմացի քարայրն էր, որն այդ ժամանակ համարյա լցված էր ավազով

և քարակույտերով։ Քարայրից վեր էսպելիվգի անտառներն են։

«Հազիվ էի մի գուլպան հանել, երբ լսեցի քամու շառաչ, այնպես, ինչպես լսվում է փոթորիկի ժամանակ։ Գլուխս թեքեցի դաշտի կողմը և տեսա, որ ծառերը բացարձակապես չեն շարժվում։ Քարայրի կողմում աչքիս մորենու ճյուղերը շարժվել էին, բայց ուշադրություն չդարձրեցի։

Շարունակեցի գուլպաս հանել և հազիվ էի ոտքս դրել ջրի մեջ, երբ աղմուկը լսեցի դիմացից։ Բարձրացրեցի աչքերս և տեսա մորենու և ճյուղերի կույտը, որոնք օրորվում էին, ալեծուփ, անմիջապես քարայրի մուտքից վերև, մինչդեռ շուրջս ոչինչ չէր շարժվում։ Ճյուղերի հետեւի մասում՝ բացվածքում, հանկարծ տեսա երիտասարդ սպիտակ աղջիկ, իմ հասակին, ով ինձ բարեեց գլխի թեթև շարժումով։ Նույն պահին ձեռքերը տարածեց՝ միաժամանակ բացելով ափերը։ Նրա աջ ձեռքից Վարդարան էր կախված։ Վախեցա ու հետ-հետ գնացի։ Ուզում էի երկու փոքրերին կանչել, բայց չհամարձակվեցի։ Աչքերս մի քանի անգամ տրորեցի. կարծում էի, թե աչքիս էր երեսում։ Աչքերս վերև բարձրացնելով՝ տեսա, որ երիտասարդ աղջիկը՝ լի չնորհով, ժպտում էր ինձ և կարծես իր մոտ էր կանչում։ Բայց դեռ վախենում էի։ Զնայած քիչ անց վախս անցել էր,

**որովհետև շարունակում էի նայել նրան:**

Մեջս աղոթելու ցանկություն առաջացավ: Զեռքս տարա գրպանս և հանեցի Վարդարանս (որ միշտ ինձ հետ էր): Ծնրադրեցի, ուզում էի խաչակնքվել, չկարողացա: Զեռքս ինձ չէր ենթարկվում: Երիտասարդ աղջիկը շարժվեց և թեքվեց իմ կողմը: Այս անգամ **մեծ Վարդարան ուներ ձեռքին:** Նա խաչակնքեց, կարծես ուզենար աղոթել: Զեռքս դողում էր: Դարձյալ փորձեցի խաչի նշանն անել: Այս անգամ ստացվեց: Դրանից հետո էլ չվախեցա: Վարդարանս էի աղոթում: Աղջիկը սահեցնում էր Վարդարանի հատիկները, բայց շուրջերը չէին շարժվում: Վարդարանը աղոթելիս՝ որքան հնարավոր էր, դիտում էի նրան: Զգեստը սպիտակ էր, իջնում էր մինչև ոտքերը, որոնց ծայրերն էին միայն երեսում: Զգեստը մինչև պարանոցը փակ էր, որը սպիտակ երիզ ուներ: Սպիտակ քողը, որ ծածկում էր գլուխը, իջնում էր ուսերով և թևերով մինչև ոտքերի ծայրը: Թուրաքանչյուր ոտքին դեղին վարդ տեսա: Զգեստի գոտին կապույտ էր և մինչև ծնկներն էր կախվում: Վարդարանի շղթան դեղին էր, իսկ հատիկները՝ սպիտակ, խոշոր և իրարից հեռու:

Երիտասարդ աղջիկը կենդանի էր, շատ երիտասարդ և լույսով պարուրված: Երբ ավարտեցի Վարդարանս, նա ինձ ժպիտով ողջունեց: Ապա, հետ-

Հետ գնալով դեպի խորշը, հանկարծ անհետացավ»:

Տեսիլքը մոտ 15 րոպե է տևում: Ուրախացած թեռնադետը հանում է մյուս գուլպան և անցնում առվի մյուս ափը: Զուրն այնքան սառը չէր, որքան ասում էին աղջիկները: Վերջիններս տեսել էին նրան ծնրադրած աղոթելիս:

«Միայն անխելքն այստեղ կաղոթի: Բավական է միայն եկեղեցում աղոթել», - ասում է Ժաննը: Սկսում են փայտ հավաքել: Բարձրանում են դիմացի բլուրը: Բեռնադեթը, որ հեղճուկի պատճառով միշտ վերջինն էր հասնում, բայց այդ օրը առաջնորդում էր: Հարցնում է, թե քույրն ու ընկերուհին որևէ բան տեսե՞լ են: «Ոչինչ», - պատասխանում են: «Իսկ դու բան տեսա՞ր», - հարցին նա նույնպես ոչինչ է ասում: Տուանետը հասկանում է, սակայն, որ քույրն ինչ որ բան է թաքցնում:

Տուն վերադառնալիս՝ երբ Ժաննը հեռանում է, թեռնադեթը քրոջն ամեն ինչ պատմում է՝ խնդրելով, որ ծնողներին ոչինչ չասի: Բայց նա, չկարողանալով թաքցնել, երեկոյան մորը հայտնում է: Զայրացած Լուիզն աղջկան պատվիրում է այլևս այնտեղ չգնալ: Զայրը՝ Ֆրանսուան, իր հերթին զայրացած բացականչում է. «Մեր մասին երբեք վատ բան չեն խոսել, տես, որ քեզանով չմկավի»:

Հաջորդ օրը, չնայած կրկին Մասաբիել գնալու

**դստեր բուռն փափագին, մայրը կտրականապես  
արգելում է:**

**Փետրվարի 13-ին Բեռնադետը գնում է Լուրդի  
վարդապետներից մեկի մոտ խոստովանության և  
ամեն ինչ պատմում: Եկեղեցականն իր հերթին  
դիմում է ավելի բարձրաստիճան հոգևորականի՝  
Լուրդի ժողովրդապետ Հայր Պեյրամալին և նրան  
պատմում այդ մասին: Ժողովրդապետը, որ ողջա-  
խոհ մարդ էր, հանձնարարում է այդ մասին դեռ  
որևէ մեկին չպատմել:**

**Տուանետը չէր բավարարվել Բեռնադետի տեսիլքի  
մասին միայն մորը պատմելով: Ժանն Աբադիին  
ասելը բավական էր, որ բոլոր ընկերուհիներն իմա-  
նային: Հաջորդ օրը, կիրակի օրվա Պատարագից  
հետո, մի խումբ աղջիկներ մոտենում են Ֆրանսուա  
Սուբիրուին և խնդրում թույլ տալ Բեռնադեթին  
իրենց տանել տեսիլքի վայրը: Հոր վարանումը տես-  
նելով՝ խորամանկ աղջիկները զարմացած են  
ձեանում, թե ի՞նչ կարող է անել Վարդարանն  
աղոթել հարկադրող կինը: Ֆրանսուան համաձայն-  
ում է և թույլ է տալիս:**

**Հնագանդ դուստրը օրհնված ջրի շիշը (օրհնված  
ջուրը չար ուժերին վանելու համար էր) ձեռքին  
վազում է Մասարիել: Վարդարանի առաջին տաս-  
նյակի ավարտին ահա հայտնվում է աղջիկը:**

Բեռնադետը **օրհնված ջուր** է ցանում վրան՝ ասելով. «Եթե Աստծո կողմից չեք, հեռացե՛ք»:

Հետո նա պատմում էր, թե՝ «Որքան ջուրն ավելացնում էի, այնքան շատ էր ժպտում»: Բեռնադետը հափշտակության մեջ էր. ժպտում էր, սակայն հայացքը սևեռվում էր բարձր՝ մորենու կողմը: Մյուս աղջիկները, որոնք ոչինչ չէին տեսնում, սկսում են վախենալ: Բեռնադետին ցնցում են, բայց վերջինս չի արձագանքում: Վազում են մոտակայքում գտնվող Սավիի ջրաղացը օգնություն կանչելու: Զրադացպան Նիկոլոն անմիջապես հասնում է և իր մոտ տանում դեռևս հափշտակության վիճակում գտնվող Բեռնադետին: Մի քանի ըոպե անց, երբ վառարանի դիմաց աղջնակը ուշքի է գալիս, Նիկոլոն հարցնում է. «Ի՞նչ էիր տեսնում»: «Մի սպիտակ կին՝ Վարդարանը ձեռքին: Նա ժպտում էր», - պատասխանում է Բեռնադետը:

Հաջորդ օրվանից, մանավանդ դպրոցում, սկսում են աղջկան հեգնել ու ծաղրել (ի դեպ, դա շարունակվում է մինչև Բեռնադետի վանք մտնելը): Դպրոցի մեծավորուհին հանդիմանում է նրան, իսկ մի միանձնուհի նույնիսկ ապտակում է:

Լուրդում միայն այդ մասին են խոսում: Հատկապես հետաքրքրվում են բարձր խավից երկու կին. Անտուանետ Պեյրեն և տիկին Միլհեն:

**Փետրվարի 18-ին՝ հինգշաբթի օրը, վաղ առավոտյան՝ ժամը 5:00-ի Պատարագից հետո, մի քանի հոգով ուղղվում են դեպի քարայր: Բեռնադետն անմիջապես ծնրադրում է: Տիկինն արդեն այնտեղ էր:**  
**Տիկին Պեյրեն թուղթ ու գրիչ է երկարում Բեռնադետին, որը դիմելով Տիկինը, խնդրում է գրել իր անունը: «Ինչ որ կամեմ, հարկ չկա գրի առնելու»,՝ պատասխանում է Տիկինը և ավելի խիստ շարունակում. «Կպարգե՞ս ինձ 15 օր շարունակ այստեղ գալու չնորհը, և ապա ավելացնում, և այս աշխարհում չեմ խոստանում քեզ երջանկություն, այլ՝ մյուսում»:**

**Փետրվարի 19-ին՝ ուրբաթ օրը Բեռնադետը գալիս է քարայր՝ ձեռքին վառվող մոմ: Տիկինը լուռ է: Այդ օրվանից էլ սկսվում է Լուրդում վառվող մոմերի բարի ավանդույթը:**

**Տիկինը մյուս օրը Բեռնադետին սովորեցնում է մի անձնական աղոթք. տեսիլքի ավարտին Բեռնադետը շատ տխուր է:**

**Կիրակի՝ փետրվարի 21-ին, տեսիլքի վայրում ներկա է 100 մարդ: Տիկինը Բեռնադետին վաղ առավոտյան է երևում: Ոստիկանապետ Ժակոմեն Հարցաքննում և սպառնում է բանտարկել նախ աղջկան, ապա՝ հորը: Ստիպում է պատմել այն, ինչ տեսել և լսել է: Բեռնադետը միայն պատասխանում**

է. «Այն...» («Aquero...»-ն Տիրամոր՝ այդ օրվա արտասանած խոսքն էր):

Փետրվարի 23-ին, երբ ներկա էին 150 մարդ, Տիկինը գաղտնիք է հայտնում միայն Բեռնադետի համար: Ամբոխի մեջ ներկա են երեելի մարդիկ, որոնք պատրաստ էին ծաղրելու «ցածր դասակարգի դյուրահավատներին»: Ներկա են՝ ժողովրդապետի ուղարկած ներկայացուցիչը, դատապաշտպանների նախագահը, պահակային զորքերի պաշտոնյաններ: Եվ ահա սրանք, որ եկել էին ծաղրելու, հանկարծ մնում են ապշահար և հուզվում են, խանդավառվում, որովհետև Բեռնադետից աղոթքի զորություն է ճառագայթում և ծաղրելու համար եկածներին՝ վերածում հավատացյալների ու վկաների: Պարոն էսթրադը, որ անսիրտ մի հարկահավաք էր, պատմում է. «Ահա՝ հանդիսավոր ժամը իմ կյանքի»: Ապշել էի՝ մտածելով, որ ես՝ ծաղրո՛ղս ու հպա՛րտս, թույլտվություն էի ստացել տեղ գրավել երկնքի թագուհու կողքին»:

Մասսաբիել լեռան մոտ իրոք ինչ որ բան էր կատարվում: Ինչ որ մի բան, որ այլևս կանգ չառավ, մինչև որ Քարայրը դրանից հետո դարձավ «Օրհնյալ Քարայր», իսկ Լուրդ քաղաքը՝ «Աղոթքի Մայրաքաղաք»:

Արդյո՞ք սուրբ Աստծուց էր այդ ամենը: Կողմ-

դեմ վեճերը շարունակվում են, բայց երբ հարկա-  
հավաք էսթրադը պատմում է, թե հափշտակու-  
թյան պահին Բեռնադեթը ավելի գեղեցիկ է, քան  
նշանավոր դերասանուհի Ռաշելը, հետաքրքրվող-  
ների թիվն ավելի է մեծանում, այնքան, որ օրինա-  
պահները խոհեմություն են համարում Քարայր  
գնացողներին չարգելել:

Զորեքշաբթի՝ փետրվարի 24-ին, Տիկինն ասում է.  
«Ապաշխարություն, ապաշխարություն, ապաշ-  
խարություն... Աղոթի՛ր մեղավորների դարձի հա-  
մար: Համբուրի՛ր Հողը՝ ի նշան մեղավորներին  
նվիրված ապաշխարության արարքի»:

Հինգշաբթի օրը ներկա էր 300 մարդ: Այդ օրը  
նրանք տարօրինակ բաներ են նկատում: Գլխաշորը  
և ձեռքի մոմը տալով կողքը կանգնածներից մեկին՝  
Բեռնադետը ծնկաչոք մտնում է քարայր, ապա  
գնում դեպի Գավը ու կանգնում է այնտեղ: Հետո  
վերադառնում է դեպի մի քարակույտ, հողը փո-  
րում ու կարծես ափից ջուր խմում: Ապա ուտում է  
մոտակայքում աճող բույսի տերևներից, և երբ  
կանգնում է մշտական տեղում, մասրենու դիմաց,  
դեմքի ստորին մասը ամբողջովին ցեխոտվել էր: Մի  
քանի ըոպե անց, հափշտակության պահն անց-  
նելուց հետո, դեմքը զարմանալիորեն մաքուր էր:  
Բեռնադետը պատմում է. «Նա ինձ ասաց. «Գնա՛,

**Խմի՛ր աղբյուրից ու լվացվի՛ր»: Աղբյուր չգտնելով ուղղվեցի դեպի Գավը: Նա ասաց, որ այնտեղ չէ: Զեռքով ցույց տվեց ժայռի տակ: Գնացի այնտեղ, բայց միայն լպրծուն հող էր: Զեռքս մեկնեցի, բայց չկարողացա վերցնել դրանից: Փորեցի և ջուրը հոսեց, բայց պղտոր: Երեք անգամ թափեցի այն, չորրորդ անգամ վերջապես կարողացա խմել: Նա ինձ ստիպեց ուտել նաև աղբյուրի շուրջն աճած խոտերից ու անհետացավ...»:**

**Բոլորը մտածում էին, որ աղջիկը իրոք խենթ է: Նրանց հարցերին պատասխանելով՝ Բեռնադետն ասում է. «Մեղավորների համար է»:**

**Շաբաթ՝ փետրվարի 27-ին, ներկա է 800 հոգի: Տեսիլքը լուռ է: Բեռնադետը խմում է հետզհետե վարարող աղբյուրի ջրից և կատարում նախորդ անգամվա գործողությունները մեղավորների դարձի համար:**

**Կիրակի՝ փետրվարի 28-ին ներկա է 1150 մարդ: Բեռնադետն աղոթում է, գետինը համբուրում և ծնկաչոք քայլում մեղավորների դարձի համար: Տեսիլքից հետո աղջկան տանում են դատավոր Ռիբի մոտ, որն սպառնում է նրան բանտարկել. սակայն Բեռնադետը խոստացել էր 15 օր այնտեղ գնալ:**

**Առաջին հրաշքը: Երկուշաբթի՝ մարտի 1-ին, ներկա է 1500 հոգի: Նրանց մեջ կա նաև մի քահանա:**

Գիշերը Կատրին Լաթափիկին, մի ուժգին նախազգացումից մղված, (Կատրինն ինն ամսական հղի էր. Քարայրից վերադառնալիս ունենում է իր երրորդ Հովհաննես անունով որդուն) 9 կմ տարածք կտրել անցնելով՝ համնում է Քարայր և անդամալույծ թեր Ընկղմում աղբյուրի մեջ: Թեև ու ձեռքի շարժունակությունը ակնթարթորեն վերականգնվում է:

Հաջորդ օրը՝ մարտի 2-ին, Տիկինն ասում է Բեռնադետին. «Գնա՛, ասա՛ քահանաներին, որ թափորով դան և եկեղեցի կառուցեն այստեղ, և մարդիկ ուխտի դան»:

Աղջիկն այս խոսքերը փոխանցում է Լուրդի ժողովրդապետ Հայր Պեյրամալին, որը պատասխանում է. «Թող նա ասի իր անունը և ձմռան այս օրերին ծաղկեցնի քարայրի մասրենին»:

Չորեքշաբթի՝ մարտի 3-ին, ներկա է 3000 մարդ: Առավոտյան ժամը 7:00-ին Բեռնադետը գնում է քարայր, բայց Տիկինը չի երևում: Դասերից հետո լսում է Տիկնոջը հանդիպելու կանչող ներքին ձայնը: Գնում է քարայր և դարձյալ, ինչպես պահանջել էին հոգևորականները, հարցնում նրա անունը: Պատասխանը ժպիտ է:

Ժողովրդապետը կրկնում է. «Եթե այդ Տիկինը եկեղեցի է ուզում, թող ասի իր անունը և ծաղկեցնի քարայրի մասրենին»:

Հինգշաբթի՝ մարտի 4-ին, ամբոխը սպասում է հրաշքի: Ներկա է 10.000 մարդ: Տիկինը լուռ է: Աղջկա հափշտակությունը տևում է մեկ ժամ: Իսկ ամբոխը հիասթափված է մնում, որովհետեւ սպասում էր մեծ հրաշքներ տեսնել կամ Սրբուհուն հպվել: Բեռնադետը հրաժարվում է մարդկանց առաջարկած դրամից, որովհետեւ՝ «դրամը կրակի պես այրում է», - բացատրում է նա: Հայր Պետրամալը դեռ անդրդվելի է: Ինչպես կարելի է եկեղեցի կառուցել մեկի համար, երբ անունն անդամ չգիտեն:

**Անունը:** Հինգշաբթի՝ մարտի 25-ին, թեպետ այդ օրը ոտքերի տակի մասրենին չի ծաղկում, բայց Տիկինը վերջապես հայտնում է անունը: Բեռնադետը պատմում է. «Աչքերը դեպի երկինք հառեց, միացրեց ձեռքերը... և ինձ ասաց՝ **ԵՍ ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ**»:

Աղջիկն ուրախացած՝ ճանապարհին անընդհատ կրկնելով, որպեսզի չմոռանա, վագում է հայտնելու անունը: Ժողովրդապետը զարմանում է. «Դու Անարատ Հղությունն ես»: «Ես չեմ, հայր սուրբ, Տիկինը, ամբողջ ճանապարհին կրկնեցի անունը»: Եկեղեցականը հուզվում է: Բեռնադետը չէր կարող հորինել, ոչ էլ իմանալ չորս տարի առաջ Պիոս թ. Պապի հաստատած այդ վարդապետությունը: Նա

չգիտեր անդամ, որ այդ աստվածաբանական արտահայտությունը Տիրամորն էր վերաբերում:

**Մոմի հրաշքը:** Չորեքշաբթի, ապրիլի 7-ին, տեսիլքի ընթացքում Բեռնադետը պարտավոր էր մոմը վառած պահել: Հաստ մոմը հալչում է, և բոցը սկսում է լիզել աղջկա ձեռքերը՝ առանց այրելու: Այդտեղ գտնվող բժիշկ Դուգուն հաստատում է երևույթի գերբնական ծագումը:

Լուրդում Մարիամը եկավ հիշեցնելու Ավետարանը, եկավ ինքը, որովհետև «բոլոր կանանց մեջ օրհնյալ կինն է, «Անարատ Հղացյալը», Ումից սկիզբ առավ նոր մարդկությունը: Սրբուհին իր երեսումներով Լուրդը դարձրեց ուխտավայր: Իսկ ինչու՞ էին անհրաժեշտ ուխտագնացությունները այդ վայրում, Աստվածամայրն ի՞նչ էր ուզում հիշեցնել մեզ: Այն, որ մենք այս աշխարհում մշտական բնակարան չունենք, և սկսած Աբրահամից՝ բոլորս էլ պանդուխտներ ենք:

Վերջին տեսիլքը: Հինգշաբթի՝ հուլիսի 16-ին, Բեռնադետը զգում է իրեն քարայր կանչող ներքին ուժը: Բայց ճանապարհին խոչընդոտներ էին: Զիկարողանում առում անցնել՝ քարայրի դիմաց հասնելու համար: Նա գետի մյուս ափից է նայում քարայրին. «Ես այնպես էի զգում, կարծես քարայրի դիմաց էի, նույն հեռավորության վրա, ինչ նախորդ

**անգամներին։ Միայն Սուրբ Կույսին էի տեսնում։ Ամեն ինչից առավել գեղեցիկ Տիկնոջը»։**

1866թ. հուլիսի 4-ին Բեռնադետը Լուրդից մեկնում է Նեվեր, որտեղ սքեմավորվում է Նեվերի Բարեգործական քույրերի միաբանության զգեստով և դառնում Քույր Մարի-Բեռնար։ 1879թ. ապրիլի 16-ին՝ Ավագ Ուրբաթ օրը, 35 տարեկանում, տուբերկուլյոզով հիվանդ Բեռնադետի չարչարանքները նման էին Տիրոջ Զարչարանքներին։ Հիսուսի մահվան ժամին՝ ցերեկվա ժամը 3-ին մոտ, ձեռքերը կրծքին խաչելով, Բեռնադետը աղաղակում է։ «Աստվա՛ծ իմ»։ Այնուհետև, ընկերուհիների աղոթքին ընկերակցելով, երկու անգամ խնդրում է։ «Սրբուհի՝ Մարիամ, Մա՛յր Աստծո, բարեխոսի՛ր մեղավորուհու հոգու համար»։ Ապա ձեռքի նշանով հասկացնում է, թե ծարավ է, խմում է մի փոքր կում, գլուխը բարձին հենելով՝ մահանում է։

Նրա դեղը Վարդարանն էր խաչելությամբ, որ ամուր սեղմած էր կրծքին, և վերջին շունչն է տա-



**Այս, նախքան գնալը երկինք՝ հասնելու իր սիրելի  
Աստվածամորը...**

1925թ. հունիսի 2-ին տեղի է ունենում նրա երանացումը Պիոս Ժ Պապի հայտարարությամբ, իսկ 1933թ. դեկտեմբերի 8-ին նա սրբադասվում է Պիոս ԺԱ. Պապի հայտարարությամբ՝ ապրիլի 16-ը հաստատվելով նրա տոնի օր:

Բեռնադետի մարմինը մնում է անփուտ և իդեալական պահպանված վիճակում. կարծես քնած լիներ, կենդանի և էլաստիկ, իսկ ձեռքի Վար-



դարանը ժանգոտված էր, երբ մարմինը քննվում է 1909-ի սեպտեմբերի 22-ին, այնուհետև, 1919 - ի և 1925 - ի ապրիլին: 1925թ.-ի օգոստոսի 3-ից մինչ այժմ նրա անապական մարմինը պահպանվում է ապակե տապանի մեջ՝ Նեվերի քույրերի մատուռում: Հստ բժշկական եզրակացության՝ մարմինը «բնական մումիացված է»: Միայն մի քանի մասունք է վերցվել: Մեղրամոմի շատ բարակ շերտով պատված են նրա ձեռքերը և դեմքը:

Այսօր տարեկան շուրջ 5 միլիոն ուխտավորներ են այցելում Լուրդ նաև խմելու և վերցնելու Բեռնադետի մատներով փորած փոսից բխած աղբյուրի բժշկարար ջրից, որը առաջին 50 տարվա մեջ անխըտիր բոլորին տվել էր իր պտուղները՝ բժշկվել էր մինիմում 4000 մարդ: Տիրամոր հայտնված տեղին մոտ կառուցված է Աստվածամորը նվիրված սքանչելի շինություն՝ Լուրդի «Անարատ Հղության» տաճարը: Բեռնադետի տեսիլքների հարյուրամյակի կապակցությամբ այստեղ կառուցվել է նաև աշխարհի ամենամեծ եկեղեցիներից մեկը, որ ստորգետնյա եկեղեցի է, և 25.000 մարդ կարող է տեղավորվել: Ուխտավորների թիվը գնալով, երբ սկսեց ավելանալ, անհրաժեշտություն զգացվեց կառուցել ևս մեկ եկեղեցի, այժմ արդեն՝ Սուրբ Բեռնադետ անունով: Եկեղեցին 5000 մարդ է տեղավորում:

Վերջինս կառուցվել է Բեռնադետի վերջին տեսիլքի վայրում՝ Քարայրի մուտքի մոտ: Իսկ 1943թ. ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Բեռնադետի երգը» վեպի հիման վրա նկարահանվում է կի-նոնկարը՝ «**Песнь Бернадетт**»: Վերֆելը գրում է, որ «Ես համարձակվեցի երգել Բեռնադետի փառաբանական երգը՝ չնայած որ կաթոլիկ չեմ, ավելին՝ ես հրեա եմ: Քաջությունը այդ անելու համար ինձ տվեց ավելի վաղ, ավելի քան անգիտակցաբար ար-ված ուխտը. ես ինձ երդվել էի՝ միշտ և ամենուր փառաբանել իմ ստեղծագործություններում աստ-վածային գաղտնիքը և մարդկային սրբությունը՝ հակառակ մեր ժամանակի, որը քմծիծաղով, չա-ռությամբ և անտարբերությամբ երեսը շուռ է տալիս մեր կյանքի այդ մեծագույն արժեքներից»:



# ՖԱԹԻՄԱՅԻ ՏԵՐԱՄԱՅՐԸ

ԱՐԵՎԻ ՀՐԱՇՔԸ: ՖԱԹԻՄԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ  
(1917թ. Ֆաթիմա, Պորտուգալիա)



1917թ. մայիսի 13-ին Պորտուգալայի Ֆաթիմայում Սուրբ Ֆիրամայրը՝ Վարդարանի Թագուհին, երևաց 3 հովիվ երեխաների՝ 7տ. Զաջինտային, 9տ. Ֆրանչեսկոյին և 10տ. Լուչիային: Բայց նախքան դա, նրանց երևաց Պորտուգալիայի խաղաղության հրեշտակը 1916թ՝ նախապատրաստելով երեխաներին Աստվածածնի գալուն:

**Հրեշտակի երևումը.**



Առաջին անգամ, երբ հրեշտակը երևաց, երեխաները ծառերից վերև լույս տեսան, ավելի սպիտակ, քան ձյունը, 14-15 տարեկան երիտասարդի տեսքով, թափանցիկ և ավելի պայծառ, քան բյուրեղապակու միջով բեկվող ճառագայթը։ Քույր Լուչիան պատմում է, որ՝ «Որքան նա մոտենում էր, այնքան տարբերակում էինք դիմագծերը։ Մոտենալով՝ ասաց. «Մի՛ վախեցեք, ես խաղաղության հրեշտակն եմ։ Ինձ հետ աղոթեցեք»։ Ծնրադրելով գետնին՝ խոնարհեց գլուխը, մինչև ճակատը դիպավ հողին, և մեզ երեք անգամ կրկնել տվեց հետեյալ խոսքերը. «Աստված իմ, Հավատում եմ, պաշտում եմ, հույս ունեմ և սիրում եմ Քեզ։ Ներողություն եմ խնդրում նրանց փոխարեն, ովքեր չեն հավատում, չեն պաշտում, հույս չունեն և չեն սիրում Քեզ»։

Այս խոսքերը երեք անգամ կրկնելով՝ վեր կենալով ասաց. «Աղոթե՛ք. Հիսուսի և Սարիամի Սրտերը ուշադիր լսում են ձեր աղաչանքների ձայնը», և անհետացավ։ Նրա բառերը այնքան խորը դրոշմվեցին, որ երբեք չկարողացանք մոռանալ։ Մեզ պարուրող գերբնական մթնոլորտն այնքան հզոր էր, որ երկար ժամանակ հազիվ էինք զգում մեր գոյությունը՝ մնալով նույն դիրքում, ինչպես նա մեզ թողել էր և անընդհատ նույն աղոթքը կրկնելով։

Հրեշտակի երկրորդ երևումը ամռան կեսին էր, երբ հանգստյան ժամին գնացինք աղբյուրը շրջապատող ծառերի ստվերի տակ: Հանկարծ հենց մեր կողքին տեսանք նույն հրեշտակին:

— Ի՞նչ եք անում,՝ հարցրեց,՝ աղոթե՛ք, շատ աղոթեք: Մարիամի և Հիսուսի Սրտերը ողորմության ծրագրեր ունեն ձեզ համար: Ամենաբարձրյալին հարատեսությամբ նվիրեք աղոթքներ և զոհողություններ:

— Ինչպե՞ս անենք զոհողությունները,՝ հարցրեցի: — Հնարավոր ամեն ինչից զոհողություններ արեք և դրանք նվիրաբերեք Աստծուն՝ որպես ապաշխարության արարք մեղքերի համար, որոնք վշտացնում են Նրան և մեղավորների դարձի աղերսանքների համար: Դուք այդպիսով խաղաղություն կրերեք ձեր երկրին, որի պահապան հրեշտակն եմ: Ես Պորտուգալիայի պահապան հրեշտակն եմ: Ամեն ինչից առավել ընդունեք և հնազանդությամբ կրեք չարչարանքները, որոնք ձեզ կուղարկի Տերը:

Այս խոսքերը մեր մտքում անմոռանալիորեն դրոշմվեցին: Լույսի էին նման, որը մեզ պարզաբանում էր, թե ով է Աստված, որքան է մեզ սիրում և սիրվել ցանկանում, զոհողության արժեքը, ինչն է հաճելի Նրան և ինչպես, Նրան վստահելով, մեզ պարզեում է մեղավորների դարձի շնորհը: Ահա թե

ինչու այդ օրվանից սկսեցինք Աստծուն նվիրել մեր բոլոր զոհաբերությունները, առանց, ի դեպ, ապաշ-խարության և զոհաբերության նոր միջոցներ փընտ-րելու. միայն ժամերով մեր ճակատները գետնին կպած, կրկնելով Հրեշտակի՝ մեզ սովորեցրած աղոթքը:

Հրեշտակի երրորդ երևումը սեպտեմբեր - Հոկտեմբերին էր:

Աղոթեցինք Վարդարանը և առաջին երևման ընթացքում Հրեշտակի սովորեցրած աղոթքը ու հանկարծ Հրեշտակը երևաց մեզ՝ ձեռքին սկիհ, վրան Հաղորդության նշխարով, որից արյան կաթիներ էին հոսում սրբազան անոթի մեջ: Թողնելով սկիհն ու նշխարն օդում կախված՝ Հրեշտակը ծըն-րադրեց գետնին և երեք անգամ կրկնեց հետեւյալ աղոթքը. «Ո՞վ Ամենասուրբ Երրորդություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, պաշտում եմ Քեզ խորապես և Քեզ եմ նվիրում Քրիստոսի ամենաթանկագին Մարմինը, Արյունը, Հոգին և Հիսուս Քրիստոսի Աստվածությունը՝ ներկա աշխարհի բոլոր տապան-ակներում՝ որպես ապաշխարություն անարդանք-ների, սրբապղծությունների և անտարբերություն-ների, որոնցով Նրան նախատում են: Եվ Նրա Սուրբ Սրտի և Մարիամի Անարատ Սրտի անհուն արժա-նիքներով Քեզնից աղաչում եմ խեղճ մեղավորների դարձը»:

Ապա կանգնելով՝ դարձյալ ձեռքը վերցրեց նշխարն ու սկիհը։ Նշխարը տվեց ինձ, իսկ Զաջինտային ու Ֆրանչեսկոյին՝ սկիհի պարունակությունը խմելու, միաժամանակ ասելով. «Վերցրե՛ք և կերե՛ք ապերախտ մարդկանց պատճառով ահավոր կերպով անարգված Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը։ Քավեք նրանց մեղքերը և միսիթարեք ձեր Աստծուն»։ Մեկ անգամ ևս ծնրադրելով գետնին՝ երեք անգամ էլ մեզ հետ կրկնեց նույն աղոթքը՝ «Ով Ամենասուրբ Երրորդություն...», ու անհետացավ։

Տոգորված մեզ համակող գերբնական զորությամբ՝ հրեշտակի նման արեցինք՝ ծնրադրելով գետնին և կրկնելով նրա արտասանած աղոթքները։ Աստծո ներկայության զորությունն այնքան ուժգին էր, որ մեզ կլանում և համարյա կատարելապես ոչնչացնում էր։ Թվում էր, թե մի որոշ ժամանակ մենք զրկվում էինք անգամ մեր զգայարաններից։ Հաջորդ օրերին մեր բոլոր քայլերը կատարում էինք նույն՝ մեզ մղող գերբնականով առաջնորդված։ Խաղաղությունն ու երջանկությունը, որոնք զգում էինք, թեպես հիանալի էր, սակայն ներքին էր, որովհետև մեր հոգիներն ամբողջապես ողողված էին Աստծով։ Մեզ տիրող մարմնի ուժասպառությունը նույնպես հիանալի էր։

## Տիրամոր երևումները.

1917թ. Մայիսի 17-ին, Կովա դա Իրիայի բարձր լանջին Զաջինտայի և Ֆրանչեսկոյի հետ քարերով խաղում էիք, Հանկարծ կայծակի լուսավորություն նշմարեցինք և որոշեցինք տուն գնալ՝ կարծելով, թե փոթորիկ կսկսվի: Իջնելով՝ հասել էինք բլրի կեսին, գրեթե այնտեղ կանգնած կաղնու ծառի մակարդակին, երբ ուրիշ փայլակ տեսանք, որը իսկական չէր, այլ արտացոլումն այն լույսի շողերի, որը մոտենում էր: Մի քանի քայլ հազիվ էինք առաջացել, երբ դիմացը նկատեցինք կաղնու փոքր ծառի վրա կանգնած սպիտակազգեստ մի կին: Նա ավելի փայլուն էր, քան արել, և ավելի փայլվլուն լույս էր արձակում և ուժգին, քան ջրով լցված բյուրեղապակյա բաժակը, որի միջով ցոլում են վառվող արեկի ճառագայթները:

Ապշահար կանգնեցինք տեսիլքի առաջ: Այնքան մոտ էինք, մի քանի քայլ հեռավորության վրա, որ ողողված էինք նրան շրջապատող, ավելի ստույգ՝ նրանից բխող լույսով: Ապա Տիկինը խոսեց մեզ հետ:

– Մի՛ վախեցեք, ես ձեզ չեմ վնասի:

– Որտեղի՞ց եք:

– Դրախտից:


– Ի՞նչ եք ուզում ինձնից:

– Ուզում եմ, որ վեց ամիս ամսի 13-ին նույն

Ժամին այստեղ գաք: Հետագայում կասեմ, թե ով եմ  
և ինչ եմ ուզում:

Երեխաների որոշ հարցերին պատասխանելուց  
հետո՝ Տիրամայրը ասում է.

— Ցանկանու՞մ եք ձեր անձերը նվիրել Աստծուն  
և կրել այն տառապանքները, որոնք Նա կուղարկի  
ձեզ, ի նշան ապաշխարության այն մեղքերի դիմաց,  
որոնք վշտացնում են նրան և որպես աղաչանք  
մեղավորների դարձի համար:



– Այո՛, ցանկանում ենք:


– Ուրեմն դուք շատ կտառապեք, բայց Աստծո Շնորհը կլինի ձեր միսիթարությունը:

«Աստծո Շնորհը կլինի ձեր միսիթարությունը» բառերն ասելիս՝ Տիրամայրն առաջին անգամ տարածեց ձեռքերը՝ մեզ հաղորդելով այնպիսի հզորության լուսավորություն, որը, հոսելով Նրա ձեռքերից, թափանցում էր մեր սրտերից ներս և մեր հոգու խորքերը՝ այդպես մեզ ցույց տալով Աստծո միջով, որն այդ լույսն էր՝ ավելի հստակ, քան եթե մեզ տեսնեինք լավագույն հայելու մեջ։ Ապա մի ներքին ուժից մղված, որը նույնպես փոխանցվում էր մեզ, ծնրադիր ընկանք՝ մեր սրտերում կրկնելով.

«Ո՞վ Ամենասուրբ Երրորդություն, պաշտում եմ Քեզ, Աստված իմ, սիրում եմ Քեզ Քո Ամենասուրբ խորհրդի մեջ (Սուրբ Հաղորդությունը)»։

Որոշ ժամանակ անց, Տիրամայրը վերստին սկսեց խոսել. «Ամեն օր աղոթեք Վարդարանը, որ աշարհին խաղաղություն լինի, և պատերազմն ավարտվի»։

Ապա հանդարտ սկսեց բարձրանալ՝ գնալով արևելքի կողմը, մինչև անհետացավ հսկա տարածությունում։ Նրան պարուրող լույսը կարծես երկնակամարում Նրա առջև ճանապարհ էր բացում, որի համար էլ երբեմն ասում էինք, թե Դրախտի



**բացվելն էինք տեսնում»:**  
**1917թ. հունիսի 13-ին**  
**Տիրամոր երկրորդ երե-**  
**ման ժամանակ, Սուրբ**  
**Մայրն ասում է, որ Զա-**  
**ջինտային և Ֆրանչիս-**  
**կոյին շուտով կտանի, սա-**  
**կայն Լուչիան ավելի եր-**  
**կար կմնա, քանի որ**  
**Հիսուսը ցանկանում է**  
**Լուչիայի միջոցով Տիրա-**  
**մորը ճանաչված և սիր-**  
**ված դարձնել, ուզում է**  
**աշխարհում հաստատել**

**Աստվածածնի Անարատ Սրտի ջերմեռանդությունը:**  
**Փրկություն է խոստանում բոլոր նրանց, որոնք**  
**ընդունում են Այն, և այդ հոգիները կսիրվեն Աստծո**  
**կողմից, ինչպես ծաղիկներ, որոնցով Տիրամայրը**  
**կզարդարի նրա գահը: Լուչիային ասում է, որ**  
**երբեք իրեն չի լքի, որ իր Անարատ Սիրտը կլինի**  
**նրան ապավեն և այն ուղին, որ նրան կառաջնորդի**  
**դեպի Աստված:**

**Լուչիան պատմում է. «Մինչ Տիրամայրն ար-**  
**տասանում էր իր վերջին խոսքերը, նա բացեց ձեռ-**  
**քերը և երկրորդ անգամ մեզ փոխանցեց այդ նույն**

անսահման լույսի ճառագայթները։ Մենք մեզ տեսանք Աստծո մեջ խորասուզված։ Թվում էր, թե Զաջինտան և Ֆրանչիսկոն այդ լույսի այն մասն էին, որ բարձրանում էին դեպի դրախտ, և ես այդ բոլորի մեջ դուրս էի թափվում դեպի երկիր։ Տիրամոր աջ ձեռքի ափի դիմաց սիրտ էր՝ շըր- ջապատված փշերով, որոնք խոցում էին այն։ Հաս- կացանք, որ դա Մարիամի Անարատ Սիրտն էր՝ նախատված մարդկության մեղքերով, որ քավու- թյուն էր որոնում։

Հաջորդ ամսին՝ հուլիսի 13-ին, Կովա դա Իրիա հասնելուց մի քանի ըոպե անց, կաղնու ծառի հարեանությամբ, որտեղ մեծ թվով Վարդարան աղոթող մարդիկ էին, դարձյալ տեսանք կայծակը, և մի պահ հետո Տիրամայրը երեաց կաղնու ծառի վրա։

— Ի՞նչ եք ուզում ինձանից, Հարցը եցի։

— Ուզում եմ, որ այստեղ գաս եկող ամսվա 13-ին, ամեն օր շարունակես, ի պատիվ Վարդարանի Տիրամոր, աղոթել վարդարանը՝ աշխարհին խաղաղ- ություն և ավարտ պատերազմին, որովհետև միայն նա կարող է ձեզ օգնել։

— Ուզում եմ խնդրել Զեղնից մեզ ասեք, թե ո՞վ եք Դուք, և մի հրաշք գործեք, որպեսզի բոլորը հավատան, որ երեսում եք մեզ։

— Շարունակեք այստեղ գալ ամեն ամիս։ Հոկ-

տեմբերին ձեզ կասեմ, թե ով եմ և ինչ եմ ուզում և հրաշք կգործեմ բոլորի համար, որպեսզի տեսնեն և հավատան: Ձեզ զոհաբերեք մեղավորների համար և շատ կրկնեք՝ հատկապես զոհողություն անելիս. «Ո՞վ Հիսուս, սա Քո սիրո համար է, մեղավորների դարձի համար և Մարիամի Անարատ Սրտի դեմ գործած մեղքերի ապաշխարության համար»:

Այս վերջին խոսքերն ասելով՝ Տիրամայրը մեկ անգամ ևս բացեց ձեռքերը, ինչպես նախորդ երկու ամիսներին: Լույսի շողերը, թվում էր, երկրի մեջ էին թափանցում...»:

(Ֆաթիմայի երեք մասամոց այդ գաղտնիքը առանձին ներկայացնում եմ ստորև, որ Լուչիան 1941թ. է բացահայտել, բայց հրապարակվել է 1980-ին, այն էլ ոչ ամբողջովին): «Երբ աղոթեք **Վարդարանը**, յուրաքանչյուր խորհրդից հետո կրկնեք. «Հիսուս իմ, ների՛ր մեզ, պահի՛ր դժոխքի կրակներից, երկինք առաջնորդիր բոլոր հոգիներին, հատկապես առավել կարոտյալներին»: Այնուհետև, ինչպես նախորդ անգամներ, սկսեց բարձրանալ դեպի արևելք, մինչև ի վերջո անհայտացավ երկնակամարի հսկայական տարածությունում:

Սեպտեմբերի 17-ին, երբ Տիրամայրը երևաց, ասաց. «Շարունակեք աղոթել **Վարդարանը՝ պատերազմը ավարտին** հասնելու համար: Հոկտեմբերին կգան

**մեր Տերը, Յավագին Տիրամայրը և Կարմեղոս լեռան  
Տիրամայրը:** Սուրբ Հովսեփը կերևա նաև՝ Մանուկ  
Հիսուսի հետ օրհնելու աշխարհը: Աստված գոհ է  
ձեր զոհողություններից: Զի կամենում, որ պարանը  
կապած քնեք, այլ միայն օրվա ընթացքում կապեք»:  
(Երեխաները պարան էին կապում իրենց մարմնին՝  
որպես մարմնային զոհողություն մեղավորների դար-  
ձի համար):

— Ինձ ասել են, որ Ձեզանից բազմաթիվ բաներ  
ինդրեմ, հիվանդ, խուլ ու համրի բուժում...»:

— Այո՛, Ես կրժկեմ մի քանիսին, բայց մյուսներին՝  
ոչ, քանի որ Հիսուսը չի վստահում նրանց (հեղ՝  
այսինքն չլինի այնպես, որ մարդը բժշկվի այն  
անդամալույծի նման, որ Քիստոս հրաշքով բժշկեց,  
որպեսզի հետո իր բժշկված ձեռքերը օգտագործի  
Տիրոջը ապտակելու համար): Հոկտեմբերին հրաշք  
կգործեմ, որ բոլորը հավատան»: Ապա, սովորա-  
կանի նման, Տիրամայրը սկսեց բարձրանալ և անհե-  
տացավ:

## ԱՐԵՎԻ ՀՐԱՇՔԸ

Երեխաները սպասում էին Տիրամոր խոստումին,  
որ երևման վերջին օրը՝ Հոկտեմբերի 13-ին, Նա  
հրաշք ցույց կտա և բոլորը կհավատան, քանզի անհա-  
վատները ծաղրանքով էին մոտենում երևումներին:



**ԵՎ ահա 1917թ. Հոկտեմբերի 13-ին Պորտուգալիայի Ֆաթիմա քաղաքի մերձակա դաշտում՝ Կովա դե Իրիայում, ուր հավաքված էր 70-100 000 մարդ,** (Փիլմը նույնպես կա) **Սուրբ Տիրամայրը ասաց երեք հովիվ երեխաներից Լուչիային.**

— Ես ուզում եմ քեզ ասել, որ **Իմ պատվին այս-տեղ մատուռ պետք է կառուցել:** **Ես Վարդարանի Տիրամայրն եմ, թող մշտապես, ամեն օր, շարունակեն Վարդարան ասել:** **Պատերազմը կա-վարտվի, և զինվորները շուտով տուն կվերա-դառնան:**

— Շատ բան ունեի խնդրելու Ձեզնից՝ բուժել մի քանի հիվանդ մարդկանց և մի քանի մեղավորներ դարձի բերել և էլի այլ բաներ:

— Ոմանց համար՝ այո, ոմանց համար՝ ոչ: Նրանք պետք է ուղղվեն և ներում խնդրեն իրենց մեղքերի համար, ապա ավելի տխուր տեսք ստանալով, Տիրամայրն այսպես շարունակեց, Այլևս թող չվիրավորեն մեր Տեր Աստծուն, որովհետև նա արդեն չափից դուրս շատ է վիրավորված:

Ապա տարածեց ձեռքերը այնպես, որ գրանք անդրադարձան արևի վրա, և որքան բարձրանում էր, այնքան նրա լույսը շարունակում էր տարածվել արևի վրա, և հետո Լուչիան բացականչեց՝ «Արևին նայեցեք»:

Եվ այդ պահին ամպերը ճեղքվեցին, երևաց երկինքը, հորդառատ անձրես անմիջապես դադարեց: Ամբողջական ապշանքի մեջ բազմությունը սկսեց դիտել հրաշքը: Կենտրոնում, ինչպես մի պայծառ լուսին, արևի շրջագիծն էր: Անմիջապես այն սկսեց պտտվել, ինչպես մի փոքր անիվ՝ դուրս նետելով բազմերանգ բոցերի խրձեր: Միաժանի բոլոր գույների շլաքուցիչ փայլ՝ դեղին, կարմիր, կանաչի և կապույտի երանգներ, արտացոլվում էին ամպերի, մարդկանց, ծառերի և բլուրների վրա: Բնության մի ֆանտաստիկ տեսարան՝ քողազերծված իր Արարչի

**կողմից:** Մի քանի բոպեից արել դադարեցրեց իր պարը և սկսեց փայլել այնպիսի լույսով, որ չէին ծակում աչքերը: Հետո խելահեղ պտույտը վերսկսվեց: Այս գերբնական երեսութը տեղի ունեցավ երեք անգամ, և ամեն անգամ պարը դառնում էր ավելի մոլեգին, բոլոր տիեզերական օրենքներից դուրս, իսկ գույները՝ ավելի պայծառ: Եվ այն տասներկու անմոռանալի բոպեների ընթացքում, երբ այս շունչ կտրող ներկայացումը տևեց, ամբոխը կանգնած էր զարմանքից քարացած՝ դիտելով ցնցող տեսարանը, որը տեսանելի էր 40 կմ-ից այն կողմ:

Արել կարծես կրակե անիվ լիներ, որ հանկարծ թռավ երկնակամարում իր տեղից և փշրվեց երկրի վրա՝ ամբոխի գլխավերեռում: Ամեն կոկորդից խըլացնող ճչոց դուրս թռավ: Ոմանք ընկան ծնկների վրա, ոմանք ճչում էին, ոմանք՝ աղոթում ու բացականչում. «Ո՞վ Հիսուս, մենք բոլորս կմեռնենք, ո՞վ Հիսուս մենք բոլորս կմեռնենք»: Ոմանք էլ Տիրամորն էին օգնության կանչում՝ արտասանելով զղման խոսքեր: Մի տիկին էլ նույնիսկ իր ընդհանրական խոստովանությունն էր բարձրածայն ասում, թե՝ ես այս արեցի, ես այն արեցի և սա էլ արեցի...»: Հանկարծ արել սկսեց զիգզագով նետվել դեպի երկիրը՝ խուճապի մատնելով բազմությանը: Հետո, միանգամից արել վերադարձավ իր նախ-

նական տեղը: Այն ստացավ իր սովորական ծակող պայծառությունը, երկինքը մաքուր, անամպ, կապույտ էր: Հրաշքն ավարտվեց... կամ համարյա: Վկաները հայտնեցին, որ նրանց հագուստը, որ մինչև վերջին թելը թրջվել էր մի քանի րոպե առաջ տեղացած անձրեից, վայրկենապես չորացել էր: Ոգևորությունն աննկարագրելի էր: Ժողովուրդը սկսեց միաբերան աղոթել «Հավատամքը»:

Օրհնյալ Տիրամայրը պահել էր խոսքը, և այժմ մարդկությունը ուներ այն ապացույցը, որը պետք էր, որ հավատար: Բազում մարդիկ ականատես եղան արեի այդ պատմական պարին: Ամբողջ աշխարհում այն հայտնի դարձավ, գրում էին բոլոր թերթերը: Տիրամոր Պատգամն ամբողջությամբ հաստատվեց: Դա իսկապես երկնքից իջնող ձայնն էր, որ խոսում էր մեր սերունդների հետ: Այն խոսեց մեր օգուտի համար, ճիշտ ինչպես նախկինում խոսել էր մեր պապերի համար: Բայց մենք, որ այնքան ճշգրիտ ենք, սրանից ավելի շատ կարիք ունենք, որ հավատանք, և երկինքը տվեց մեզ հետագա ապացույց: Ինչպես այնքան բազմաթիվ թերահավատ սուրբ Թովմասների, երկինքը թույլ տվեց մեզ տեսնել և շոշափել, որ հավատանք:

Երկու փոքր հովիվ երեխաները՝ Ֆրանչիսկոն և Ջասինտան մահացան կարճ ժամանակ հետո,

Ինչպես կանխասացել էր Տիրամայրը, իսկ Լուսիան՝ 2005թ. 97 տարեկանում։ Նրանց մահը մեծ տառապանքների հետ, երկուսին էլ հնարավորություն տվեց ցույց տալ իրենց հոգիների հերոսական ոգին, որ ցանկանում էին տառապել և առաջարկել իրենց տառապանքները մեղավորների համար։ Ինչպես փոքրիկ Զաջինտան անընդհատ կրկնում էր իր հիվանդության ընթացքում, Ֆաթիմայի պատգամի էական մասը գտնվում է այն բառերի մեջ, որ Տիրամայրն ասել էր. «Ես եկել եմ ասելու ձեզ, որ **ԱՅԼԵՎՍ ՄԻ՛ ՎՇՏԱՑՐԵՔ ՄԵՐ ՏԵՐ ԱՍԾՈՒՆ**, քանի որ Նրան արդեն շատ են վիրավորել, նա շատ վշտացած է։ Եթե մարդիկ հատուցումներ անեն (չարը փոխարինեն բարի գործերով), պատերազմը կվերջանա և եթե նրանք հատուցումներ չանեն, աշխարհի վերջը կգա»։

Երբ ամբոխը այդ տասը ըոպեների ընթացքում կարողացավ խորհել տիեզերական վիթխարի հրաշքի մասին, երեք տեսանողները այլ տեսարաններ էին վայելում։ Լուչիան պատմում է. «Երբ Տիրամայրն անհետացավ հսկա երկնակամարի տարածությունում, մենք արևի կողքին տեսանք Սուրբ Հովսեփին՝ Մանուկ Հիսուսի հետ և Տիրամորը՝ սպիտակազգեստ, կապույտ թիկնոցով։

**Սուրբ Հովսեփին ու Հիսուս կարծես աշխարհն էին**

**օրհնում, որովհետև ձեռքով խաչի նշանն էին անում:** Կարճ ժամանակ անց, երբ այս հայտնությունը դադարեց, ես տեսա մեր Տիրոջը և Տիրամորը: Մեր Տերը, կարծես օրհնում էր աշխարհը, ինչպես սուրբ Հովսեփը, իսկ Տիրամայրը «**Յավագին Տիրամոր»** տպավորությունն էր թողնում: Երբ այս տեսիլքը անհետացավ, ինձ թվում էր, որ ես դեռ տեսնում եմ Տիրամորը՝ «**Կարմեղոսի Տիրամոր**» կերպարանքով, քանի որ Նրա ձեռքից ինչ-որ բան էր կախված: Այդ «ինչ որ բանը» ուզարն էր»:

Վերջում Լուչիան կրկնեց ամբոխին հետեւյալ պատգամը, որը հենց նոր Կույսն էր վստահել իրեն, ասելով «**Ապաշխարեցե՛ք, ապաշխարեցե՛ք...** Տիրամայրը ցանկանում է, որ դուք ապաշխարեք: Եթե դուք ապաշխարեք, պատերազմը կավարտվի...»: Իսկ ապաշխարություն բառը պորտուգալերենով հավասարագոր է «դարձի գալ, վերադառնալ Աստծուն, փախչել մեղքից» արտահայտություններին:

Շուտով ձեռնարկեցին Սուրբ Կույսի փափագած մատուռի շինարարությունը և 1918թ. մայիսի 13-ին մեծ հանդիսավորությամբ զետեղեցին առաջին քարը այնտեղ, որտեղ կառուցվեց մի հոյակապ տաճար:

**Իսկ երեք սրբասուն տեսանող երեխաներից**

Թրանչեսկոն մահացավ 1919թ.-ին։ Նրա քույրը՝ Զաջինտան, երկինքը գնալուց առաջ դարձյալ մի քանի անգամ տեսավ Սուրբ Կույսին։ Մարիամը նրան ասաց. «Աղջի՛կս, ասա մարդկանց, որ չեմ սիրում շռայլություն և անպարկեշտ նորույթներ։ Ասա բոլորին, որ շատերը դժոխք են գնում՝ մարմնի ցանկություններին հետևելով»։ Զաջինտան մահացավ 1920թ.։ Լուչիան երկար ապրեց, ինչպես որ Տիրամայրն էր նախօրոք ասել այդ մասին։ Նա մտավ «Բոկոտն Կարմեղականների» վանքը և 1934թ.-ի Հոկտեմբերի 3-ին մշտնջենավոր ուխտ կատարեց՝ ինքն իրեն ամբողջովին նվիրելով Աստծուն, և ննջեց 2005թ.-ին, 97տ. հասակում։

Հոռմի սուրբ Հովհաննես-Պողոս 2-րդ Պապը մի քանի անգամ հանդիպել է Լուչիայի հետ և զրուցել Թաթիմայի գաղտնիքների մասին։



## ՅԱԹԻՄԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Քույր Լուչիան 1941թ. օդոստոսի 31-ին բացահայտեց Սուրբ Տիրամոր Գաղտնիքը, քանզի երկնքի թույլտվությունն արդեն ուներ: Նա ասաց, որ գաղտնիքը ունի երեք հստակ տարրերակվող կետ:

«Ա.Ռ.Ա.ԶԻՒԾ Դժոխքի տեսիլքն էր: Տիրամայրը, երբ բացեց ձեռքերը, ինչպես նախորդ երկու ամիսներին, Լույսի շողերը, թվում էր երկրի մեջ էին թափանցում: Նա մեզ ցույց տվեց մեծ կրակե ծով, որը կարծես գետնի տակ էր, և այս կրակի մեջ սուզված էին դեեր և մարդու կերպարանքով հոգիներ, որոնք կարծես թափանցիկ այրվող ածուխներ լինեին՝ բոլորը սևացած կամ պղնձագույն: Նրանք ծփում էին այդ մեծ հրդեհի մեջ, որն այժմ հսկա բոցերով օդ էր բարձրանում: Այդ բոցերը սկիզբ էին առնում նրանցից ծխի խոշոր քուլայով. մերթ ետ էին ընկնում յուրաքանչյուր կողքի վրա, ինչպես կայծերն են ընկնում վիթխարի հրդեհի մեջ՝ թեթև և առանց հավասարակշռության, ցավի և հուսահատության ճիչերով ու հեծեծանքով, որից սարսափեցինք և վախից դողացինք: Դեերը տարրերվում էին սարսափելի և զզվելի, անճոռնի և անծանոթ գարշելի կենդանիների ձեռվ՝ սև և թափանցիկ, ինչպես ածուխներ: Այս տեսիլքը տեսեց մի պահ, չնորհիվ բարի երկնավոր Մոր, Ով նախապես մեզ

զգուշացրել էր՝ խոստանալով երկինք տանել (առաջին երեման ընթացքում), այլապես, կարծում եմ, որ ահ ու սարսափից մեռած կլինեինք, այնպես աղերսագին ու ասես օգնություն հայցելով նայեցինք Տիրամորը, և Նա բարությամբ ու տիրությամբ մեզ ասաց.


**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**- «Դուք տեսաք Դժոխքը, ուր գնում են խեղճ մեղավորների հոգիները։ Նրանց փրկության համար Աստված կամենում է աշխարհում հաստատել իմ Անարատ Սրտի ջերմեռանդությունը։ Եթե անեն այն, ինչ կասեմ ձեզ, շատ հոգիներ կփրկվեն և խաղաղություն կլինի։ Պատերազմը կավարտվի, սակայն եթե մարդիկ չդադարեցնեն Աստծուն վշտացնել, Պիոս Թ.-ի քահանայապետության օրոք մեկ ուրիշը՝ ավելի վատը կսկսվի։ Երբ տեսնեք մի գիշեր՝ լուսավորված տարօրինակ լույսով (խոսքը 1938թ. հունվարի 25-ին և 26-ին եօrealia արշալույսի մասին է, որն արտասովոր երևույթ էր, և Լուչիան համարում էր Աստծո խոստացած նշանը), իմացեք, որ այն մեծ նշանն է, որ Աստված տալիս է ձեզ, որ Նա արդեն ոճիրների, պատերազմելու ցանկության, սովի, եկեղեցու և Պապի հալածանքների համար պատժելու շեմին է։ Դա կանխելու նպատակով կգամ հայցելու **Ռուսաստանի նվիրաբերումն** իմ Անարատ Սրտին և

**մեղքերի քավության նպատակով Հաղորդությունը**  
առաջին շաբաթ օրերը: Եթե իմ պահանջներն  
ընդունվեն, Ռուսաստանը դարձի կդա և խաղա-  
ղություն կհաստատվի, հակառակ դեպքում, նա իր  
սխալները կսփորի աշխարհով մեկ՝ հրահրելով  
պատերազմներ և եկեղեցու դեմ հալածանքներ:  
Բարիները կնահատակվեն, քահանայապետը շատ  
կտանջվի, տարբեր ազգեր կրնաջնջվեն: Ի վերջո, իմ  
Անարատ Սիրտը կհաղթանակի: Պապն ինձ կնվի-  
րաբերի Ռուսաստանը, որը դարձի կդա, և աշ-  
խարհին խաղաղության որոշ ժամանակ կշնորհվի:

**ԵՐՐՈՐԴ ՄԱՍ:** Այդ երկու մասից հետո,  
Աստվածամոր ձախ կողմում՝ մի փոքր ավելի բարձր,  
տեսանք մի հրեշտակ, որի ձեռքին հրե սուր կար:  
Շողում էր և բոցեր արձակում, որոնք կարծես  
աշխարհն էին հրդեհելու, սակայն մարում էին՝ իր  
ուղղությամբ Տիրամոր աջ ձեռքից բխող պայծառ-  
ությանը դիպչելով: Հրեշտակը, աջ ձեռքով երկիրը  
ցույց տալով, հզոր ձայնով գոչեց.

**«ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ,**  
**ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ»:** Եվ տեսանք անսահման  
լույսի մեջ, որն Աստված էր, «նման այն բանին, ինչ  
տեսնում են մարդիկ, երբ հայելու առջեռվ են անց-  
նում», մի սպիտակազգեստ եպիսկոպոս, այնպիսի  
նախազգացում ունեինք, որ քահանայապետն է:

Բազմաթիվ եպիսկոպոսներ, վարդապետներ, կրոնավորներ և կրոնավորուհիներ բարձրանում էին Սեպաձև լեռը, որի գագաթին մեծ խաչ էր՝ անտաշ կոճղերով, որոնց կեղևը կարծես կաղնու ծառի էր: Նախքան այնտեղ հասնելը՝ քահանայապետը անցավ կիսավեր քաղաքով և դողդոջուն ու վարանոտ քայլերով, վշտահար ու ցավատանջ աղոթում էր ճանապարհին գտնվող դիակների հոգիների համար: Հասնելով լեռան գագաթին՝ ծնրադրեց խաչի տակ և սպանվեց մի խումբ զինվորների կողմից, որոնք մի քանի անգամ կրակեցին զենքով ու նետերով: Նույն ձևով մեկը մյուսի հետևից մեռան եպիսկոպոսները, վարդապետները, կրոնավորներն ու կրոնավորուհիները ու տարբեր հասարակական խա-



վերի պատկանող աշխարհիկ տղամարդիկ և կանայք: Խաչի երկու թևերի տակ երկու հրեշտակ էին. յուրաքանչյուրը բյուրեղապակյա մի ցնցուղով հավաքում էր նահատակների արյունն ու նրանով ոռոգում Աստծուն մոտեցող հոգիներին»:

**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ.** Քավարանի մասին Տեր Հիսուս Քրիստոս առակի տեսքով իր Պատասխան-Մեկնությունը թելադրեց՝ այս գիրքը լույս տեսնելուց օրեր առաջ:

## ՔԱՎԱՐԱՆ

«Պատասխանը պիտի ըլլա առակին տեսքով:  
Բարությունը ճամփա ինգած էր, երբ պատահեցավ մի մարդու. մարդը բարեեց և անցավ: Շարունակելով իր ճամփան՝ Բարությունը հանդիպեց մի այլ մարդու, որը խոնարհությամբ ընդունեց իրենից լսված ամեն մի խոսքը և ապա շարունակեց՝ մի այլ ճանապարհով քայլելու: Բարությունը, կարճ մի ճանապարհ անցնելուց հետո, հանդիպեց մի մարդու, ողջունեց նրան և իր խրատները մատուցեց: Մարդը լսեց, բայց, հոգնածություն զգալով, իրեն հեռացրեց խորհուրդներեն:

Ասիկա մի առակ է, որ կպատասխանվե իմ Կողմես:  
Առաջինը պատահածը, որ բարեեց և անցավ՝ չգիտնալով հոգեոր իմաստություն, իրավունք ունի

**ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ԻՄ ԿԱՑԱՆԻ** մեջ իր աղերսանքը  
հասցնելու ինձ, քանզի նա գիտցած չէր, անտեղյակ  
մեկն էր:

Երկրորդ մարդու մը համար Կայանում գտնվել  
պետք չունի, որովհետև Ճշմարիտ ճանապարհով  
քայլեց:

Երրորդ մարդու մը համար դժվարություն կրյա,  
որովհետև Փրկության Դուռը ներս չի առներ էդոր.  
աշխարհի հոգնածությամբ՝ հանձն չեղավ վերցնել  
Սրբության Կշեռքը: Ուրկե էրթա, նույնիսկ պատե-  
րեն զարնվի, իրավունք մը չի տրվեր այդպիսի  
մեկին մը իմ Փրկությանը արժանի լինելու»:

### **Հիսուս Քրիստոս**

(24, Նոյեմբերի, 2023թ.) Ա. Ղ.)



# ՀԱՄԱՅՆ ԱԶԳԵՐԻ ՏԵՐԱՄԱՅՐԸ

(1945թ.- Ամստերդամ, Հոլանդիա)



Համայն Ազգերի Տիրամայրը հայտնել է, որ պատգամները մեկ երկրի կամ մեկ ժողովրդի չեն վերաբերում, այլ՝ համայն ազգերին:

Երկնքի Թագուհին նաև խորհուրդներ և ուղղություն է տալիս, որոնց հետեւելով, աշխարհը կփրկվի Սատանայից: Նա սովորեցնում է պարզ,

բայց հզոր մի աղոթք՝ պահանջելով տարածել այն աշխարհով մեկ՝ խուսափելու հետագա անկումից և ոչնչացումից:

Տիրամոր պահանջն էր իր՝ որպես «Համափրկչի, Միջնորդի և Փաստաբանի» առաքելության պաշտոնական ճանաչումը՝ խոստանալով, որ այդ ժամանակ Համայն Ազգերի Տիրամայրը կպարգեի խաղաղություն, իսկական խաղաղություն ամբողջ աշխարհին»:

### Նկարի բացատրությունը.

«Նայի՛ր նկարս և լավ ուսումնասիրիր» (1951թ. մարտի 4)... «Այս նկարը պետք է ուղի հարթի: Նկարը պետք է տարածվի աշխարհով մեկ: Ահա թե ինչու անձամբ եմ տվել այդ պատկերը ամբողջ աշխարհին» (1952թ. դեկտեմբերի 8)... «Ոչխարի հոտերը ներկայացնում են աշխարհի ժողովուրդներին, որոնք հանգիստ և ուրախություն չեն գտնի, եթե իրենց աչքերը չհառեն խաչին՝ այս աշխարհի կենտրոնին...»: Զեռքի ափերի մեջ կային սպիացած վերքերի հետքեր, որոնցից լույսի ճառագայթներ էին հոսում, յուրաքանչյուր ձեռքից՝ Յական, և սփռում ոչխարների վրա... Այս երեքը Շնորչի, Փրկութան և ԽԱՂԱՂՈՒԹԱՆ ճառագայթներն են: (1951թ. մայիսի 31)... «Որպես Համափրկիչ, Միջնորդ և Փաստաբան՝ կանգնում եմ երկրագնդի վրա՝ Փրկչի առջև»: (1951թ. հունիսի 2):

## Տիրամոր երևումը Իդային.

1945թ. մարտի 25-ին Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում Սուլը Տիրամայրը հայտնվում է Իդա Պիրդեմանին, երբ նա 40 տարեկան էր՝ չնայած որ, դեռ 12 տարեկանում 1917թ. Տիրամայրը 3 անգամ նրան երևացել էր, սակայն խոստովանահայրն ու հայրը նրան խորհուրդ էին տվել, որ ոչ ոքի չասեր: Եվ ահա տարիներ անց, երբ մի օր Իդան իր երկու քույերի հետ նստած վառարանի շուրջ պատերազմից էին զրուցում և նրանց հյուր էր եկել իր խոստովանահայրը՝ Հայր Ժոզեֆ Ֆլրեհեն, հանկարծ անկյունում Իդան լույս է նշմարում. զարմացած մոտենում է: Եվ միանգամից լույսից բխում է Աստվածամայրն իր ամբողջ հմայքով: Տիրամայրը տեսանողուհուն հանձնարում է կրկնել իր խոսքերը: Տիկինը սկսում է դանդաղ խոսել: Քահանան Իդայի քրոջը խորհուրդ է տալիս գրի առնել երկնավոր Մոր բոլոր խոսքերը:

Երևումների ընթացքում համարյա միշտ ներկա էին Դոմինիկյան միաբան Հայր Ժոզեֆը և Իդայի քույրերը: Չնայած ներկաները ոչինչ չէին լսում և տեսնում, սակայն բոլոր պատգամները արձանագրվել են, որովհետեւ տեսանողուհին դրանք դադաղ կրկնում էր կամ հետո պատմում:

Դա շարունակվում է մինչև 1959թ. մայիսի 31-ը:

1958թ.-ից իդան սկսում է Հաղորդության տեսիլք-ներ ունենալ, որոնք ավարտվում են 1984թ. մարտի 25-ին: Երևումները լինում էին կամ տանը, կամ մատուռում, երբեմն պատգամները ստանում էր Դոմինիկյան սուրբ Թովմաս եկեղեցում: Երևումների 1/3 եղել է Գերմանիայիում: Երբեմն նաև **Փարիզի Բակ փողոցի Հրաշագործ Մեդալի մատուռում:** Ընդհանուր առմամբ կան 56 երևում, 151 խորհրդավոր փորձառություն՝ կապված Սուրբ Հաղորդության հետ: Վերջիններս անգնահատելի են, որովհետև Աստվածային Հաղորդակցությունները լինում են Սուրբ Երրորդության՝ Հայր Աստծո, Որդու և Սուրբ Հոգու միջոցով: Երբեմն Աստծո միայն մեկ անձն էր խոսում, երբեմն՝ երեք անձերը: Սուրբ Հաղորդության հետ կապված այդ փորձառությունները մեծ մասամբ լինում էին Պատարագի ընթացքում:

Երևումներից մեկի ընթացքում Աստվածամայրը խաչի կողքին է կանգնում և թույլ տալիս իդային զգալ խաչի ցավը և ծանրությունը: Իդան գոչում է. «Այնքան հոգնած եմ, որ հիմա գետնին կընկնեմ ու լաց կլինեմ, այլևս չեմ դիմանում»: Տիրամայրը հետագայում մեզ հիշեցնում է, որ «գնանք խաչի ոտքի տակ և ուժ առնենք զոհողությունից»: 56 երևումների հետ կապված և՛ եկեղեցականները,

և՝ աշխարհականները ծաղրում էին իդային, որը տարիներ շարունակ հանդուրժում էր այդ հեգնանքները և պատասխանել բարձրաստիճան եկեղեցականների բոլոր հարցերին։ Բացի այդ, իդան ժամանակ առ ժամանակ ենթարկվում էր Սատանայի գրոհներին, որից շատ էր տառապում։ Բայց մեր Աստվածամայրը միշտ կողքին էր՝ նրան միսիթարելու համար։

1996թ. մայիսի 31-ին, ինչպես և Աստվածամայրը խոստացել էր տեսանողություն, Հառլեմի եպիսկոպոսը համաձայնություն է տալիս Համայն Ազգերի Տիրամոր ջերմեռանդությունը սփռելու։ Իդան ստանում է նաև պատգամները հրատարակելու թույլտվություն։ 1996թ. հունիսի 17-ին, 91 տարեկանում, իդան հեռանում է այս աշխարհից։ Ինչպես ասել էր Համայն Ազգերի Տիրամայրը, իր կենդանության օրոք կարողացավ իրականացնել Տիրամոր պատգամը։  
Երեսումներից քաղվել են գեղեցիկ խոսքեր, պատգամներ և որոշ մարդարեռություններ։

«Համայն ազգերը պետք է պատվեն Տիրոջը... բոլոր ժողովուրդները պետք է աղոթեն Ճշմարիտ և Սուրբ Հոգուն... Աշխարհը չի փրկվի ուժով, աշխարհը կփրկվի Սուրբ Հոգով... Հիմա Հայրն ու Որդին ցանկանում են, որ Իրենցից խնդրեն Սուրբ Հոգուն ուղարկել... Ճշմարտության Հոգին, որ

միայն կարող է խաղաղություն բերել... Համայն  
ազգերը հեծեծում են Սատանայի լծից... Ժամա-  
նակը լուրջ է և ճնշող: Հիմա Սուրբ Հոգին կիջնի  
աշխարհի վրա, ահա թե ինչու եմ ցանկանում, որ  
մարդիկ աղոթեն այդ գալստյան համար: Կանգնում  
եմ երկրագնդի վրա, որովհետև այս պատգամը  
վերաբերում է ամբողջ աշխարհն... Լսի՛ր, մարդ-  
կություն. Խաղաղությունը կթագավորի, եթե հա-  
վատաս Նրան: Հեթանոսները չեն ջախջախի քեզ...  
**Թող բոլոր մարդիկ վերադառնան Խաչին:** Կանգնե՛ք  
Խաչի տակ և ու՛ժ առեք զոհողությունից: Եթե իրար  
մեջ սերն ապրեք իր բոլոր նրբություններով, այս  
աշխարհի մեծամեծերն այլևս անկարող կլինեն ձեզ  
վնասել... աղոթեք սովորեցրած աղոթքը, և Որդին  
կշնորհի ձեր փափագը... Ինչպես գետնի վրա ձյան  
գորգն է հալչում, նույնպես պտուղը, որ Սուրբ  
Հոգուց է, թող գա ամեն օր այս աղոթքն աղոթող  
համայն ազգերի սրտերում... Զեք կարող գնահա-  
տել այս աղոթքի արժեքը... **Ասե՛ք աղոթքը...** Այն  
տրվել է հանուն համայն ազգերի... աշխարհի դար-  
ձի համար... Կատարիր քո գործը և համոզվիր, որ  
այդ մասին իմացվի ամենուրեք... Որդին հնա-  
զանդություն է պահանջում... Սուրբ Երրորդությունը  
դարձյալ կիշխի աշխարհի վրա...  
(Համայն ազգերի Տիրամոր 1951թ. պատգամներից)

## ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԱՂՈԹՔԸ

Տեր Հիսուս Քրիստոս՝ Հոր Որդի, ուղարկեր  
այժմ Քո Հոգին աշխարհի վրա,

Թո՛ղ Սուրբ Հոգին ապրի համայն ազգերի  
սրտում,

Որպեսզի նրանք պաշտպանվեն այլասեր-  
ումից, աղետից և պատերազմից:

Թո՛ղ Համայն Ազգերի Տիրամայրը, որ մի  
ժամանակ Մարիամ էր,

Լինի մեզ փաստաբան (պաշտպան):

«Աղոթքը տրվել է աշխարհի փրկության համար:  
Այս աղոթքը տրվել է ամբողջ աշխարհի դարձի  
համար: Թող այս աղոթքը ուղեկցի այն ամենում,  
ինչ անում եք ձեր կայնքում: Աղոթքը պետք է  
տարածվի եկեղեցիներում և հաղորդակցության  
նորագույն միջոցներով» (1951թ. դեկտեմբերի 31-ի  
երեսում): «Զեզ սովորեցրել եմ Հոր և Որդու այդ  
պարզ աղոթքը: Նայեք, որ ամբողջ աշխարհը, բոլոր  
ազգերն իմանան: Բոլորը դրա իրավունքն ունեն» (1951թ. ապրիլի 29): «Վստահ եղե՛ք, որ աղոթքը, որ  
համառոտ և շուտափույթ պահանջում է ձշմարիտ  
Սուրբ Հոգու ուղարկումը, տարածվի հնարավորինս  
արագ» (1951թ. մայիսի 31): Թող բոլորն ամեն օր

աղոթեն այս կարճ և պարզ աղոթքը: Աղոթքի բովանդակությունը մասնավորապես կարճ և պարզ է պահպանվել, որպեսզի անգամ ժամանակակից խելահեղ արագության աշխարհում բոլոր մարդիկ կարողանան այն արտասանել: Այն տրվել է, որպեսզի ծշմարիտ Սուրբ Հոգու գալուստն աղաչեն աշխարհի համար» (1951թ. սեպտեմբերի 20):

Տիրամայրը խոստանում է, որ այս աղոթքի և տիտղոսի՝ («Համայն Ազգերի Տիրամայր») միջոցով կփրկի աշխարհը տիեզերական աղետից» (1953թ. 05.10):

### Նկարը.

«Թող սկսվի շարժը. կատարեք այս գործը մեծ ոգևորությամբ և եռանդով և կտեսնեք հրաշքը» (1951թ. ապրիլի 1): «Ուղարկեք այս նկարը այն երկրներ, որտեղ հավատը մեռել է»... «Այս նկարը հստակ խոսում է, և հիմա ժամանակն է այն բերելու աշխարհին, որովհետև **աշխարհը մեկ անգամ ևս Խաչի կարիք ունի**» (1951թ. ապրիլի 15)... «Վստահեցնո՞ւմ եմ ձեզ, որ աշխարհը կփոխվի»... «Այս ձեռվ է պետք նկարը ճանաչել տալ աշխարհին: Պետք է չվարանեն, այլ գործեն: Վիճակը շատ լուրջ է: Պարզապես ոչ ոք չի գիտակցում՝ որքան լուրջ: Ցանկանում եմ, որ ճանաչեն այն ժողովուրդները, որոնք միշտ հեռու են պահվել Որդուց: Փրկե՛ք մարդկանց, որոնք հեռացել են

Նրանից... Դա ձեր պարտականությունն է» (1951թ. ապրիլի 29)... «Այս նկարը պետք է գնա երկրեարկիր, քաղաքից քաղաք: Պետք է հաշվի առնես այս փաստը ոչ միայն սահմանափակ շրջանակում, որովհետև **Ես Համայն Ազգերի Տիրամայրն եմ...** խոստանում եմ օգնել բոլոր նրանց, ովքեր հոգեկան և մարմնական հյուծման մեջ են, եթե կատարեն իմ կամքը, Հոր Կամքը»... (1951թ. մայիսի 31)... «Մեր ժամանակների բոլոր քրիստոնյաները պատասխանատու են գալիք սերունդների առջև» (1952թ. փետրվարի 17): «Եկե՛ք այս նկարի դիմաց» և «ամեն օր աղոթեք, որ Տեր Հիսուս Քրիստոս՝ Հոր Որդին, ուղարկի Սուլը Հոգին աշխարհի վրա և «Համայն Ազգերի Տիրամայրը», որ մի ժամանակ Մարիամ էր, լինի ձեզ փաստաբան: Թող այդպես լինի» (1952թ. մարտի 19): «Զգուշացնում եմ բոլոր քրիստոնյաներին և ասում. Գիտակցե՛ք ժամանակների ծանրությունը: Միացըրե՛ք ձեր ձեռքերը աղոթքի»: (1952թ. ապրիլի 6): «Այժմ մեկ անգամ ևս եմ ասում բոլոր առաքյալներին և կրոնավորներին: Լսե՛ք սիրող Մորը: Նա էլ ուզում է ձեզ օգնել այս ժամանակներում: **Ասե՛ք այս աղոթքը և խնդրե՛ք Համայն Ազգերի Տիրամոր բարեխոսությունը, և Նա ձեզ կօգնի:** Միմյանց նկատմամբ եղե՛ք արդար, անկեղծ և գիտասիրտ: Համագործակցե՛ք՝ հանուն՝ Եկեղեցին

բոլորին հասանելի դառնալու վեհ գործի: Թող սովորական և արգելավանքի (վանական համալիր կամ համալիրում վայր, որտեղ հակառակ սեռի ներկայացուցիչների մուտքը խստիվ արգելված է) եկեղեցականները հասկանան միմյանց և միասին աշխատեն՝ հանուն միակ մեծագույն գործի» (1952թ. դեկտեմբերի 8):

### Երեխաների համար.

1946թ. Աստվածամայրն իդային ցույց է տալիս մի տեսիլք, որտեղ Հիսուսին շրջապատում են երեխաները, ինչպես գրված է Մատթեոսի Ավետարանում: Այդ պահին լսում է մեր Տիրոջը, Ով ասում է. «Թողե՛ք երեխաներին գան ինձ մոտ... երեխաները պետք է ստանան լիարժեք քրիստոնեական դաստիարակություն»: 1951թ. ապրիլի 1-ին Համայն Ազգերի Տիրամայրը ցուցում է տալիս.

«...Սովորեցրե՛ք ձեր երեխաներին վերադառնալ խաչին»: «Հե՛տ բերեք երեխաներին հավատքի, Աստծո ընտանիքին: Խնամե՛ք փոքրերին» (1952թ. դեկտեմբերի 8): «Պետք է առաջնորդեք ձեր երեխաներին դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Պետք է նորից սովորեցնեք նրանց աղոթել այնպես, ինչպես Համայն Ազգերի Տիրամայրն է ձեզ սովորեցնում աղոթել իր աղոթքը... Ձեր երեխաներին հետքերեք զոհողության» (1955թ. մայիսի 31):

## **Սերը.**

«Զավա՛կս, ճիշտ փոխանցիր այս պատգամը. այս աշխարհի ժողովուրդները պետք է մեկ պատվիրան պահեն՝ **Սերը**: Նա, ով սեր ունի, կծառայի Տիրոջն ու Վարդապետին: Մտքում պահեք այս մեկ պատվիրանը՝ **Սերը**: Եթե այն տարածվի մարդկանց միջև, աշխարհը կփրկվի... տե՛ս այդ բոլորը... իմացի՛ր՝ ինչպես բերել Հիսուս Քրիստոսի Գիրությունը այս աշխարհին, այս այլասերված աշխարհին (1951թ. նոյեմբերի 15): «Հիշի՛ր առաջին և մեծագույն պատվիրանը՝ **Սերը**: Դա ներառում է ամեն ինչ»: (1952թ. հոկտեմբերի 5): «Այն, ինչ պակասում է այս աշխարհին, Աստծո **Սերն** է, մերձավորի սերը» (1951թ. հուլիսի 2):

## **Խաչը, խոնարհությունը և խսկական հոգին**

«Քրիստոնյանե՛ր, թող ձեզնից յուրաքանչյուրն առանձին խաչ վերցնի ձեռքը: Խաչը ձեռքիդ կտիրանաս թագավորության: Խաչը ձեռքիդ կհանդիպես քո հարևանին: **Խաչը ձեռքիդ կհաղթես ոսոխին**» (1952թ. փետրվարի 7): «Ծնրադրե՛ք Տիրոջ և Արարչի առջև և շնորհակալ եղեք: Այսօր գիտությունը մարդկանց մոռանալ է տվել երախտագիտությունն ցուցաբերելը: Նրանք այլևս չեն ճանաչում իրենց Արարչին: **Ազգե՛ր, զգուշացե՛ք, խոնարհությամբ ծնրադրե՛ք ձեր Արարչի առջև:**

Աղաչե՛ք Նրա Ողորմությունը, Նա Ողորմած է: Նա  
բոլոր փաստերը ձեզ արդեն տվել է: Թող Հայրը,  
Որդին և Սուրբ Հոգին լինեն ձեզ հետ ձեր կյանքի  
բոլոր օրերում» (1954թ. մայիսի 31):

### Խորհուրդները, Վարդարանը և Սուրբ Հաղորդությունը

«Հիշե՛ք, Խորհուրդները դեռ գոյություն ունեն:  
Դու՛ք, քրիստոնյա՛ ժողովուրդ, ձեր օրինակով  
ուրիշներին բերեք դեպի Նա՝ Հանապազորդ Հրաշք,  
Հանապազորդ Զոհողություն» (1955թ. մայիսի 31):  
«Նա ձեզ տվեց մեծագույն խորհուրդը, յուրա-  
քանչյուր օրվա, ժամի, րոպեի մեծագույն խոր-  
հուրդը: Նա իր անձը տվեց ձեզ: Ո՛չ, ժողովուրդ-  
նե՛ր (այդ ասելիս գլուխը վճռականորեն տարու-  
բերում էր), ո՛չ լոկ հիշողություն: Ո՛չ, ժողովուրդ-  
լսե՛ք՝ ինչ է ասում. ոչ՝ միայն միտք, այլև **Ինքն**  
**իրեն, Հացի կերպարանքով, Գինու կերպարանքով:**  
Ահա՛ թե ինչպես է ուզում հայտնվել Տերը ձեր մեջ  
օրըստօրե՛: Ընդունե՛ք դա, աշխատե՛ք դրա վրա:  
Նա ձեզ տալիս է համը՝ Հավիտենական Կյանքի  
համը» (1957թ. մայիսի 31): «Նախքան Հիսուս  
Քրիստոսի վերադարձը Հոր մոտ, նախքան Խաչի  
զոհողությունն սկսվելը՝ Տեր Հիսուս Քրիստոս ամ-  
բողջ աշխարհի ժողովուրդներին տվեց ամենօրյա  
Հրաշքը»... «Որքա՛ն մարդիկ կան այնտեղ՝ այդ

**մեծագույն Հրաշքը փորձող, բայց շրջանցում են  
այդ մեծագույն Հրաշքը։ Ամենօրյա Զոհողությունը  
պետք է դարձյալ իր տեղը գտնի այս այլասերված  
աշխարհի կենտրոնում» (1953թ. մարտի 20):**

## **ԳԱՐԱԲԱՆԱԼԻ ԿԱՐՄԵԼԻ ՏԻՐԱԾԱՅՐԸ**

**ՆՐԱ ՎԵՐՃԻՆ ՄԵԾ ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ  
ԱՇԽԱՐԺԻՆ**

**(1961թ. Իսպանիա, Գարաբանդալ)**



**Լա Սալետ - Ֆաթիմա - Գարաբանդալ:**

**1961-65թթ.** Սուրբ Տիրամայրը այս ԶՈՐԱ  
ՊԱՏԳԱՄԻ մեջ իր վերջին զգուշացումը տվեց ողջ  
աշխարհին: Նախ համայն մարդկությունը Երկնքից  
**Նախազգուշացում** կստանա, երբ պայմանները լի-  
նեն ամենավատթարը, իսկ այնուհետև, մեկ տարվա  
ընթացքում կլինի **Հրաշքը**: Իսկ **Պատիժը** (3 խավար  
օրեր՝ տպ. բրոշյուրով) վրա կհասնի Հրաշքից հետո:

Մեր սուրբ Տիրամոր ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄՆ ուղղ-  
ված աղջիկներին՝ հրապարակվեց 1961թ. հոկ-  
տեմբերի 18-ին: Պատգամը, որ արտահայտված էր  
աղջիկների մտածելակերպին և մշակույթին հասա-  
նելի պարզ լեզվով, հետեւյալն էր. «Մենք պետք է  
շատ ապաշխարենք և զոհաբերություններ անենք:  
Մենք պետք է հաճախ այցելենք Օրհնյալ Արքավայր  
(Եկեղեցի), բայց ամենից առաջ մենք պետք է լինենք  
շատ բարի, քանի որ եթե այդպիսին չլինենք, մենք  
կպատժենք: Բաժակը արդեն լցվում է, և եթե մենք  
չփոխենք մեր կյանքը, մեծ պատժի կարժանանանք»:

Շատ մարդիկ, ովքեր գնացել են Գարաբանդալ՝  
որպես անհավատներ, վերադարձել են հավատացյալ  
դարձած: Նրանց մեջ տեղի էր ունեցել դրական  
հոգեոր փոփոխություն: Նրանց մեջ Աստծուն սի-  
րելու և ուրիշների նկատմամբ ավելի հոգատար  
լինելու մեծ ցանկություն էր առաջացել: Նրանք

Հուզպիել էին՝ ներկա լինելով տեսիլքի հետ հաղորդակցությանը՝ չնայած այն ներկա եղող սովորական մարդկանց համար անտեսանելի էր: Գարաբանդալում բոլոր հավատացյալները ապշել էին այն նվիրվածությունից, որով հայր Լուիսը մատուցում էր իր կյանքի վերջին Պատարագը: Նրա վերջին բառերն էին. «Օ՛հ, ինչ բարի և հոգատար Մայր ունենք մենք Երկնքում... Սա իմ կյանքի ամենաերջանիկ օրն է...»:

Գարաբանդալը մի փոքրիկ գյուղ է Հյուսիսային Խսպանիայում Սանտանդեր նահանգում, Պիկոս դե Եվրոպա լեռների մոտ, լեռնային և գեղատեսիլ մի բնակավայր: Ամբողջական անունն է Սան-Սեբաստիան դե Գարաբանդալ: Այն գտնվում է ծովի մակարդակից 600մ բարձրության վրա, նահանգի մայրաքաղաքից մոտ 57 մղոն (91 կմ) հեռավորությամբ: Այնտեղ համելու համար պետք է մագլցել թեք ճանապարհով, որը սկսվում է Կոսիոյից, այնուհետև առանձնանում Հիմնական ճանապարհից: Գարաբանդալում ապրում է մոտ 300 մարդ: Գյուղը զարմանալի խաղաղ է, այնտեղ չկա ո՞չ բժիշկ, ո՞չ էլ ծխական եկեղեցու տեղաբնակ հովվապետ: Կոսիոյի հովվապետը միայն կիրակի օրերն է այնտեղ Պատարագ մատուցում:

Երեսումները սկսվեցին 1961թ. հունիսի 18-ին, երբ

չորս աղջիկներ՝ Կոնչիտա Գոնսալեսը, Մարիա Դոլորես (Մարիլոլի) Մասոնը, Խակինտա Գոնսալեսը և Մարիա Կրուզ Գոնսալեսը (որոնք, չնայած նույն ազգանունն ունեն, սակայն բարեկամներ չեն), խաղում էին գյուղի շրջակայքում: Մարիա Կրուզը 11 տարեկան էր, մյուսները՝ 12, բոլորն էլ աղքատ ընտանիքից էին:

Նրանք հանկարծ ամպրոպի բարձր որոտ լսեցին և իրենց առաջ տեսան Միքայել Հրեշտակապետի լուսավոր կերպարանքը: Հաջորդ օրերին Հրեշտակապետը շարունակում էր հայտնվել նրանց նույն տեղում: Նա հայտնեց, որ հուլիսի 2-ին նրանք կտեսնեն Տիրամորը: Դա Գարաբանդալի իրադարձությունների սկիզբն էր:

## ԿԱՐՄԵԼԻ (Կարմեղոսի) ՏԻՐԱՄԱՅՐԸ

Նորությունը շատ արագ տարածվեց շրջակայքում: Հուլիսի 2-ը կիրակի էր, և գյուղը լի էր մարդկանցով: Կային մարդիկ հասարակության բոլոր խավերից և շատ մարդիկ, ովքեր գյուղից չեն, այդ թվում նաև մի քանի բժիշկներ և հոգևորականներ: Երեկոյան ժամը 6-ին աղջիկները գնացին այնտեղ, որտեղ հայտնվել էր Հրեշտակը և, ի զարմանս բազմության, ընկան տրանսի (հոգևոր էքստազ՝ հոգեզմայլանք) մեջ: Տիրամայրը նրանց հայտնվել էր

երկու հրեշտակների ուղեկցությամբ, որոնցից մեկը սուրբ Միքայելն էր։ Աղջիկները տեսիլքը նկարագրում էին հետեւյալ ձևով. «Նրա հագին կար սպիտակ զգեստ և կապույտ թիկնոց, գլխին ոսկե աստղերից պսակ։ Նրա ձեռքերը նուրբ էին. աջ ձեռքով բռնել էր մոխրագույն քղանցքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա գրկել էր Մանուկ Հիսուսին։ Նրա մազերը մուգ շագանակագույն էին՝ կիսված մեջտեղից։ Երբեմն քամին շարժում էր նրա երկար մազերը, որոնք հասնում էին նրա գոտկատեղին։ Դեմքը երկարավուն էր, նուրբ քթով։ Բերանը շատ գեղեցիկ էր, շրթունքները՝ փոքր ինչ բարակ։ Նա տասնութ տարեկան աղջկա տեսք ուներ։ Բավականին բարձրահասակ էր։ Նրա ձայնի նման ձայն չկա։ Ոչ մի կին նրան նման չէ ո՛չ ձայնով, ո՛չ դեմքով, ո՛չ էլ այլ ձևերով»։

### Տիրամայրը իրեն անվանել է Կարմելի Տիրամայր։

Աղջիկները կույսի հետ խոսում էին շատ բնականորեն։ «Մենք նրան պատմում էինք մեր պարտականությունների մասին, թե ինչպես ենք գնում դաշտ... իսկ նա ժպտում էր՝ ի պատասխան այն ամենի, ինչ պատմում էինք նրան»։ Տիրամայրը նրանց սովորեցնում էր, թե ինչպես վերաբերվեն իրեն՝ «Ինչպես երեխաներ, ովքեր խոսում են իրենց մոր հետ և նրան պատմում ամեն ինչ... երեխաներ,


**ովքեր որոշ ժամանակ իրենց մորը չտեսնելուց հետո, ուրախանում են՝ նրան տեսնելով»:**

**Առաջին հայտնությանը հաջորդեցին ուրիշները:**

**1961-62թթ. ընթացքում Տիրամայրն ամեն շաբաթ մի քանի անգամ էր հայտնվում: Չորս աղջիկները միշտ չէ, որ միասին էին տեսնում հայտնությունը: Երբեմն միայն մեկը կամ երկուսը կամ երեքն էին տեսնում տեսիլքը: Ոչ էլ հայտնությունն էր լինում օրվա միևնույն ժամին: Տիրամայրը շատ անգամ հայտնվում էր գիշերը կամ վաղ առավոտյան, վըշտացած տեսքով նույն այն ժամանակ, երբ Տերը հատկապես վրդովված է մարդկանց գործած մեղքերից: Անգամ այդ դեպքերում աղջիկները հաջորդ առավոտյան արթնանում էին սովորականի նման վաղ, որպեսզի աշխատեն դաշտերում, կրում էին**

**խոտի կամ փայտի տրցակներ կամ քշում հոտը՝ առանց հոգնության նշաններ ցույց տալու:**

**Երբ տեսիլքը հայտնվում էր, աղջիկներն անմիջապես ծնկի էին գալիս անգամ սուր քարերի վրա, սակայն դրանից նրանց ոտքերը չէին վնասվում: Նրանց դեմքի արտահայտությունը հանկարծ փոխվում էր. հայացքը**



դառնում էր բացառիկ գեղեցիկ, նուրբ՝ լի խորը  
առեղծվածությամբ։ Բառեր չկան, որոնք կարող են  
ճշգրիտ նկարագրել այդ փոփոխությունը։ Նրանք  
ամբողջովին իրենց տարերքի մեջ էին՝ անտեղյակ  
ամենքից և ամեն ինչից։ Նրանք չէին արձա-  
գանքում կսմթոցներին, այրելուն, նույնիսկ՝ հար-  
վածներին։ Նրանց շեղելու բոլոր փորձերը ձախ-  
ողվում էին։ Պայծառ լույսի ճառագայթներ էին  
ուղղում նրանց վրա, բայց, չնայած դրան, նրանց  
աչքերը նույնիսկ չէին շեղվում, թարթում կամ  
անհանգստության որևէ նշան ցուցաբերում։ Ընդ-  
հակառակը, նրանց աչքերը մնում էին լայն բացված՝  
արտահայտելով անսահման ուրախություն։ Երբ  
աղջիկները վերադառնում էին իրենց նորմալ  
վիճակին, նրանք անմիջապես փակում էին աչքերը  
իրենց վրա ուղղված այդ պայծառ լույսից, որը  
սովորական պայմաններում կարող էր վնասել  
աչքերը։

Այսպիսի տրանսի (հոգեզմայլանք) ընթացքում (որ  
տևում էր մի քանի րոպեից մի քանի ժամ) ժա-  
մանակը կարծես կանգ էր առնում։ Հաճախ այդ  
պահերին նրանք մնում էին անշարժ, մի քիչ երե-  
րուն, գեղեցիկ, ինչպես քանդակներ՝ գլուխները ետ  
գցած, աչքերը դեպի վեր, քարերի վրա ծնկի իջած  
կամ բոկոտն՝ ձյան վրա։ Տրանսի վերջում նրանք

Հուզմունքի կամ ջղաճգության նշաններ չէին ցուցաբերում, այլ միայն անսահման խաղաղություն, ներդաշնակություն և հրճվանք:

Շատ այցելուներ և գյուղացիներ աղջիկներին տալիս էին զանազան իրեր, օրինակ, **Ավետարաններ**, **Վարդարաններ** (Տերողորմյայի Համբիչներ), թիկնոցներ, մեղալյոններ, խաչեր, ամուսնական մատանիներ և այլն, որպեսզի Տիրամայրը համբուրի դրանք: Այնուհետև Տիրամոր առաջնորդությամբ աղջիկները դրանք վերադարձնում էին իրենց տերերին անգամ այն դեպքերում, երբ մարդնուրիշի միջոցով էր տվել այդ իրը, որպեսզի երեխաները չիմանան, թե ով է իսկական տերը: Կարմելի Տիրամոր կողմից համբուրված իրերը հատուկ հոչակ էին վայելում: Երբեմն նրանք



**առեղծվածային բույր էին արձակում, օրինակ՝**  
**վարդի բույր։ Կոնչիտան գրել է. «Տիրամայրն**  
**ասում է, որ Հիսուսը հրաշքներ կգործի Տիրամոր**  
**կողմից համբուրված առարկաների միջոցով։**

Նրանք, ովքեր դրանք հավատով և վստահությամբ  
կկրեն, իրենց մեղքերը կքավեն այստեղ՝ երկրի  
վրա»։ Տրանսի ժամանակ աղջիկները հաճախ ձեռ-  
քերում կրում էին խաչեր, որոնք համբուրել էր  
Տիրամայրը և, նրա թելադրանքով, այն մեկնում էին  
հավաքվածներին՝ համբուրելու համար՝ միաժամա-  
նակ դրանով օրհնելով նրանց։ Տեսնելով մոտեցող  
աղջիկներին՝ շատ ներկաներ այնպիսի հսկայական  
հոգեոր արթնացում էին ապրում, անթաքույց ար-



տասվում էին՝ ընդունելով իրենց տեսածի գերբնականությունը՝ լսելով և զգալով Տիրամոր ներկայությունը, մանավանդ անհավատների և տարբեր հավատքի կամ կրոնական անտարբերությամբ տառապող հոգիների այլակերպումը, մեղավորների դարձը, որոնք հավատի, հույսի և կարեկցանքի վերելք էին զգացել:

Կարմելի Տիրամոր հայտնությունից հետո սկըսվեցին տրանսային զբոսանքները: Աղջիկները քայլում էին ամբողջ գյուղով՝ աստիճաններով վեր ու վար անելով, դեպի տուն և դուրս, ցերեկվա և գիշերվա բոլոր ժամերին՝ շրջանցելով խոչընդուները՝ առանց վարանելու՝ առաջնորդվելով միայն Տեսիլքով: Հաճախ նրանք մեծ արագությամբ վազում էին ներքե կամ զառիվեր լեռնային տեղանքով և հակառակը, այնպես, որ ապշած դիտողների համար անհնար էր լինում հետևել նրանց: Թվում էր, թե նրանց մարմինները չեն ենթարկվում երկրային գրավիտացիայի օրենքին, այլ օժտված էին ինչ որ հոգեւոր ճկունությամբ: Արագընթաց վագքի ժամանակ աղջիկները երբեմն կորցնում էին իրենց վստահված առարկաները: Այնուամենայնիվ, Օրհնյալ Տիրամորը նորից տեսնելիս, նրանք հարցնում էին նրան, թե որտեղ են այդ առարկաները, և նա հայտնում էր, թե որտեղ պետք է փնտրել դրանք:

## ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔԸ

Գյուղի վերևում կա մի զառիթափ բլուր, որտեղ գտնվում է ինը սոճիների պուրակը: «Մի օր, պատմում էին աղջիկները, ոսկե պսակով մի հրեշտակ հայտնվեց մեզ Սոճուտում: Նա մեզ ասաց, որ արտասանենք Կոնֆիտեորը (աղոթքի մի տեսակ է՝ հեղ.) և հետո մատուցեց Սուրբ Հաղորդությունը»:

Այս հիանալի հրաշքը տեղի ունեցավ մի քանի անգամ, այն օրերի ընթացքում, երբ հարեան Կոսիո գյուղի ծխական քահանան չէր կարողանում գնալ Գարաբանդալ: Այս Հաղորդություններից մի քանիսը հնարավոր էր նկարահանել՝ օգտագործելով շատ պայծառ լույս: Աղջիկների շրթունքների և լեզուների շարժումները իսկական Հաղորդության ճշգրիտ պատկերն էին տալիս:

1962թ. մայիսի 2-ին հրեշտակն ասաց Կոնչիտային, որ Աստված այնպիսի հրաշք կգործի, որ բոլոր մարդիկ կհավատան. նրանք Հաղորդության ժամանակ կտեսնեն սուրբ Մասը նրա լեզվին, և որ նա պետք է այս մասին տեղյակ պահի տասնհինգ օր առաջ: Իսկ մինչ այդ օրվա իրադարձությունը, սուրբ Տիրամոր երկրորդ և երրորդ Պատգամները տրվել են միայն Լոլիին և Խակինտային՝ 1962թ. հունիսի 19-ին և հունիսի 23-ին:

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԸ.

**Պատրաստվե՛ք... Խոստովանե՛ք:**

Հետեւյալ նամակը գրվել է Խակինտայի կողմից, Խսղանիայի Աստուրիա նահանգի Հայր Խոսե Ռամոն Գարսիային:

Երեքշաբթի 1962թ. հունիսի 19-ին: «Լոլին և ես փողոցում էինք (Առաջին հայտնության վայրի մոտ) և նա (Կույսը) մեզ հայտնեց Պատգամը ամբողջ աշխարհի համար, որ հետեւյալն է. Կույսն ասաց, որ մենք չենք սպասում Պատժին (քանի որ մեր ապրելակերպով անտեսում ենք Նրա Առաջին Պատգամը), բայց նույնիսկ եթե չենք սպասում, այն վրա կհասնի, քանի որ աշխարհը չի փոխվել (նա այս ասաց երկու անգամ), իսկ մենք ուշադրություն չենք դարձրել դրան, քանի որ աշխարհն ավելի է վատացել և պետք է շատ փոխվի, բայց բոլորովին էլ չի փոխվել: Պատրաստվե՛ք, խոստովանե՛ք, քանի որ **Պատիժը** շուտով վրա է հասնելու:

Աշխարհը շարունակում է նույնը մնալ և, կարծում եմ, որ այն բոլորովին էլ չի փոխվել: Ի՞նչ ցավալի է, որ այն չի փոխվում: Շուտով մեծ **Պատիժը** վրա կհասնի, եթե այն (այսինքն՝ աշխարհը) չփոխվի»:

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԸ.

Սան Սեբաստիան, Հունիսի 23, 1962թ.

«Կույսը մեզ ասաց. «Աշխարհը շարունակում է մնալ նույնը... Այն բոլորովին չի փոխվել: Քչերը կտեսնեն Աստծուն: Նրանք այնքան քիչ են, որ դա կույսին մեծ ցավ է պատճառում: Ի՞նչ ցավալի է, որ այն չի փոխվում: Կույսը մեզ ասաց, որ Պատիժը վրա կհասնի, քանի որ աշխարհը չի փոխվում: Բաժակը լցվում է: Կույսն այնքա՞ն տիսուր էր՝ չնայած նա մեզանից դա թաքցնում էր, որովհետև նա շատ է սիրում մեզ և մենակ է տառապում: Նա այնքա՞ն բարի է: Բոլորդ բարի եղե՛ք, որպեսզի Կույսը երջանիկ լինի: Նա ասաց, որ մենք, ովքեր լավն են, պիտի աղոթենք վատերի համար: Եկե՛ք Աստծուն աղոթենք աշխարհի համար, նրանց համար, ովքեր իրեն չեն ճանաչում: Եղե՛ք բարի... Բոլորդ եղեք շատ բարի»: (Մարիա Դոլորես 13 տ, Խակինտա Գոնսալես 13 տ.):

«Քչերը կտեսնեն Աստծուն» խոսքը պայմանավորված է նրանով, թե արդյո՞ք մենք՝ աշխարհը, ցանկություն ունի հետևել Գարաբանդալում տըրպած Պատգամներին՝ զերծ մնալու համար այն գալիք Պատժից, որ սպառնում է մարդկությանը: Ինչքա՞ն, ինչքա՞ն պետք է Օրհնյալ Տիրամայրը սպասի, որ մենք դառնանք իր Աստվածային Որդուն

## **ՍԱ ՄԵՐ ՎԵՐՁԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է:**

1962թ. հուլիսի 18-ին գյուղը լցված էր այցելուներով: Կեսդիշերին կոնչիտան, որ մնացել էր իրենց տանը և անընդհատ շրջապատված էր այցելուներով, ընկավ տրանսի մեջ և դուրս եկավ փողոց: Իր տնից մի փոքր հեռու, նա վայր իջավ ծնկների վրա, ամբոխի մեջ:

Լապտերները ուղղվեցին նրա կողմը: Նա հանեց իր լեզուն, որի վրա ոչինչ չկար, ինչպես բոլորը կարող էին տեսնել: Մի քանի րոպեից **Սուրբ Հաղորդության ճերմակ** մի Մաս հայտնվեց նրա լեզվին և այնտեղ մնաց մի քանի րոպե:



Դոն Ալեխանդրո Դամիանսը՝ Բարսելոնայից մի բիզ-  
նեսմեն, որ կանգնած էր աղջկանից երեք ոտնա-  
չափից քիչ հեռավորության վրա, կարողացավ մի  
քանի շատ լավ շարժական նկարներ հանել: Ժա-  
պավենի վրա արտասովոր տեսարանի 79 նկարներ  
էին պատկերվել: Նույն վկան զեկույց գրեց, որը  
ներկայացրեց Սանտանդերի եպիսկոպոսին, ժապա-  
վենի կրկնօրինակի հետ: Վկաների թիվը շատ մեծ  
էր. կային մշակույթի և սոցիալական դասի տարբեր  
մարդիկ: Դոն Բենջամին Գոմեսը՝ Պոտեսցի մի ֆեր-  
մեր, գրել է. «Ես կանգնած էի աղջկանից մի բազ-  
կաչափից էլ պակաս հեռավորության վրա: Ես շատ  
լավ տեսա, որ նրա լեզուն լիովին մաքուր էր:  
Աղջիկը չէր շարժվում: Հանկարծ լեզվի վրա հայտ-  
նըվեց սուրբ Մասը: Այն սպիտակ էր, փայլում էր և  
առկայծում: Այն հիշեցնում էր ձյունը, երբ արևը  
դիպչում է իր փայլուն ճառագայթներով: Աղջկա-  
դեմքը գեղեցիկ ձևով փոխվել էր երկնային տրանս-  
ից: Նրա դեմքը հրեշտակային էր: Կարող եմ հա-  
վաստել, նա այնտեղ էր, անշարժ, առանց շարժելու  
ձեռքերը կամ լեզուն: Այս անշարժ դիրքով էլ նա  
ընդունեց սուրբ Մասը: Մենք բավականին ժամանակ  
ունեինք՝ ականատես լինելու այս հրաշալի երե-  
վույթին՝ առանց ավելորդ շտապողականության, և  
շատերս տեսանք դա: Մինչ այդ օրը, ես անհավատ

Էի: Ես այնպիսի մոլեռանդ կաթոլիկ չեմ, որպեսզի տպավորության տակ ընկնեմ: Ես Աստծուն այնքան էլ չէի հավատում, միայն աշխատում էի չմեղանչել: Ապրիլին ես գնացի մեղքերի թողության, իսկ մինչ այդ, ես խոստովանության չէի գնացել քսաներեք տարի»: Տեսիլքի այս հրաշքը մեր Օրհնյալ Տիրամոր Գարաբանդալի հայտնության և Նրա պատգամի ճշմարտացիության ստույգ հաստատումն է:

Բայց դեռ ավելի մեծ հրաշք էր խոստացված:

## ՍՊԱՍՎԵԼԻՔ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՀՐԱՇՔԸ

Կոնչիտան հստակ ասել էր, որ Տիրամայրը խոստացել է շատ ավելի մեծ հրաշք Գարաբանդալում, որպեսզի բոլորը հավատան հայտնություններին և հնազանդվեն Պատգամին: «Քանի որ պատիժը, որին մենք արժանի ենք մեր մեղքերի համար, մեծ է, հրաշքը նույնպես պետք է մեծ լինի, քանի որ աշխարհը դրա կարիքն ունի: Դա տեղի կունենա Հինգշաբթի օրը Սուրբ Հաղորդության տոնի օրը, ժ. 20:30 ու կտեսի մոտ 25 ըովիք: Այն նաև կհամընկնի Եկեղեցու մեծ արարողության հետ: Այն հիվանդները, ովքեր կգան Գարաբանդալ այդ օրը, կբուժվեն, անհավատները դարձի կգան: Սոճուտում կմնա մշտական նշան՝ որպես Տիրամոր անսահման սիրո ապացույց իր բոլոր զավակների հանդեպ»: Կոնչիտան ասում է. «Նշանը, որ կմնա, հնարավոր

կլինի տեսնել, լուսանկարել և հեռարձակել, բայց  
անհնարին կլինի այն ձեռք տալ: Պարզ կլինի, որ դա  
այս աշխարհից դուրս ինչ-որ բան է, Աստծո կողմից  
տրված»: Կոնչիտային Տիրամոր կողմից թույլ է  
տրվել **8 օր առաջ հայտարարել Հրաշքի օրվա  
մասին:** Հաղորդակցության և ճամփորդության ներ-  
կայիս միջոցները հաշվի առնելով՝ **8 օրը** բավարար  
է աշխարհի մարդկանց այնտեղ հավաքվելու հա-  
մար: Այդ օրվա Հրաշքը կարող է լինել Աստծո  
կողմից մեզ տրված վերջին հնարավորությունը, և  
Տիրամոր վերջին ջանքը՝ փրկելու աշխարհը արդեն  
վերահաս Պատմից: Որոշ ժամանակ անց, Կոնչիտան  
գրեց. «Օրհնյալ Կույսն ինձ թույլ չի տալիս բա-  
ցահայտել Հրաշքի էությունը՝ չնայած ես այն արդեն  
գիտեմ: Ես ոչ էլ կարող եմ հայտնել դրա ամ-  
սաթիվը, որը նույնպես ինձ հայտնի է. ես կարող եմ  
դա անել միայն Հրաշքից ութ օր առաջ: Տիրամայրն  
ասել է, որ համայն մարդկությունը երկնքից նա-  
խազգուշացում կստանա»:

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Կոնչիտան գրել է. «Նախազգուշացումները  
գալու են անմիջապես Աստծուց և տեսանելի կլինեն  
ամբողջ աշխարհին, ցանկացած վայրում, ուր կարող  
է մարդը գտնվել:

Այն կլինի մեր մեղքերի բացահայտման պես և կտեսնվի ու կընկալվի բոլորի կողմից՝ հավատացյալ, թե անհավատ՝ անկախ նրանց կրոնական պատկանելության: Այն կտեսնվի և կընկալվի ողջ աշխարհում՝ յուրաքանչյուր մարդու կողմից»:

Դա տեղի կունենա երկնքում, ոչ ոք չի կարող խանգարել դրա իրականացմանը: Մենք նույնիսկ կգերադասենք մահացած լինել, քան անցնել այս «Զգուշացման» միջով: Այն մեզ չի սպանի, այլ «կուղղի» մեր գիտակցությունը:

Այն մեծ վախ կառաջացնի և կստիպի մեզ վերլուծել ինքներս մեր մեջ մեր անձնական մեղքերի հետևանքները: Այն կլինի՝ որպես գալիք Պատժի նախազգուշացում:

Այս ձեռով աշխարհին կառաջարկվի մաքրման միջոց, որը կօգնի պատրաստվելու Մեծ Հրաշքի արտասովոր շնորհին:

Օրհնյալ Տիրամայրը Խակինտային ասել էր. «Նախազգուշացումը կլինի այն ժամանակ, երբ պայմանները կլինեն ամենավատթարը»:

Ամսաթիվը տեսիլքի ականատեսներին չէր ասվել, սակայն Մարի-Լոլին գիտի դրա տարին և նա ասել է, որ Հրաշքը տեղի կունենա նախազգուշացումից հետո մեկ տարվա ընթացքում:

## ՊԱՏԻԺԼ.

Եթե մենք անտեսենք այս Պատգամը, Տիրամոր ասած Պատիժը կտարածվի ամբողջ աշխարհի վրա Մեծ Հրաշքից հետո: Տրանսի ժամանակ կարելի էր լսել, թե ինչպես են աղջիկները աղոթում անմեղ երեխաների համար, ու այդ պահին նրանց աչքերից արցունքներ էին հոսում: Այն օրվանից, ինչ նրանք լսել էին Պատժի մասին, զոհաբերության մեծ պատրաստակամություն են ցուցաբերել: Նրանք շատ են աղոթել մեղավորների և քահանաների համար: Նրանք հաճախ ասում էին, որ **եթե քահանաները չլինեն այնպիսին, ինչպիսին որ պետք է լինեն, շատ հոգիներ կկործանվեն:**

Կոնչիտան գրել է. «Ես չեմ կարող բացահայտել, թե դա ինչ Պատիժ կլինի, միայն կարող եմ ասել, որ դա կլինի Աստծո անմիջական միջամտության հետևանքով, ինչը Պատիժը դարձնում է ավելի սարսափելի և ահարկու, քան այն ամենը, ինչ մենք կարող ենք պատկերացնել: Այն պակաս ցավոտ կլինի անմեղ մանուկների համար, որոնք կմահանան ընական մահով, քան այն մանուկների համար, որոնք կմահանան Պատժի միջոցով: **Բոլոր քըիստոնյաները պետք է պատժից առաջ գնան խոստովանության, իսկ մյուսները պետք է ապաշխարեն իրենց մեղքերի համար:** Երբ ես Դա (Պատիժը)

տեսա, մեծ վախ զգացի, չնայած որ միաժամանակ տեսնում էի նաև մեր Օրհնյալ Տիրամորը: **Պատիժը Վրա կհասնի Հրաշքից հետո»:**

Երբ Սուրբ Տիրամայրը խոսել էր աղջիկների հետ Պատիժի մասին, Նրա դեմքը մեծ տրտմության մեջ էր եղել: Աղջիկները պատմում էին. «Մենք երբեք Նրան այդքան լուրջ չէինք տեսել: Երբ նա ասաց՝ «Բաժակը արդե՞ն լցվում է», նա խոսում էր շատ ցածր ձայնով»:

## **ՆՈՐ ՊԱՏԳԱՄ.**

1965թ. հունվարի 1-ին Կոնչիտան տեսավ Տիրամոր հայտնությունը, Ով նրան ասաց, որ հունվարի 18-ին՝ հայտնությունների չորրորդ տարեդարձին, նա նոր պատգամ կստանա: Այսպիսով, դեպքից վեց ամիս առաջ Կոնչիտան տեղյակ պահեց Տիրամոր խոստման մասին:

Հունիսի 18-ին, ավելի քան 2000 մարդ հավաքվեց Գարաբանդալում. Փրանսիացիներ, գերմանացիներ, անգլիացիներ, իտալացիներ, ամերիկացիներ, լեհեր: Նրանք միացան իսպանիայի տարբեր ծայրերից եկած խմբերին: Իսպանացիները փոքրամասնություն էին կազմում, թերևս այն պատճառով, որ հայտնությունները գրեթե հրապարակայնություն չէին ստացել: Ֆրանսիացիներն ամենամեծ խումբն էին կազմում: Այնտեղ կային լրագրողներ,

**տեղադրված** էին հեռուստատեսային խցիկներ, իտալական հեռուստատեսային ցանցից և NO-DO-ից (իսպանական պաշտոնական վավերագրական նորությունների ծրագիր) օպերատորներ։ Իր տանից դուրս գալով՝ ժ.23:30-ին, Կոնչիտան ուղղվեց դեպի Սոճուտ տանող ճանապարհը, այնտեղ, որ կոչվում էր Կուադրո։ Այստեղ նա ընկավ տրանսի մեջ, որը տևեց 16 րոպե։ Սուրբ Միքայելը հայտնվեց նրան և հայտնեց Տիրամոր ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԸ, որը հրապարակվեց հաջորդ օրը։ Այն հետեւյալն է.

«Պատգամը, որ Տիրամայրը հայտնել է աշխարհին սուրբ Միքայել Հրեշտակապետի միջոցով։

Հրեշտակն ասաց. «Քանի որ հոկտեմբերի 18-ի իմ Պատգամը շատ չտարածվեց աշխարհում, և այն ի կատար չի ածվել, ասում եմ ձեզ, որ սա կլինի իմ Վերջին Պատգամը։ Եթե առաջ բաժակը լցվում էր, հիմա այն արդեն թափվում է։ Շատ կարդինալներ, շատ եպիսկոպոսներ և շատ քահանաներ խոտորվել են ճշմարտությունից ու գնում են կործանման ճանապարհով՝ իրենց հետ տանելով շատ հոգիների։ Ավելի ու ավելի քիչ կարևորություն է տրվում ապաշխարանքին և Սուրբ Հաղորդությանը։ Դուք պետք է մեզ հետ փորձեք խուսափել Աստծո Բարկությունից։ Եթե դուք անկեղծ սրտով ներում խնդրեք Աստծուց, նա ձեզ կների։ Այդ ե՞ս եմ՝ ձեր

Մայրը, որ սուրբ Միքայել Հրեշտակապետի միջոցով ուզում եմ ասել ձեզ, որ շտկե՞ք, ուղղե՞ք ձեր կյանքը, փոխվե՞ք դեպի լավը, որ դուք արդեն ստանում եք վերջին նախազգուշացումները, որ ես ձեզ շատ եմ սիրում և չեմ ուզում, որ պատժվեք։ Անկեղծորեն ինդրեցե՞ք Մեզ, և կտրվի ձեզ։ Դուք պետք է ավելի շատ զոհողություններ անեք։ **Հիշե՞ք Հիսուսի Զարչարանքները»։**

Այս Պատգամից կարելի է հստակ հասկանալ Տիրամոր դժոհությունը այն սակավ ուշադրությունից, որին արժանացրել էր Նրա 1961թ. հոկտեմբերի 18-ի պատգամը։ *Օրհնյալ Տիրամայրը մայրական հոգատարություն է ցուցաբերում հոգեսորականների նկատմամբ և գտնում, որ Սուրբ Հաղորդությունը պետք է լինի մեր հավատքի առանցքը։ Որպեսզի քաջալերի մեր զոհաբերությունները, նա հիշեցնում է մեր Տիրոջ կրած Զարչարանքների մասին։ Մեր *Օրհնյալ Տիրամայրն ասել է, որ սա Իր վերջին պատգամն է։ Այդ պատճառով նա ուզում է, որ Իր բոլոր զավակներն ականջ դնեն Իր աղերսին՝ նախքան նախազգուշացումն ու Հրաշքը։ Քանի որ դա Աստծո Կամքն է, մենք պետք է քարոզենք և հնարավորինս շատ տարածենք այս կարևոր պատգամը։**

**Մյուս միակ մարդը Գարաբանդալում, որ տեսել**

Էր Օրհնյալ Տիրամորը, 38-ամյա իսպանացի ճգնավոր-վանական՝ հայր Լուկիս Մարի Անդրյուն էր։ 1961թ. օգոստոսի 8-ին հայր Լուկիսը ականատեսն էր Սոճուտում կատարավող իրադարձությունների, երբ հանկարծ նա դարձավ Գարաբանդալի դրամայի անմիջական մասնակիցը։ Բոլորը լսեցին, թե նա ինչպես բացականչեց. «Հրա՛շք, հրա՛շք»։ Նա ոչ միայն տեսել էր Կույս Մարիամին, այլ նաև՝ ապագան՝ «Մեծ Հրաշքը»։ Տրանսի մեջ գտնվող աղջիկներն ընկալել էին, որ Տիրամայրը նրան ասել էր. «Դու շուտով ինձ հետ կլինես»։ Չնայած վանականը երբեք լուրջ հիվանդություն չէր ունեցել՝ նա հենց այդ նույն գիշերը մահացավ լիակատար երջանկության մեջ։ Նրա վերջին բառերն էին. «Օ՛հ, ի՞նչ բարի և հոգատար Մայր ունենք մենք երկնքում... ի՞նչ երջանիկ եմ ես... ի՞նչ մեծ շնորհի է ինձ Օրհնյալ Տիրամայրը արժանացընել։ Ինչքա՞ն բախտավոր ենք մենք, որ Նրա նման Մայր ունենք երկընքում։ Պատճառ չկա վախենալու անդրշիրիմյան կյանքից։ Աղջիկներն իրենց օրինակով մեզ ցույց են տվել, թե ինչպես պետք է վարվել Օրհնյալ Կույսի հետ։ Կասկած չունեմ, որ այն, ինչ կատարվում է աղջիկների հետ, ճշմարիտ է։ Ինչու՞ է Օրհնյալ Կույսն ընտրել մեզ։ Սա իմ կյանքի ամենաերջանիկ օրն է»։ Այս բառերից հետո հայր Անդրյուն թեքեց

գլուխը և մեռավ։ Տիրամայրն ասել է, որ Հրաշքին հաջորդող օրը նրա մարմինը կգտնեն անփուտ վիճակում։

Օրհնյալ Տիրամայրը հատուկ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում բոլոր հոգևորականների նկատմամբ՝ անընդհատ խնդրելով նրանց դալ Գարաբանդալ։ Նա աղջիկներին օժտել է հոգևորականներին ճանաչելու ունակությամբ, անգամ այն ժամանակ, երբ նրանք դալիս էին աշխարհիկ մարդկանց պես հագնված, ինչպես նաև նրանց հոգիները բացահայտելու կարողությամբ։ Նա երեխաններին սովորեցրել էր, որ հոգևորականներն ավելի կարևոր են, քան հրեշտակները, քանի որ նրանք կարող են Պատարագի սուրբ արարողության միջոցով Հացն ու Գինին վերափոխել Քրիստոսի Մարմնի և Արյան։

## ՎԵՐՃԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ օրը՝ 1965 թ. նոյեմբերի 13-ին, Կոնչիտան ականատես եղավ Գարաբանդալի Տիրամոր վերջին հայտնությանը։ Մանրամասները Կոնչիտան շարադրել է նամակում, որի բառացի թարգմանությունը հետևյալն է։

«Մի օր՝ եկեղեցում, Տիրամայրը Սուրբ Հաղորդության ժամանակ ասաց, որ ես իրեն կտեսնեմ

**Սոճուտում:** Դա կլինի հատուկ հայտնություն, Նա կհամբուրի սրբազան առարկաները, որպեսզի ես հետո դրանք կարողանամ բաժանել: Ես անհամբերությամբ սպասում էի այդ օրվան, որպեսզի նորից տեսնեմ Օրհնյալ Կույսին և Փոքրիկ Հիսուսին, որոնք իմ կյանքում սերմանել էին Աստվածային Արքայություն:

Անձրեւում էր, բայց ինձ համար դա կարեւոր չէր: Ես գնացի դեպի Սոճուտը՝ ինձ հետ տանելով շատ **Վարդարանի համրիչներ**, որոնք մարդիկ տվել էին ինձ, որպեսզի նորից հետո բաժանեմ իրենց... Երբ ես վեր էի բարձրանում, ինքս ինձ հետ խոսում էի՝ ամաչելով իմ թերությունների համար՝ ցանկանալով ազատվել դրանցից, քանի որ չէի ցանկանում կանգնել Տիրամոր առաջ՝ առանց դրանցից մաքրվելու:

Երբ ես հասա Սոճուտ, սկսեցի հանել **Վարդարանները**, մի քաղցր ձայն լսեցի: Դա Կույսի ձայնն էր, որ կարելի է տարբերել մյուս բոլորի մեջ, որը տալիս էր իմ անունը: Ես պատասխանեցի Նրան: Հենց այդ պահին էլ տեսա Նրան՝ Երեխան դրկին: Նա սովորականի նման էր հագնված և ժպտում էր: Ես ասացի Նրան. «Ես բերել եմ **Վարդարանները**, որպեսզի համբուրես դրանք»: Նա ինձ ասաց. «Ես դրանք տեսնում եմ»: Ես ծամոն էի ծամում, բայց Երբ Նրան տեսա, դադարեցի ծամել: Մամոնը

պահեցի ատամիս տակ: Նա պետք է, որ դա  
նկատած լիներ, քանի որ ասաց. «Կոնչի՛տա, ինչու՞  
չես հրաժարվում ծամոնից և դրանով զոհողություն  
կատարում ի փառս Որդուս»: Ես, մի փոքր ամա-  
չելով ինքս ինձանից, հանեցի այն և գետնին նե-  
տեցի: Հետո Նա ասաց. «Հիշու՞մ ես ինչ ասացի  
Սրբերի օրը, որ դուք շատ կտառապեք Երկրի վրա:  
Հիմա ես դա քեզ կրկնում եմ: Հավատա՛ Մեզ և  
ամեն ինչ արա՛ Մեր Սրտերին հաճոյանալու համար՝  
ի բարօրություն քո եղբայրների, քանի որ այդ ձևով  
ավելի մոտ կգտնվես Մեզ»: Հետո ես ավելացրի.  
«Օ՛, մեր Տիրամայր, ես անարժան եմ այն Շնորհ-  
ներին, որ ստացել եմ Քո կողմից, իսկ Հիմա Դու  
հայտնվել ես ինձ՝ օգնելու կրել այն փոքրիկ խաչը,  
որ ես տանում եմ»: Նա ասաց. «Կոնչի՛տա, ես չեմ  
հայտնվում միայն քեզ համար, այլ իմ բոլոր զա-  
վակների համար՝ ցանկանալով նրանց մոտեցնել  
Մեր Սրտերին»: Նա խնդրեց այն իրերի համար, որ  
բերել էի. «Տու՛ր դրանք ինձ, որպեսզի կարողանամ  
համբուրել այն ամենը, ինչ բերել ես քեզ հետ»: Եվ  
ես ամեն ինչ տվեցի նրան: Ես ինձ հետ բերել էի  
նաև մի փոքրիկ խաչ, որը նույնպես տվեցի նրան  
համբուրելու: Նա համբուրեց այն և ասաց. «Դի՛ք  
այն Մանուկ Հիսուսի Զեռքը»: Ես դա արեցի, բայց  
Նա ոչինչ չասաց: Ես ասացի. «Ուզում եմ այս խաչը

տանել ինձ հետ, երբ մենաստան գնամ», բայց Նա չպատասխանեց: Բոլոր իրերը համբուրելուց հետո, Նա մեկնաբանեց. «Իմ Որդին այս համբույրով հրաշքներ կգործի: Բաժանի՛ր դրանք մարդկանց...»: «Իհարկե, ես այդպես էլ կանեմ»:

Այս ամենից հետո Նա խնդրեց, որ ես իրեն ասեմ այն բոլոր խնդրանքները, որ ստացել էի ուրիշներից: Նա ասաց. «Կոնչի՛տա, ասա՛ Իմ զավակներին՝ նրանք բոլորը Իմ Քողի տակ են»: Ես նկատեցի՝ «Քողը շատ փոքր է և բոլորիս համար տեղ չի լինի: Ի պատասխան՝ Նա Ժպտաց: «Կոնչի՛տա, գիտե՞ս, թե ինչու անձամբ չեկա հունիսի 18-ին աշխարհին Իմ Պատգամը հայտնելու: Որովհետև ինձ ցավ էր պատճառում դա անձամբ ասելը, բայց ես պետք է քեզ ասեմ, որ դա ձեր սեփական բարօրության համար է, որ դու դա հաղորդես ի փառս Աստծո: Ես շատ եմ սիրում ձեզ և ցանկանում եմ փրկել ձեզ, ձեզ բոլորիդ միավորել Հոր, Որդու և Սուրբ Հոգու շուրջը: Կոնչի՛տա, չե՞ս ուզում պատասխանել»: Ես ասացի. «Եթե կարողանայի միշտ տեսնել Քեզ, այո՛, բայց հակառակ դեպքում, չեմ կարող ասել, քանի որ ես շատ տկար եմ...»: «Արա՛ ինչ կարող ես, իսկ Մենք կօգնենք քեզ, ինչպես նաև Իմ դուստրեր Լոլիին, Խակինտային և Մարի-Կոռովին»:

Նա երկար չմնաց ինձ հետ: Նա նաև ասաց. «Սա

վերջին անգամն է, որ կտեսնեք ինձ այստեղ, բայց ես միշտ կլինեմ քեզ հետ և իմ բոլոր զավակների հետ»: Հետո Նա ավելացրեց. «Կոնչի՛տա, ինչու՞ հաճախ չես այցելում Որդուս Օրհնյալ Սրբավայրում: Ինչու՞ ես թույլ տալիս, որ ծուլությունը գլուխ բարձրացնի քո մեջ և ինչու՞ չես այցելում Նրան, Ով սպասում է քեզ օր ու գիշեր»:

Ինչպես ասացի, ուժեղ անձրև էր գալիս: Տիրամայրը և Նորածինը չէին թրջվել: Ես չէի զգում, որ անձրև է գալիս, քանի դեռ տեսնում էի նրանց, բայց երբ դադարեցի նրանց տեսնել, մինչև ոսկորներս թրջվեցի: Ես Նրան ասացի. «Օ՛, ի՞նչ երջանիկ եմ ես, երբ տեսնում եմ Ձեզ: Ինչու՞ հենց հիմա ինձ չեք վերցնում Ձեզ հետ»: Նա պատասխանեց. «Հիշի՛ր, ինչ ասացի Սրբերի օրը: Երբ դու ներկայանաս Աստծուն, պետք է Նրան ցույց տաս քո եղբայրների համար և ի փառս Աստծո բարի գործերով լի քո ձեռքերը, հիմա դու ոչինչ չունես ցույց տալու»:

Ահա և ամենը: Ես երջանիկ պահ ապրեցի՝ տեսնելով իմ երկնային Մորը և Մանուկ Հիսուսին: Ես դադարել եմ Նրանց տեսնել, բայց չեմ դադարել Նրանց զգալ: Նրանք նորից իմ հոգում սերմանեցին անսահման խաղաղություն, երջանկություն և իմ թերությունները հաղթահարելու ցանկություն, որ-

պեսզի կարողանամ ամբողջ ուժով սիրել Հիսուսին  
ու Մարիամին, որոնք այնքան շատ են սիրում մեզ»:

Կոնչիտան ավարտում է հետեւյալ կերպ. «Օրհնյալ  
Կույս Մարիամը նախապես ասել էր ինձ, որ Հիսուսը  
Պատիժը չի ուղարկում, որպեսզի ցավ պատճառի  
մեզ, այլ որպեսզի օդնի մեզ և դիտողություն անի,  
քանի որ մենք ոչ մի ուշադրություն չենք դարձնում  
Նրան: Այս նախազգուշացումը կկատարվի, որպես-  
զի մաքրագործի մեզ այն Հրաշքից առաջ, որով նա  
ցույց կտա **Իր մեծ Սերը**, և որպեսզի մենք հետեւնք  
Պատգամին»: Տիրամոր այս հայտնությամբ ավարտ-  
վում է Գարաբանդալի 2000-ից ավելի եղած հայտ-  
նությունների շարքը: **Հինգարթի օրը՝ ժ.20:30-ին,**  
**հստակ կնշվի, թե երբ տեղի կունենա Հրաշքը:**  
**Սրանով կնշանավորվի մարդկության փրկության**  
**պատմության մեջ նոր ժամանակաշրջանի սկիզբը:**

Մեր **Օրհնյալ** Տիրամայրը, ցուցաբերելով մեր  
նկատմամբ որպես **Մոր՝ Իր ունեցած մեծ Սերը,**  
աղերսում է մեզանից յուրաքնաչյուրին Իր հետ  
ստանձնել **Աստվածային Արդար Բազկի մասը լինե-**  
**լու պատասխանատվությունը,** որը շուտով իջնելու  
է կույր և խուլ մարդկության վրա: **Մենք պետք է**  
**իմանանք,** որ աշխարհում իրավիճակը չափազանց  
լուրջ է, և որ մենք ինքներս ենք մեզ ենթարկում  
գերագույն պատժի:

**Ի՞նչ է ասում գիտությունը Գարաբանդալի մասին.**

Շատ նշանավոր բժիշկներ են ուսումնասիրել այդ իրադարձությունները և այցելել են Գարաբանդալի այն մարդկանց, ովքեր ներգրավված են եղել այդ դեպքերին։ Ոչ ոք բավարար գիտական բացատրություն գեռես չի տվել այդ իրադարձություններին։ Բոլորը համաձայն են, որ այն, ինչ տեղի է ունեցել Գարաբանդալում, մարդկային տեսակետից, անբացատրելի է ու արժանի է հարգանքի և ուշադրության։ Մի բան է պարզ՝ մենք գործ ունենք որոշակի փաստերի հետ, որոնց գիտությունը չի կարող բացատրություն տալ։

Բազմամյա ուսումնասիրություններից հետո մի մանկաբույժ հաստատել է, որ աղջիկները միշտ էլ լիովին առողջ են եղել, և տրանսը ոչ մի հոգեբանական երևույթով չի բացատրվում։ Բժիշկ Ռիկարդո Պունկերնաուն՝ հայտնի բարսելոնացի նյարդահոգեբանը, նշում է. «Առկա փաստերի պարագայում դժվար է սոսկ բնական բացատրություն տալ։ Խիստ գիտական տեսանկյունից, գոնե ներկայումս, չի կարելի հերքել այս բոլոր երևույթների գերբնականության հնարավորությունը»։ Բժիշկ Գասկա Ռուիզը և բժիշկ Օրտիս Գոնսալեսը, որոնք նույնպես ուսումնասիրել են այս երևույթները, նշում են. «Լոելը մեր կողմից կլիներ իսկական

գիտական վախկոտություն։ Մենք որևէ համոզիչ գիտական բացատրություն չենք գտնում, որը կարող է հիմնավոր մեկնություններ տալ այս երևումներին»։

## ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ինչպես միշտ, Եկեղեցին մեծ զգուշավորություն ցուցաբերեց այս հայտնությունների հարցում։ Նախկինում Եկեղեցուց պահանջվեց տասներեք տարի՝ պաշտոնապես հաստատելու համար ֆաթիմայի հայտնությունները, անգամ այն բանից հետո երբ 70.000 մարդ ականատես էր եղել Արևի Հրաշքին։ Վատիկանի սուրբ Դիվանից հատուկ պաշտոնյա ուղարկվեց Գարաբանդալ՝ հայտնության վկաներին ուսումնասիրելու համար։

Նույն Հավատի Միաբանության առաջին քարտուղար Կարդինալ Օտտավիանիի հատուկ խընդուանքով Կոնչիտան 1966թ. իր մոր և մի հոգեկորականի ուղեկցությամբ մեկնեց Հռոմ։ Նա հանդիպեց Կարդինալ Օտտավիանիին և Վատիկանի այլ պաշտոնյաների։ Կարդինալ Մարելայի հետ նա արժանացավ Պողոս VI Պապի հատուկ ընդունելությանը։ Հայտնի պատճառներով Հռոմի այս միջամտության մասին ոչինչ ավելին չի կարող ասվել։ Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաստատել Կոնչի-

տայի այս այցելությունը սուրբ Դիվան՝ հերքելու համար այն կեղծ ասեկոսեները, որ իբր Նորին Սրբությունը Կոնչիտային չի արժանացրել հատուկ ընդունելության: Նա աղջկան ասել է. «**Կոնչի՛տա, ես օրհնում եմ քեզ և իմ միջոցով ամբողջ Եկեղեցին է օրհնում քեզ»:**

Կոնչիտան գրել է. «**Տիրամայրը ուզում է, որ Պատգամը հասնի ամբողջ աշխարհին... Օգուտ չկա հավատալ հայտնություններին, եթե չկատարենք տրված պատգամը»: Այդ պատճառով ժամանակն է, որ յուրաքանչյուր ոք լուրջ որոշում կայացնի կյանքի անկեղծ բարեփոխման վերաբերյալ՝ առանց երկար սպասելու Նախազգուշացմանը կամ Հրաշքին կամ որևէ այլ հատուկ նշանների, որ կարող են պատահել:**


Պողոս VI Պապը տալիս է իր օրհնությունը նաև 1971թ.: Երբ մայիսի 19-ին, Կոնչիտան, արդեն այլ անվամբ՝ Մարիա Կարմելա Սարակոն՝ Գարբանդալի Կարմելի Տիրամոր սուրբ Միքայելի անվան կենտրոնի տնօրենը, հանրությանն ուղղված իր ելույթում ասաց. «**Մենք աղոթում ենք Տիրոջը՝ օժանդակել Ձեզ և Ձեր քարոզչական աղոթքների միջոցով Եկեղեցւն և հատկապես քահանաներին շնորհելու առավել մեծ առաքինություն», սուրբ Հորը Վարդարանը հանձնելիս՝ տիկին Սարակոն մանրամասն**

բացատրեց, որ այն պատրաստվել է Գարաբանդալի այն սոճիների ճյուղերից, որտեղ կանգնել է Տիրամայրը։ Վարդարանի հետ կար նաև մի առարկա, որը համբուրել էր Օրհնյալ Կույսը իր բազմաթիվ հայտնությունների ժամանակ։ Սրբազն հայրը Վարդարանն ընդունելուց հետո մեծ քնքությամբ իր ձեռքը վերցրեց տիկին Սարակոյի ձեռքերը և ասաց. «Շնորհակալություն, շա՛տ շնորհակալություն»։ Մայիսյան ընդունելության ժամանակ Պապը անվերապահորեն ընդունեց քահանաների համար կատարվող աղոթքները։ Վատիկանը դեռևս հստակ բացատրություն չի տվել զեկուցված հայտնությունների վերաբերյալ, ... «Եվ չի էլ տա, ասել է սուրբ Հայր Պիոն, մինչև տեղի չունենան կանխատեսված իրադարձությունները»։



## ԼՈՒՅԱԻ ՏԵՐԱՎԱՅՐԸ

(1968թ. Էլ-Զեյթուն, Եգիպտոս)



Էլ-Զեյթունը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեի գլխավոր արքարձաններից մեկն է: Այնտեղ՝ կենտրոնական մասում՝ թուման Բեյ փողոցում, 1925թ. կառուցվել է Սուրբ Տիրամորը նվիրված տաճար: Հստ ավանդության՝ դա այն վայրն է, որտեղ, Եգիպտոս փախչելիս, ապաստանել էր Սուրբ Հնտանիքը:

Դպտի ուղղափառ եկեղեցու տոնացույցում Տիրամորը նվիրված 32 տոն կա: Ամենավերջինը համապատասխանում է այս երեսումներին և նշվում է ապրիլի 2-ին՝ որպես Լույսի Տիրամոր տոն:

Կլոր գմբեթներով այունազարդ տաճարը կրում է և՝ ղպտի, և՝ արաբական ճարտարապետության կնիքը: Կենտրոնական գմբեթը ամենամեծն է, մնացածը չորս անկյուններում են: Տաճարի դիմաց՝ փողոցի հակառակ կողմում, հասարակական փոխադրամիջոցի կանգառ է: Բացի վարորդներից՝ այնտեղ լինում են նաև վերանորոգող վարպետներ:

1968թ. ապրիլի 2-ին՝ երեկոյան ժամը 21:00-ի կողմերը, այնտեղ աշխատողներից Ֆարուք Մոհամմեդ Ատվան, պատահաբար գլուխը դարձնելով տաճարի կողմը, ամենամեծ գմբեթի վրա նկատում է մի կնոջ, որը, բռնված խաչից, կարծես ընկնում էր: Ֆարուքը մահմեղական էր, տառապում էր ոտքի մատների փտախտից և հաջորդ օրը նրան պետք է վիրահատեին: Մյուս օրը, սակայն, երբ ներկայանում է բժշկին, վերջինս ապշած հայտնում է, որ ամբողջովին առողջացել է:

Դա Լույսի Տիրամոր առաջին հրաշքն էր:

Կինը ճերմակ էր հագնված՝ միանձնուհու նման: Անմիջապես բժիշկ են հրավիրում, ղպտի քահանայի որդին շտապում է հորը կանչելու, տեղեկացնում են եկեղեցու մեծավորին. և ահա ներկա մի կին հանկարծ աղաղակում է. «Մեր Տիրամայր Մարիամը»: Ներկաներն սկսում են աղոթել: Երեսումը տեսում է մի

**Քանի րոպե ու անհետանում:**

Այդ օրվանից հետո, գրեթե մեկ շաբաթ, մինչև ապրիլի 9-ը, Տիրամայրը չի երևում: Լույսի Տիրամայրը երևում էր հատկապես գիշերը՝ երբեմն շրջապատված սպիտակ աղավնիներով, որոնք ճախրում էին Նրա շուրջը:

1968թ. ապրիլից մինչև 1969թ. հունիս, շաբաթը 2-3 անգամ երևումներ են լինում: Երբեմն ամեն օր, երբեմն օր ու մեջ: Հետագայում, մինչև 1970թ., ավելի հազվադեպ են դառնում: Տևում էր մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ: Ամենաերկարը 1968թ. հունիսի 9-ին էր. սուրբ Մարիամը հավատացյալների հետ մնում է երեկոյան ժամը 21:00-ից մինչև առավոտյան ժամը 4:00:

Եգիպտոս ժամանած բազմաթիվ զբոսաշրջիկների վիճակվել է մի քանի անգամ ականատես լինելու տեսիլքին:

Քաղաքում իրարամերժ լուրեր են տարածվում. ոմանք ասում էին, թե մարդկային երեակայության խաղ է, մյուսները ենթադրում են, որ մարդկանց ուշադրությունը շեղելու միջոց է: Հակառակն ապացուցելու համար անջատում էին քաղաքի լույսերը: Նույն նպատակով կտրում են նաև այն արմավենին, որի կատարին երևացել էր Երկնավոր Մայրը:

**Ընդհանրապես երևմանը նախորդում էին լույսի**

շողեր կամ, ինչպես մարդիկ նկարագրում են, անձրև: Տիրամայրը շարժվում էր գմբեթների վրայով, երբեմն հենց գմբեթի միջից էր դուրս գալիս:

Հարյուրավոր երեսումների ընթացքում Տիրամայրը ոչինչ չի ասում: Նա մարդկային կերպարանքով չէր. ծփում էր երկնքում, և այդ շարժումը զգեստով և քողով էր արտահայտվում: Աչքերը չէին երեսում: Մերթ ժպտում էր, մերթ լուրջ էր, երբեմն՝ նույնիսկ տխուր: Գլխի շուրջը լուսապսակ չէին տեսել, բայց ոմանք ասում էին, որ թագ ուներ, ոմանք ձեռքին ձիթենու ճյուղ էին նշմարել:

Երբեմն Հիսուս Մանկան հետ էր երեսում. երկու անգամ երեման ժամանակ նրանց հետ էր նաև սուրբ Հովսեփը:

Երեսումներին ականատես են մինչև 250.000 մարդ՝ տարբեր դավանանքի ներկայացուցիչներ՝ քրիստոնյա, հրեա, մահմեդական, անգամ՝ անհավատ: Ամեն գիշեր 50.000-100.000 մարդ էր գալիս տաճարի դիմաց, այնպես որ երթևեկությունը խանգարվում էր: Բոլորն աղոթում էին, յուրաքանչյուրն իր ձեռվ. մահմեդականները ղուրանն էին կարդում, ղըպտիներն ու կաթոլիկները հունարեն կամ արաբերեն աղոթքներ էին արտասանում: **Հրաշքներ էին լինում՝ հիվանդներ էին բուժվում և բարձրաձայն վկայում ստացած շնորհի մասին:**

Գուբրանների ընտանիքը՝ ամուսինը կնոջ և երկու դստեր հետ, գրեթե ամեն օր ներկա էր երեսմանը:

«Առաջին 15 օրերին չէինք հասկանում, թե որտեղից էին տեսիլքները՝ Հելիոպոլիսում, թե՞ Զեյթունում: Հետո մի օր վերջապես տեսանք: Ամեն օր այնտեղ էինք գնում: Երբեմն մեծ սպիտակ աղավնիներ էին լինում, որոնք շրջապատում էին գմբեթները: Տիրամայրն անցնում էր գմբեթների վրայով և կանգնում այնտեղ, որտեղ երեխաներին են մկրտում կամ գմբեթի վրա, կամ երկնքում՝ լուսնի դիմաց, կամ արմավենու վրա, կամ նույնիսկ փոքր ձիթենու վրա: Ամեն երեկո՝ ընթրիքից հետո, տանից դուրս էինք գալիս և եկեղեցու հարեվանությամբ անցկացնում գիշերը: Եվ այսպես մեկ տարի շարունակ, համարյա ամեն գիշեր: Կարծես մեկ միլիոն վատտի ուժգնության լուսավորություն լիներ, որը տարածվում էր շրջակայքի վրա»:

Տիկին Գուբրանը պատմում է մի աղջկա՝ Թերեզ Գատալլայի բուժման մասին: Թերեզն արդեն 17 տարեկան էր. նա մեկ ու կես տարեկանից անդամալույծ էր: Նրա ոտքին կապարե կոշիկներ էին: Աղոթում էր Տիրամորը, որ բուժի իրեն:

Գալով եկեղեցու փողոց՝ խնդրում է մի ոստիկանի օգնել հանելու կոշիկները, ապա, մտնելով տաճար, վկայում է հրաշքի մասին: Ինչպես ասում է բարե-

պաշտ ընտանիքը, այդ մասին գրվել է թերթերում:

Բազմաթիվ հրաշքներ են լինում նաև մահմեծական ընտանիքների հետ: Դրա ապացույցն է տիկին Իշրա Մահմուդը՝ նույնպես անդամալույծ, որի մարմինը ջղաձգությունից ցնցվում էր: Նա իր անվասայլակից ելնում է ու աղաղակում է Աստծո փառքը:

Զեյթունի եկեղեցի այցելելով՝ բուժվել են անբուժելի արատներից և ծանր հիվանդություններից տառապող բազմաթիվ մարդիկ: Մասնագետները, որոնք ուսումնասիրել ու քննարկել են այդ երեվույթները, ընդունում են կատարվածի գերբնական ծագումը: Ի դեպ, առ այսօր այդ հրաշքները շարունակվում են:

Տիրամայրը՝ ճերմակ զգեստով, քողով, գեղեցիկ արտաքինով 13 տարեկան աղջկա տպավորություն էր թողնում: Երեմն աղոթողի դիրքում էր, երեմն ծնրադրում և խաչակնքում էր. հաճախ օրհնում էր ներկաներին:

Էլ-Զեյթունի երեսումների ամենաբնորոշ հատկությունն այն է, որը Տիրամայրը երեսում էր բոլորին և անդամ նրան լուսանկարելու հնարավորություն է եղել: Այդ երեսումների ընթացքում նա ոչ մի պատգամ չի թողել. իր ծնրադիր դիրքով Սուրբ Կույս Մարիամը պարզապես հրավիրել է աղոթքի:

# ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՐԱՄԱՅՐԸ

(1981թ. Մեջուգորիե, Բոսնիա-Հերցեգովինա)



Խաղաղության Սուրբ Տիրամոր իրական պատկերը,  
որ երևացել է լուսանկարի մեջ՝ 1988թ.-ին Մեջուգորիեի սուրբ Զեյմս եկեղեցում:

Նա 1981թ.-ի հունիսի 24-ից (վեց երեխաների) մինչև օրս՝ 40 տարուց ավել է, որ երևում է Բոսնիա Հերցեգովինայի Մեջուգորիե փոքրիկ ավանում և տալիս Պատգամներ ողջ աշխարհի համար: Ավան, որն այսօր աշխարհի ամենաճանաչված և ամենաշատ ուխտավորներ ընդունող վայրերից մեկն է:

Մեր Սուրբ Մայրը իր ուղերձներից մեկում ասել է.  
**«Ի՞մ զավակներ, երբ աղոթում եք Վարդարանը,**

**Իմ Մայրական Սիրտը չի դիմանում վարդերի անուշահոտ բույրին, և ես շտապում եմ ձեզ մոտ գալ...»:**

1981թ. հունիսի 26-ին երեխաները անհամբերությամբ սպասում էին երեկոյին՝ հանդիպելու Տիրամորը: Ճանապարհին երեք անգամ շողացող տարօրինակ լույս են տեսնում: Եվ երեսում է Տիրամայրն իր ամբողջ հմայքով, ի դեպ, այդ օրը Պողբըրդո բլրի վրա ավելի բարձր մասում, քան նախօրեին: Երկնավոր Մայրը անմիջապես անհետանում է և դարձյալ հայտնվում, երբ երեխաները սկսում են աղոթել, ուրախ և խաղաղ ժամփով: Այդ օրը երեխաները մեծերի խորհրդով իրենց հետ օրհնված ջուր էին տարել՝ համոզվելու համար, որ տեսիլքը սատանայական բնույթ չուներ: Եվ երբ Միրիանա Դրադիչելիչը հարցնում է նրա անունը, տիկինը պատասխանում է. «**Ես Սուրբ Կույս Մարիամն եմ**»: Պողբըրդոյից իջնելիս՝ Տիրամայրը դարձյալ երեսում է, բայց միայն Մարիա Պավլովիչին ասելով. «Խաղաղությո՛ւն, խաղաղություն, միայն խաղաղությո՛ւն», և արցունքոտ աչքերով շարունակում է. «Խաղաղություն պետք է տիրի Աստծո և մարդու միջև, մարդկանց միջև»: **Մարիան Տիրամոր հետեւում նշմարում է խաչ**: Այս հանդիպումը տեղի է ունենում երեսումների վայր տանող ճանապարհի

**մոտավորապես կեսին:**

Հունիսի 27-ին Տիրամայրը երեք անգամ է երեռում երեխաններին: Այդ օրը Պատգամ է տալիս եկեղեցականներին՝ հաստատուն լինել իրենց հավատքում և պաշտպանել ժողովրդի հավատը: Մեկ անգամ ևս երեխանները նշան են խնդրում՝ մարդկանց ապացուցելու իրենց ճշմարտախոսությունը: «Ոչնչից մի՛ վախեցեք, - լինում է պատասխանը, - Աստված ձեզ հետ կլինի, ի՛մ հրեշտակներ, գնացե՛ք Աստծո խաղաղությամբ» ասելով՝ Տիրամայրն անհետանում է:

Երեռումների լուրը շուտով տարածվում է շրջանում, և հաջորդ օրը արդեն 15000 մարդ էր հավաքվել երեխանների շուրջը: Ժողովրդապետ Հայր Զողո Զովկոն հարցուփորձ է անում երեխաններին: Նույն օրը Տիրամայրը պատգամ է տալիս մարդկանց և եկեղեցականներին հավատալ ամբողջ սըրտով և ոչնչից չվախենալ: Ու երեխանների այն հարցին, թե ինչու՞ եկեղեցում չի երեռում, Երկնավոր Մայրը պատասխանում է. «Երանի նրանց, ովքեր առանց տեսնելու կհավատան»:

1981թ. հունիսի 29-ին երեխաններին տանում են Մոստար՝ բժշկական քննության: Հետազոտելուց հետո գլխավոր բժիշկը հայտնում է, որ երեխանները «խենթ» չեն, ինչպես ասել են նրանց բերողները, այլ կատարյալ առողջ են: Այդ օրը մի բժշկուհի, որը

Հետևում էր դեպքերին և երեխաներին, խնդրում է նրանց շոշափել Տիրամորը: Երեխաները ձեռքը տանում են դեպի Աստվածածնի ուսը. Բժշկուհին ծակոց է զգում ու հայտնում. «Այստեղ տարօրինակ մի բան է կատարվում»:

Այդ օրը հրաշքով բուժվում է Դանիել անունով մի հիվանդ, որին ծնողները բերել էին Մեջուգորիե՝ հատուկ աղոթելու նրա բուժման համար: Տիրամայրը խոստացել էր երեխային բուժել, եթե ծնողները մեծ հավատքով աղոթեին և ծոմ պահեին:

Հունիսի 30-ին երկու երիտասարդուհի երեխաներին առաջարկում են մեքենայով զբոսնել: Խորամանկ աղջիկների նպատակն էր պարզապես խանդարել նրանց երեսումների ժամին տեղում լինելուն: Սակայն երեկոյան ժամը 18:00-ի կողմերը երեխաներին մի ներքին ուժ ստիպում է դուրս գալ մեքենայից. Նրանք ծնրադրում են ու սկսում աղոթել. և ահա այդտեղ էլ Տիրամայրը երեսում է նրանց: Այդ օրը միայն յոթ անգամ աղոթում են «Հայր մեր»-ը, իսկ երեսան երկրորդ օրը, երբ Տիրամայրը Մանուկ Հիսուսը գրկին, կանչել է իր մոտ երեխաներին, նրանք ձեռք-ձեռքի տված առաջ են եկել, ծնրադրել ու սկսել աղոթել «Հայր մեր»-ը, ապա մեկ անգամ «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ»-ը և «Փա՛ռք Հոր»-ը: Սուրբ Կույսը նրանց հետ միասին աղոթել է բոլոր

աղոթքները, բացի «Ողջույնից»: Այդ օրվանից ոստիկանները նույնպես սկսում են արգելել ժողովրդին և երեխաներին գալ երևումների բլուր: Սակայն Աստվածամայրը շարունակում է երեալ նրանց գաղտնի վայրերում. նրանց տներում և դաշտերում: Հետզհետե սկսում են վստահություն ձեռք բերել և ազատ խոսել Գոսպայի (Տիկնոջ) հետ, լսել նրա խորհուրդները, պատգամները և նախազգուշացումները: Մինչ այդ, ժողովրդապետն ուխտավորներին ընդունում էր եկեղեցում և բոլորը միասին աղոթում էին Վարդարանը: Երբեմն երեխաներին Գոսպան երևում էր եկեղեցում:

Մի օր, Վարդարան աղոթելիս, ժողովրդապետը նույնպես տեսնում է Տիրամորը: Հուզված ընդհատում է աղոթքը և սկսում երգել «Որքա՛ն գեղեցիկ ես, ո՛վ Սուրբ Կույս Մարիամ» լիթանիան՝ գովերգը: Եկեղեցում բոլորն զգում են, որ գերբնական բան է տեղի ունենում: Վարդապետը, որ մինչ այդ կասկածում էր և գեմ էր երևումների մասին շրջող լուրերին, դառնում է նրանց ամենամեծ պաշտպանը: Այդ պատճառով նրան նույնիսկ բանտարկում են:

1982թ. հունվարի 15-ից ժողովրդապետության եկեղեցում քահանան տեղ է հատկացնում երեխաներին՝ նրանց պաշտպանելու սպառնացող վտանգից: Սակայն 1985թ. ապրիլին թեմի եպիսկոպոսն

արգելում է եկեղեցին օգտագործել՝ որպես երևումների վայր։ Անցնում են եկեղեցուն պատկանող տան սենյակներից մեկը։

Երևումների առաջին օրվանից մինչ օրս, Գոսպան ընդամենը 5 օր է բացակայել։ Եվ ընդհանրապես, եթե Նա նախօրոք չպայմանավորվեր, ոչ ոք չէր իմանում Նրա երևալու պահը, վայրը կամ, առհասարակ, թե ում էր երևալու։ Երևումը տևում էր երկու րոպեից մինչև մեկ ժամ՝ անկախ երեխաների կամքից։



Տիրամայրը տարիների ընթացքում տվել է խաղաղության, հավատի, ապաշխարության, աղոթքի, ծոմի մասին Պատգամներ:

**1984թ.** մարտ ամսից, յուրաքանչյուր հինգշաբթի, Գոսպան պատգամ էր տալիս տեսանողուհի Մարիա Պավլովիչին՝ փոխանցելու Մեջուգորիեի ժողովրդապետության հավատացյալներին և ուխտավորներին: **1987թ-ից** առ այսօր այդ պատգամները հինգշաբթի օրերի փոխարեն, Տիրամայրը շարունակում է տալ յուրաքանչյուր ամսվա 25-ին: Առաջին օրվանից նա հայտնել էր, թե հատուկ ընտրել էր այդ ժողովրդապետությունը և ցանկանում էր այն առաջնորդել: «Ապաշխարե՛ք այս ժողովրդապետությունում. այսպիսով բոլոր այստեղ եկողները կապաշխարեն» (1884թ. մարտի 8): «Պահանջում եմ ձեզնից՝ այս ժողովրդապետության բոլոր անդամներից, ապրելու իմ պատգամներով» (08.16. 1984թ.): Նա նաև տարբեր պատգամներով հատուկ շեշտում է Պատարագի, Սուրբ Հաղորդության և Սուրբ Հոգու հանդեպ մասնավոր ջերմեռանդության կարևորությունը, խրախուսում է Սուրբ Գրքի ընթերցումը՝ հորդորելով այն ունենալ տանը և պահել պատվավոր տեղում: Երկար տարիների երեսումների ընթացքում Տիրամայրը տեսանողների միջոցով զանազան պատգամներ է փոխանցել մեզ (և շարունակում է փո-

խանցել): Դրանք կարելի է ամփոփել հինգ հիմնական խմբում՝ **ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏ, ԴԱՐՁ, ԱՂՈԹՔ և ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** (Աստվածամոր այս պատգամին հետևողները հիմնականում չորեքշաբթի և ուրբաթ օրերին շուրջօրյա ծոմ են պահում (հայ և ջուր)):

## **Մի քանի խոսք տեսանողների մասին**

**Միրիանա Դրագիչեկիչ-Սոլդո.** ծնվել է 1965թ. մարտի 18-ին Սարակոյում: Մինչև 1982թ. դեկտեմբերի 25-ը ունեցել է ամենօրյա երկումներ, որոնց ընթացքում Գոսպան նրան հայտնել է 10 գաղտնիք: Այդ օրվանից Տիրամայրը նրան երկում է տարին մեկ անգամ, ծննդյան օրը՝ մարտի 18-ին: 1987թ. օգոստոսի 2-ից, յուրաքանչյուր ամսվա երկրորդ օրը, լսում է Երկնավոր Մոր ներքին ձայնը, երբեմն նաև տեսնում, և նրանք միասին աղոթում են անհավատների համար:

Ամուսնացած է, ունի երկու երեխա, ընտանիքի հետ ապրում է Մեջուգորիեում: Տիրամայրը նրան հանձնարարել է աղոթել նրանց համար, ովքեր անհավատ են և չգիտեն Աստծո մեծ Միրո մասին:

**Իվանկա Իվանկովիչ-Ելեզ.** ծնվել է 1966թ. հունիսի 21-ին Բիակովիչում, Մեջուգորիեի ժողովրդապետությունում: Տիրամոր ամենօրյա երկումները տեսել են մինչև 1985թ. մայիսի 7-ը. այդ ընթացքում

**Երկնքի Թագուհին նրան նույնպես 10 դադտնիք է փոխանցել և հայտնել, որ դարձյալ կերևա ամեն տարվա հունիսի 25-ին:**

**Ամուսնացած է, ունի երեք երեխա, ընտանիքով ապրում է Մեջուգորիեում: Տիրամոր թելադրանքով աղոթում է ընտանիքների համար:**

**Յակով Կոլո.** ծնվել է 1971թ. մարտի 6-ին Սարակոյում: Ամենօրյա երեսումները տևել են մինչև 1998թ. սեպտեմբերի 12-ը, երբ ստացել է վերջին՝ 10-րդ դադտնիքը: Այդ օրվանից Տիրամայրը նրան երեսում է տարին մեկ անգամ՝ դեկտեմբերի 25-ին: Ամուսնացած է, ունի երեք երեխա, ապրում է Մեջուգորիեում: Տիրամայրը նրան հանձնարարել է աղոթել հիվանդների համար:

**Իվան Դրագիչեկիչ.** ծնվել է 1965թ. մայիսի 25-ին Բիակովիչում՝ Մեջուգորիեի ժողովրդապետությունում: Այսօր էլ շարունակում է ունենալ ամենօրյա երեսումներ: Գոսպան նրան արդեն փոխանցել է 9 դադտնիք: Ամուսնացած է, ունի երեք երեխա: Ընտանիքի հետ ապրում է Մեջուգորիեում և ԱՄՆ-ում: Հատուկ նպատակով Տիրամայրը նրան հանձնարարել է աղոթել երիտասարդների և քահանաների համար:

**Վիկա Իվանկովիչ-Միատովիչ.** ծնվել է 1964թ. սեպտեմբերի 3-ին Բիակովիչում՝ Մեջուգորիեի ժո-

**Դովրդապետությունում:** Շարունակում է ունենալ ամենօրյա երևումներ: Գոսպան արդեն նրան հայտնել է 9 գաղտնիք: Վիկան ամուսնացած է, ունի մեկ երեխա և ապրում է Կրեչին Գրադակում՝ Մեջուգորիեի մոտ: Նրա աղոթքի հատուկ նպատակը հիվանդներն են:

**Մարիա Պավլովիչ-Լունետի.** Ծնվել է 1965թ. ապրիլի 1-ին Բիակովիչում՝ Մեջուգորիեի ժողովրդապետությունում: Շարունակվում են ամենօրյա երևումները: Նրա միջոցով Տիրամայրը մեզ և ամբողջ աշխարհին պատգամ է տալիս յուրաքանչյուր ամսվա 25-ին: 1984թ. մարտի 1-ից մինչև 1987թ. հունվարի 8-ը, այդ պատգամները եղել են ամեն հինգշաբթի: Այդ օրից մինչև այսօր պատգամները շարունակվում են ամեն ամսվա 25-ին: Ամուսնացած է, ունի չորս երեխա, ընտանիքով ապրում է Իտալիայում և Մեջուգորիեում: Նրա աղոթքների հատուկ նպատակը քավարանի հոգիներն են:

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄՈՐ ՊԱՏԳԱՄԸ**  
**ՄԵԶՈՒԳՈՐԻԵԻՑ ՌԴ ԱՇԽԱՌՀԻՆ 25.01.2023թ.**

**Տրված է Մարիա Պավլովիչ Լունետի միջոցով**

**«Սիրելի՝ զավակներ, աղոթե՛ք ինձ հետ խաղաղության համար, քանզի Սատանան ցանկանում է պատերազմ և ատելություն սրտերում և ազգերի**

**մեջ:** Ուստի, աղոթեք և ձեր օրերը զոհաբերություն արեք պահքով և ապաշխարությամբ, որ Աստված ձեզ խաղաղություն տա: Ապագան խաչմերուկի վրա է, քանի որ ժամանակակից մարդն Աստծուն չի ուզում: Ահա թե ինչու է մարդկությունը գնում դեպի կործանում: Դուք, բալիկնե՞րս, իմ հույսն եք: Աղոթե՛ք Ինձ հետ, որ ինչը ես սկսել եմ Ֆաթի-մայում (1917թ.) և այստեղ (1981թ.) ի կատար ածվի: Եղե՛ք աղոթող և խաղաղության վկա ձեր շրջապատում և եղե՛ք խաղաղարարներ:

«Նորհակալ եմ իմ Կանչին արձագանքելու համար»: (25, Հունվարի, 2023թ. Բոսնիա-Հերցեգովինա)

Այսօր հարյուր հազարավոր ուխտավորներ այցելում են Մեծուգորիե: Ոմանք հանդիպում են տեսանողների հետ, ոմանք վայելում են Տիրամոր երանելի ներկայությունը, իսկ ոմանք էլ, հավատով զինված, արժանանում են հրաշքների շնորհին:



# ԱՍՎԱԾԱՄՈՐ ՏՈՒՆԸ՝ ՍՈՒՐԲ ՏԵԱԿԸ




Իտալական հողի վրա՝ Լորետոյում է գտնվում  
Սուրբ Կույսի Տունը։ Այս այն Տունն է, որ  
մարիամական ուխտատեղիների մարդարիտն է։ Այս  
այն Տունն է, որտեղ սրբազն խոսակցություն տեղի  
ունեցավ Գաբրիել Հրեշտակի և սրբուհի Կույս

**Մարիամի միջև:** Օ՛հ, օրհնյա՛լ պատեր, որ լսեցիք  
այդ խոսակցությունը։ Այս Տունը ոչ միայն  
Մարիամինն է, այլև՝ Աստծունը։

Տիրամոր Տունը, Հիսուսի Տունը, բոլոր ժամա-  
նակների քրիստոնյաների համար եղել է մեծա-  
րանքի առարկա՝ սկսած առաջին դարերից։

Կոստանդիանոս կայսեր օրոք, Հեղինե Թագուհին  
այս տան շուրջ կառուցեց հոյակապ մի տաճար,  
բայց մահմեղականների տիրապետության ժամա-  
նակ տաճարն ավերվեց և միայն Սուրբ Տնակը  
մնաց։ Բայց 1921թ. մայիսի 10-ին Սուրբ Տնակը  
հայտնվեց Դաղմատիայի հողում (Ներկայիս Խորվա-  
թիայում), և ոչ ոք չկարողացավ բացատրել, թե ինչ-  
պես եղավ և Տնակն ինչպես տեղափոխվեց։ Պատ-  
միչը գրում է. «Ադրիական ծովի բնակիչները առա-  
վոտյան տներից դուրս եկան, որ գնան Փիում  
քաղաք, հանկարծ տեսան մի շինություն, որ մեկ օր  
առաջ չկար։ Ամեն կողմից ժողովուրդն սկսեց  
այնտեղ վագել. քննարկում էին, թե խորհրդավոր  
տունը ինչպե՞ս է հայտնվել այստեղ։ Տունը շինված  
էր կարմիր, քառակուսի քարերով և պատված էր  
կրաղյուսով։ Ամենքն էլ զարմացած էին տան ճար-  
տարապետության և հնության տեսքից։ Մանա-  
վանդ չէին կարող բացատրել, թե ինչպես է, որ  
տունը կանգուն է առանց հիմքի։ Միակ դռնից ներս

մտան ու տեսան, որ մի կողմում խորան կա, վրան՝ հունական խաչ: Խորանի աջակողմում Սուրբ Կույսի արձանիկն էր՝ Հիսուս Մանկանը գրկած:



Դեմքերը սեացած էին. որքա՛ն ժամանակ է, որ ոչ մեկը չէր սրբել: Եվ երբ սկսեցին որոնումները, պարզվեց, որ այս տան հիմքերը Գալիլիայի մեջ են գտնվում, իսկ տունը՝ Դաղմատիայում: Երեք տարի անց, Սուրբ Տունը Դաղմատիայից էլ անհետացավ՝ վշտի մեջ թողնելով բնակիչներին: Եվ երբ սկսվեցին

որոնումները, լուրեր եկան, թե Տնակը հայտնվել է իտալիայի Ռեքանթի գավառի թխկիների անտառում: Քիչ ժամանակ հետո, Տնակը երկու անգամ ևս տեղափոխվեց, և հասկանալի էր դարձել արդեն, որ հրեշտակներն էին Սուրբ Տնակի տեղափոխությունները կատարում, և վերջապես Տնակը հաստատվեց իտալիայի Լորետոյում, ուր և գտնվում է մինչեւ այսօր՝ պարփակված քաղաքի կաթողիկեի մեջ: Խորանի վրա ոսկեզօծ տառերով գրված է:

**«ԵՎ ԱԹՍՏԵՂ ԱՍՏԾՈ ԲԱՆԸ ՄԱՐՄԻՆ ԱՌԱՎ: ՆԱ ԱՍՏԾՈ ԲՆԱԿԱՐԱՆ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵԶ ԵՎ ԳԱՎԻԹԸ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ»:**

Հազարավոր ուխտավորներ աշխարհի չորս ծագերից հավատով ու արցունքով ուղեղորվում են այստեղ և Աստվածամոր Օրհնությունն ստանալով՝ վերստին դառնում են իրենց երկրները:

† † †

**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սուրբ Տնակի հետ կապված իմ զարմանալի վկայությունը նույնպես ցանկանում եմ կիսվել այստեղ, քանզի ամեն ինչ էլ Տիրոջ կամքով և թույլտվությամբ է լինում:

Երբ այս պատմությունը կարդացի 2022թ. փետրվարին, այնքան մեծ ցանկություն առաջացավ Սուրբ Տնակը տեսնելու, պատերին հպվելու, սըրբությունը շնչելու, քանզի փոխաբերական իմաստ-

ով, փաստորեն, այս Տնակը Նազարեթի սուրբ Աստվածամոր Ավետման տաճարի կարծես մի կըրկնօրինակ է դառնում: Որոշ ժամանակ անց, իտալիային մոտ ապրող ընկերուհուս մեկ տարեկան երեխան ապրիլի սկզբին կոկորդում մնացած կերակուրի պատճառով մահացու վտանգի մեջ եղավ, և բոլորս աղոթում էինք Սուրբ Աստվածածնին, որ հասնի օգնության, նաև սուրբ Վարդարանը աղոթեցինք: Եվ ահա սուրբ Շարբելի և սուրբ Տիրամոր բարեխոսությամբ փոքրիկ Մարիամիկը փրկվեց Աստծո հրաշքով, կարծես մի վարագույր քաշվեց և բժիշկներից մեկը հանկարծակի տեսավ պատճառը և անհրաժեշտ վիրահատական միջոցներով փրկեց երեխայի կյանքը: Հասավ մեր օրհնյալ Սուրբ Տիրամայրը իր փոքրիկին օգնության ու իր գրկից բաց չթողեց, ինչպես որ Մանուկ Հիսուսին էր պաշտպանում սուրբ Հովսեփի օգնությամբ: Եվ ահա այս դեպքը համընկավ Սուրբ Տնակի մասին կարդացած խոհերիս հետ և խնդրեցի ընկերուհուս, քանի որ մոտ են ապրում, եթե ուխտի գնան՝ չնորհակալություն ասելու Սուրբ Մարիամին, ապա Լորետոյի Սուրբ Տնակը այցելեն: Այդ ընթացքում Տերը ինձ հրաշքով մայիսի 17-ին տարավ երուսաղեմ (վերևում պատմել եմ) և եղա Նազարեթի

**Ավետման տաճարում՝ Օրհնյալ Աստվածամոր Սուրբ  
Տանը, որտեղ ապրել էր Սուրբ Հնտանիքը... Իսկ  
հունիսի 16-ին ընկերուհիս իր ընտանիքով, փոքրիկ  
Մարիամիկի հետ գնաց Լորետո ուխտագնաց-  
ության. այնքան էի ուրախացել ու խնդրեցի, որ եթե  
հնարավոր էր, ինձ համար նկարեր ներսը, որ ես էլ  
տեսնեի, հոգով ներկա լինեի... Սա էլ մի հրաշք  
երազանք էր, ու հազար փա՛ռք Ամենակարող Սուրբ  
Երրորդությանը, որ իրագործեց Սուրբ Տիրամոր  
բարեխոսությամբ:**

Երբ ամիսներ անց ընկերուհիս եկավ Հայաստան  
(Աստծո Օրհնությունները Հեղվեն իր և իր ընտանիքի  
վրա լիուլի), ինձ էր բերել մի փոքրիկ սրբապատկեր՝  
Սուրբ Տնակի խորանի վրայի Տիրամոր և Փոքրիկ  
Հիսուսի արձանիկի թանկագին սրբապատկերը և

այն հպել էր սուրբ  
պատերին, որի համար  
այնքան չնորհակալ էի,  
որ ձեռքս վերցնելով  
նկարը՝ թվում էր՝ ես  
էլ հպվեցի ու մինչ  
օրս հպվում եմ Սուրբ  
Տնակի պատերին ու  
Սրբության շունչն եմ  
զգում...



Իսկ ահա մեր Տեր Հիսուս Քրիստոսը Հայաստանում իր պատգամատար Սուսաննա Ղարիբյանի միջոցով այս թանկ Խոսքերն ասաց Նազարեթի Ավետման Տան և Լորետոյի Սուրբ Տնակի մասին.

**Հունիսի 27, 2022թ.**

«Իմ Եկեղեցին մեկն է, բայց Իմ Համաձայնությունը կարող է գործել մի այլ տեղ ևս։ Տնակը կա, տնակ կարող է լինել միաժամանակ Հաստատվող սուրբ Վկայությամբ։ Սուրբ Հետքերը տանում են շատ օթևաններ. որտեղ որ սրբության հետքն է, այդտեղ Տնակի հիմքն է. կլինեն նաև կառույցներ, որոնցով շրջապատված կլինի Տնակը։ Սուրբ Տնակը Զորավոր Ուժի ազդեցությամբ կարող է շրջադայել, կարող է և կանգ առնել, քանզի Իմ Քայլերը, Հետքեր թողնելով, թողնում են Սուրբ Կառույցներ»։

**Իսկ Աստվածամոր ծննդյան օրը տարբեր տարիներին Տեր Հիսուս իր Պատգամներում այսպես է խոսել.**

«... Սուրբ Համարեք այս Օրը, և ձեր ողջույնը Հղեք Մարիամ Աստվածածնին։ Ձեր ողջույնը թող աղաղակ լինի Սրբուհուն»։

(08, Սեպտեմբերի, 2019թ., «Սուրբ Սրբոց» Պատգամների գրքից (Ս. Ղ.)):

«Վառ պահիր հոգուդ լույսը՝ քեզ համար այնքան կարևոր և թանկ սրբության լույսը։ Քո աղոթք-ներում միշտ հիշիր Սուրբ Աստվածածնին՝ Սուրբ Մարիամին։ Վառի՛ր մոմերը Նրա համար։ Ցնծա՛ Նրա Սիրով ու Զորությամբ։

Ուրախություն ապրիր»։

(08, Սեպտեմբերի, 2013թ. «Ամեն պահի» Պատգամների գրքից (Ս.Դ.)):

\*\*\*\*\*

«Այս օրվա խորհուրդը շատ մեծ է և նվիրական ձեր սրտին։ Ուրախություն տված եմ ձեզ, որ ընդունեք ջերմ ու պայծառ սրտով։ Կանգ առեք այս օրվա վրա և ձեր աղոթքը հասցըեք Մարիամ Աստվածածնին։ Ձեր սիրելի Մարիամը ձեզ չի թողնի մենակ, սակայն դուք հասկացեք Սրբուհու շնորհատվությունը։ Սիրե՛ք Մարիամին, և ձեր զուսպ ու խոնարհ հոգով ծնկի իջեք Աստվածամոր առաջ, Որի սուրբ Կենդանությունը թող ապրեցնի և առաքինի վարքով միշտ հաստատուն լինեք հավատքի մեջ։ ՇՆՈՐՀԱՎՈՐԵ՛Ք ՁԵՐ ՔՆՔՈՒԾ, ՔԱՂՅՈՒ ԵՎ ԱՆՈՒԾ ՄԱՅՐԻԿԻՆ։ Կհատուցվեք մեծ նվիրատվությամբ»։

(08, Սեպտեմբերի, 2015թ. «Ճշմարիտ Խոսքեր» Պատգամների գրքից))

«Մայրական Սիրո քնքշանքը, ձեզ համար նվիրական մեծ պարգև լինելով, պետք է ձեր սրտի և հոգու մեջ պահպանվի, քանզի իմ Մարիամին ուղղված բարեխոսական աղոթքները ձեզանից լսելով՝ ինձ համար ազնիվ և անարատ հոգու միաձուլում է, և, որ ինձանից ստանաք նաև բոլոր Սրբերի բարեխոսությանը ուղղված իմ սիրալիր Համաձայնությունը։ Խաչին գամված՝ ցավադին տանջանքներով լցված իմ Հոգին տեսնում էր իմ Սուրբ և Շնորհազարդ Մարիամին, Սուրբ Աստվածածնի՝ Օրհնությամբ լցված հոգին, և իմ Հոգով ապրում էի այն օրվա երջանկությունը, որ, Նրա որովայնի Պտուղը դառնալով, դարձա մեղավոր, խաչելությանը մատնված, սակայն Հարություն առած մի Փրկիչ, որ պիտի փրկի ամբողջ աշխարհը, ամբողջ մարդկությունը»։

(08, Սեպտեմբերի, 2020թ. «Մանանա»  
Պատգամների գրքից, (Ս. Ղ.))

\*\*\*\*\*

«... «Սուրբ Մայր Հիսուսի»՝ այսպես պիտի ձեր կոչը ուղղեք Մարիամ Աստվածածնին, քանզի Գարուիել հրեշտակի ավետիսը Ավետում դարձավ, և այս պայծառ օրը թող մնա ձեր սրտի մեջ։ ... Այս օրվա պահանջը ձեզ կոչ է անում, որ հետեղական լինեք, լինեք հետեղադատ, հավատքի ճանապարհը ձեր սրբու-

**Թյամք պաշտպանեք:** Աղոթե՛ք, պարտադիր կերպով ընդունե՛ք առաքելությունը, որ հետևորդ դառնաք...»:

(07, Ապրիլի, 2018թ. (Ավետման տոնը), «Լույսի Կաթիլներ» Պատգամների գրքից, (Ս.Ղ.))

\*\*\*\*\*

«Դուք իմ Խոսքերը ընդունեցեք՝ որպես Սնունդ, Դեղ ու Դարման, քանզի հիվանդությունները աշխարհի վրա կտեղան, ինչպես անձրևներ։ Դուք պիտի կշտանաք միայն Հոգեոր բարիքներով, ձեր հոգին կմխիթարվի զուտ Սրբությամբ սերմանված, իմ Հոգով ձեզ հասած Ավետարանի, Սուրբ Մարիամ Աստվածածնի, իմ Սուրբ Հայրերի սրբագործված, Բարին ավետող բարերարությամբ։ Իմ Արքայության պայծառ Լույսը զգացեք ձեզանում, իմ Շարականների, Սաղմոսների ամեն հնչյուն ձեր հոգու և սրտի բալասանը պիտի լինի և այն, ինչ եկավ աշխարհ, իմ Զեռքով կկարողանաք դասավորել...»:

(21, Հոկտեմբերի, 2021թ. «Օրհնված Մասունքներ» Պատգամների գրքից, (Ս.Ղ.))

\*\*\*\*\*

«Մայրական Սրտի պատվախնդրությանն արժանացրեք ձեր հոգին, Սուրբ Քողով պաշտ-

պանվելու շնորհքով լցվեցեք, որ իմ Բարերար-ության արժեքավոր նյութերը գործածեք, իմ փափագելի **Վարչամակը** ընդունելի համարեք ձեզանում ամենայն սրբությամբ։ Սիրեցե՛ք ձեր Մորը՝ Մարիամ Աստվածածնին, և Մայրական Գթառատ Խղճի Պսակը՝ որպես զարդարանք, կրեցեք ձեր մեջ»։

(Սեպտեմբերի 8, ժ. 01:30, 2022թ. (Այս Պահին),  
**«Բոյ Խորանից» Պատգամների գրքից (Ս.Ղ.)**)

\*\*\*\*\*

«Ի՞նձ լսեցեք, լսեցեք իմ բնության կանչը, լսեցեք դողացող տերևների շշուկը, լսեցեք քարերի մեջ ծաղկած ծաղիկների մեղմ և գրավիչ հնչյունները, լսեցեք «Տե՛ր, ողորմեա՛»-ն, հոգևոր շարականներ, սաղմոսներ, լսեցե՛ք իմ բարձրածայն Արձագանքը, լսեցե՛ք իմ Խոսքերը, լսեցե՛ք Կոչը՝ ուղղված Մարիամ Աստվածածնին, քանզի երկինք և երկիր կանցնեն, բայց իմ Խոսքերը չեն անցնի»։

(08, Սեպտեմբերի, 2022թ. **«Բոյ Խորանից» Պատգամների գրքից (Ս.Ղ.)**)

\*\*\*\*\*

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ և ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ.**

(Ժամը 01:25, 11.11.2023թ.)

«Ինձ լա՛վ ճանաչեցեք, որ կարողանաք սիրով ընդունել ինձ: Ինձ փնտրելու համար հեռու մի՛ գնացեք, իմ Եկեղեցում կկարողանաք ինձ գտնել: Տեսե՛ք ինձ ողջերի մեջ, զգացե՛ք իմ Կենդանությունը, ոտք դնելով Եկեղեցի՝ ճաշակեցե՛ք **Իմ Հացն ու Գինին**: Զեր հոգու Տաճարը մաքրությամբ պահապանեցեք, որ ինձանից ձեզ հասնի իմ Պսակազարդ Աստղը, իմ Նշանը պիտի երևա երկնքում: Զեր հոգու մեջ **Իմ Արյան բծերը** պետք է տեսանելի լինեն, որ **Սուրբ Եկեղեցու Առաքելությունը** հաստատուն լինի ոչ միայն ձեր խոսքերի մեջ, այլ՝ ձեր սրտի ամբողջ էությամբ: Իմ Դուան առջև կանգնած՝ կընդունեմ և կներեմ ձեզ, երբ ձեզանում մաքրություն լինի, ձեր հոգին լցված լինի իմ Սրբությամբ և ծշմարտությամբ: Եթե սաստիկ լինի հողմը, չվախենա՛ք, եթե ամպրոպ լինի, դարձյալ չհուսահատվե՛ք, եթե լինի կշտամբանք, հայհոյանք, չնահանջե՛ք, քանզի արդար հոգու վարձքը շատ է լինելու: Դեմ եղե՛ք անհնազանդությանը, իմ Խորանում կանգնած՝ ձեր հոգու կարոտը հասցընեք ինձ»:

### **ՏԻՐԱՄՈՐ ՍՈՒՐԲ ՔՈՂԻ ՏԱԿ.**

(Ժամը 21:39, 11.11.2023թ.)

«Հե՛տ դարձեք մեղքի ճանապարհից, ձեր հայացքը ուղղեցե՛ք ինձ, իմ Աչքերին պիտի նայեք

միայն անկեղծ հոգով և երբ տեսնեք Սրբուհուն,  
խնդրեցե՛ք Սուրբ Քողը՝ խնդրեցե՛ք Տիրամոր  
Բարեխոսությունը։ Անկասկած, առանց վախի,  
առանց երկմտելու, պաշտպանվեցե՛ք Տիրամոր  
**Քողի տակ**։ Երբ հալվեն ձեզանում մեղքերը, կհաս-  
կանաք, որ Մայրական Գութը գթառատ Արցունք-  
ներ ունի, ունի Հրաշագործ Մանրաթելեր, որոնք ձեր  
մեջ առնելով՝ դուք կկարողանաք գործել իմ Սիրո  
Կարպետը։ Սուրբ Քողի տակ իմ Ժպիտը կտեսնեք,  
ձեզ հետ կլինի իմ Հոգատրությունը, և իմ Հայացքը  
ձեզանից չբաժանելով՝ ձեզ մատնացույց պիտի  
անեմ իմ Սուրբ Մայրիկի Խոնարհությունը։ Ձեզ  
հետ պայման պիտի կնքեմ, նոր Պայմանագիր, որը  
պիտի ընդունեք գոհությամբ, ընդունելի համարեք  
ձեր ողջ սիրով, հոգու և սրտի ցանկությամբ։ Սուրբ  
Աստվածամոր Քողը առե՛ք ձեր ուսերին, թանկ և  
սիրելի համարեցեք Պարգևատրությունը, որ իմ  
Սուրբ Արյան բծերը, տարածվելով, հասնեն ձեր  
հոգու և սրտի պատերին»։

(11, Նոյեմբերի, 2023թ. «Մոմակալ» Պատգամներից .  
դեռ թելադրվում են))

## ՏԻՐԱՄԱՅՐ

Խոսք՝ Ներսես արք . Պողապալյանի  
Երաժշտ .՝ Կոնստանտին Պետրոսյանի

## I

Դու քանի՛ անգամ իջար Հայաստան,  
Տնից-տուն մտար մեզ այցելության,  
Դեմքդ աստվածային բացիր հայության,  
Շունչ պարգևեցիր մխիթարության:  
**«Լքված չէ՛, — ասիր, — փոքրիկ հոտն հայկյան»,**  
Թախծու ժպիտով, Մոր գուրգուրանքով,  
Ապրեցիր մեզ հետ, Տիրուհի՛ մեր տան,  
Եկանք Քեզ ի տես, սիրով, կարոտով:

## Կը կներգ.

Սուրբ Կույս Մարիա՛մ,  
Մա՛յր արարչության,  
Մշտավառ Կանթեղ՝  
Պայծառ, կենսալի...  
Աստղերից իջած ձեռք կարեկցանքի,  
Մեր վշտին, ցավին Դու դեղ ու դարման:

## II

Դու նորից իջար երկնից մայր հողին՝  
Ոտնահետքերով Միածին Փրկչի,  
Վերստին բերիր մեզ հույս հարության,  
Հնչեցեցրե՛ք զանգեր, տոնն է արարման:  
Ցավ ու մորմոքի, շփոթի պահին,  
Իջար երկնքից, Մա՛յր գորովագին,  
Հույս ներշնչեցիր, Միրուցդ Մեր տվիր,  
Բեկբեկված սրտերն նոր կյանքով լցըիր:

## ՀԻՍՈՒՄ, ԵՍ ՎԱՏԱՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ

«Այս պատկերի միջոցով ես բազմաթիվ ողորմություններ պիտի անեմ» (Օրագիր 570):

1931թ. փետրվարի 22-ին մեր Տեր Հիսուս Քրիստոսը տեսիլքով հայտնվեց Լեհաստանի Կրակով քաղաքում ապրող «Մայր գթության» միաբան-



ության անդամ, քույր Մարիա Ֆառևստինա Կովալսկային (1905-1938), մի պարզ ու անուս մայրա-

**պետի:** Տեսիլքի մեջ Հիսուսը երևաց ճերմակ զգեստ-ներ հագած, մի ձեռքը վեր բարձրացրած օրհնում էր, իսկ մյուսով մատնացույց էր անում իր Սրտի կողմում բացված հագուստը և նրա տակ Իր խոցված Սիրտը, որտեղից լուսեղեն երկու ճառա-դայթներ էին դուրս դալիս. մեկը՝ կարմիր, մյուսը՝ սպիտակ: Հիսուսը խնդրում է իրեն պատկերել այդ նույն տեսքով և նկարի տակ գրել. «ՀԻՍՈՒ, ԵՄ ՎԱՏԱՀՈՒՄ ԵՄ ՔԵԶ»: Այդ նկարի իմաստը Հիսուսը բացատրում է հետևյալ կերպ. «Սպիտակ ճառադայթը խորհրդանշում է Ձուրը, որ արդար-ացնում է հոգիներին, կարմիր ճառադայթը խորհր-դանշում է Արյունը, որ հոգիներին կյանք է պարզեցում: Այս երկու ճառադայթները բխեցին իմ Պղորմությունից, երբ Խաչի վրա տագնապահար Սիրտս գեղարդով խոցվեց... Երանելի է նա, ով այդ ճառադայթների ներքո կապրի, որովհետև Աստծո արդար Զեռքը երբեք չպիտի հարվածի նրան»:

Երեք տարի շարունակ տեսիլքներն ու պատ-գամները քույր Թառլստինան արձանագրում էր իր օրագրի մեջ, որը ի վերջո կազմեց 600 էջ: Ահա մի քանի Խոստումներ, որ Տեր Հիսուսը տվել է իր պատգամներում:

† «Ես ցանկանում եմ, որ այդ պատկերը հանդիսավորապես լուսաբանվի Զատիկից հետո

**առաջին կիրակին:** Այդ կիրակին պետք է դառնա  
**Ողորմության Տոնը:** Ես ցանկանում եմ, որ այն լինի  
ապաստան ու փրկություն բոլոր հոգիների համար,  
հատկապես դժբախտ մեղավորների... Այն հոգին,  
որ այդ օրը կխոստովանի իր մեղքերը ու **Սուրբ**  
**Հաղորդություն** կընդունի, կստանա բոլոր մեղքերի  
թողություն ու կազատվի պատիժներից... Ես փա-  
փագում եմ, որ ողջ աշխարհը ճանաչի իմ  
Ողորմությունը»:

† «Խոստանում եմ՝ այն հոգին, որ կպատվի այս  
պատկերը, չի կորսվի։ Ես խոստանում եմ նրան  
այստեղ՝ երկրի վրա, հաղթանակ թշնամիների հան-  
դեպ, հատկապես մահվան ժամին»։

† «Ես **Սիրտս բացեցի՝ որպես կենդանի աղբյուր:**  
**Թող բոլոր հոգիները այդ աղբյուրից կյանք ստա-**  
**նան։ Թող վստահությամբ մոտենան Ողորմության**  
այս ծովին։ Իմ Ողորմության Աղբյուրը խաչի վրա  
գեղարդով բացվեց բոլոր հոգիների համար ան-  
խըտիր։ Ես մարդկության համար միջոց եմ հայ-  
թայթում, որպեսզի դրանով նրանք չնորհներ  
ստանան Ողորմության աղբյուրից։ Այդ միջոցը  
պատկերն է, որ կրում է. **«Հիսուս, ես**  
**Վստահում եմ Քեզ»** խոսքերը։

† «Իմ Ողորմության չնորհները կարելի է ստանալ  
մեկ միջոցով՝ **ՎԱՏԱՀԵԼՈՎ** (ապավինելով)։ Մարդիկ

**կարող են չնորհներ ստանալ՝ իրենց վստահության չափի համապատասխան»:**

† «Ե՛ս եմ Սերն ու Ողորմությունը: Երբ հոգին վստահությամբ է մոտենում ինձ, ես նրան Շնորհների այնպիսի առատությամբ եմ լցնում, որ նա չի կարող դրանք պարփակել իր մեջ, այլ ճառագայթում է դեպի դուրս՝ դեպի ուրիշ հոգիները»:

† Ձեզանից հանուն իմ Սիրո՝ ողորմության գործեր եմ պահանջում: Ողորմեցե՛ք ձեր մերձավորներին միշտ և ամեն տեղ: Հիշե՛ք իմ Պատվիրանը. «Սիրեցե՛ք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի» (Հովհաննես 13.34), «Գթասիրտ եղե՛ք, ինչպես ձեր Հայրն է գթասիրտ» (Ղուկաս 6.36):

**Սուրբ Ֆառւստինան իր օրագրում նշել է.**

«Տերն ինձ հասկացրեց իր Կամքի՝ այսպես ասած երեք ուղղությունները.

**Առաջինը.** Աստծո առաջ աղոթք մատուցել ու օրհնություն խնդրել քահանաների համար և աղոթքով աշխարհը նախապատրաստել Հիսուսի Երկրորդ Գալատյանը:

**Երկրորդ.** աղոթքներ, որոնք առնչվում են ողորմության գործերի հետ: Ըստ որում, դրանք կպահպանեն երեխաների հոգիները դիվական զորություններից:

**Երրորդ.** աղոթք և պատրաստակամություն ողոր-

մության գործեր կատարելու։ Այս վերջինի մասին Հիսուսն ասում է. «Քանի որ յուրաքանչյուրին՝ նույնիսկ ամենաաղքատին էլ է հեշտ ողորմություն կատարել, կա 3 միջոց ողորմություն անելու.»

**Առաջին՝** խոսքի ողորմությունը՝ ներելով ու մխիթարելով,

**Երկրորդ՝** եթե չի հաջողվում խոսքով, կարելի է աղոթքով, սա նույնպես ողորմություն է,

**Երրորդ՝** ողորմության գործեր։ Եվ երբ կգա **Վերջին Օրը**, ըստ դրանց էլ մենք պետք է դատվենք և ըստ դրանց էլ մեր հավիտենական վճիռը կկայացվի»։

† «Խոսեցե՛ք աշխարհին Իմ Ողորմության մասին... սա վերջին օրերի նշանն է, որին պիտի հաջորդի Դատաստանի Օրը... Դուք պետք է նախապատրաստեք աշխարհը Իմ Վերջին Գալուստի համար... Ասե՛ք Հոգիներին Իմ Ողորմության մասին, որովհետեւ այդ ահավոր Օրը՝ Իմ Արդարության Օրը, մոտ է»։

† «Մինչ Արդարության Օրը, Ես չնորհում եմ ձեզ Ողորմության Օրը... Ես երկարաձգում եմ ողորմության ժամանակը՝ ի շահ մեղավորների։ Բայց վա՛յ նրանց, որոնք այդպես էլ չեն ճանաչի Իմ այցելության այս ժամանակը»։

† «Քանի դեռ այդ ժամանակը իր ավարտին չի հասել, թող Հոգիները գան դեպի Իմ Ողորմության

**աղբյուրը... իսկ նա, ով կմերժի իմ Ողորմության դռնով ներս մտնել, պետք է անցնի իմ Արդարության դռնով»:**

† «ՏԵՇ, ՔՈ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԻՆԵՐ ՓՐԿԻՐ». այս կարճ խնդրանք-աղոթքը պետք է կրկնել ամեն օր և ըստ հնարավորինս, շատ անգամ, քանի որ Հիսուսը, ավելի քան երբեք, մեծ անձկությամբ սպասում է, որ շատ հոգիներ գան դեպի իրեն, քանզի նա ասում է, որ հունձքի ժամանակը հասել է:

† «Ովքեր տարածում են իմ Ողորմության պատվվելը, ես նրանց պահպանում եմ ամբողջ կյանքում, ինչպես ամենահոգատար մայրը իր երեխային»:

† «Քահանաներին, որոնք կտեղեկացնեն ու կփառաբանեն իմ Ողորմությունը, ես նրանց կտամ զարմանալի Շնորհ և կօրհնեմ նրանց խոսքը ու կհուզեմ սրտերը, ում հետ, որ նրանք կխոսեն»:

## **ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՊՈԹՔ - ԱՊԵՐՍԸ**

1935թ. սեպտեմբերի 13-14-ին Տեր Հիսուսը քույր Ֆառաւատինայի՝ Ողորմության 20-րդ դարի առաջյավի միջոցով տալիս է իր Ողորմության աղոթք-աղերսը՝ ըստ իր Պատկերի, և կոչ է անում, որ ամեն օր աղոթենք ու նախընտրելի է ցերեկվա ժամը 3-ին (15:00-ին)` իր Խաչելության ժամին, երբ երկնքում

բացվեցին Ողորմության դռները բոլորի համար՝  
առանց բացառության, հայցելով իր անսահման  
Ողորմությունը թե՛ մեր անձերի ու մեր ընտանիքի  
անդամների, թե՛ մեր հարազատների ու բարե-  
կամների, թե՛ մեր ազգի, ինչպես նաև աշխարհի  
բոլոր մարդկանց փրկության համար:

† «Այս աղոթքով դուք կստանաք ձեր յուրա-  
քանչյուր խնդրանքի պատասխանը, եթե այն հա-  
մապատասխանի իմ Կամքին»:

† «Երբ մահացող մարդու մոտ կարդում են այս  
աղոթաշարը, դադարում է Աստծո (Արդարության)  
Բարկությունը, և մեծ Ողորմությունն է պարուրում  
մեռնողի հոգուն»:

† «Նույնիսկ ամենակարծրասիրտ մեղավորը, եթե  
այս աղոթքը գեթ մեկ անգամ արտասանի, ան-  
պայման իմ անսահման Ողորմությունից շնորհ  
կստանա»:

† «Ամեն անգամ, երբ դու կլսես **Ժամը Յի**  
**ղողանջները**, ամբողջովին սուզվիր իմ Ողորմության  
մեջ՝ գովելով և փառաբանելով այն: Այդ ժամին դու  
Ողորմություն խնդրիր ամբողջ աշխարհի համար...»:



# ԻՆՉՊԵՍ ԱՀՈԹԵԼ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՀՈԹՔ - ԱՀԵՐՍԸ



1. Ակսել «ՀԱՅՐ ՄԵՐ» աղոթքով
2. «ՈՂՋՈՒՅՑՆ ՔԵԶ, ՄԱՐԻԱՌ» 3 անգամ
3. «ՀԱՎԱՏԱՄՔ»
4. Այնուհետև ասել.

**«ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՅՐ, ՔԵզ եմ ընծայում Քո սիրելի Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը, Հոգին և Աստվածությունը, մեր և համայն աշխարհի մեղքերի քավության և թողության համար»:**

5. Որից հետո 10 անգամ կրկնել.  
**«ՀԱՆՈՒՆ ՀԻՍՈՒՄԻ ԽԱԶԻ ԴԱՌԸ ԶԱՐՁԱՐԱՆՔՆԵՐԻ՝ ողորմի՛ր մեզ և համայն աշխարհին»:**

**6. (Զորբորդ և հինգերորդ աղոթքները փոխնիփոխ կրկնել ևս 4 անգամներ, այսինքն՝ ինչպես վարդարանի չորս տասնյակ՝ իր խորհուրդներով):**

**7. Որից հետո, խաչակնքելով ասել Յ անգամ.**

**«ՍՈՒԻՐԻ ԱՍՏՎԱԾ, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, ողորմի՛ր մեզ և համայն աշխարհին»:**

**8. Ապա Յ անգամ ասել.**

**«Ո՛Վ ԶՈՒՄ ԵՎ ԱՐՑՈՒԽ, որ բխեցիք Հիսուսի Սուրբ Սրտից՝ որպես Ողորմության Աղբյուր մեզ համար, ես ձեզ եմ ապավինում»:**

**9. Աղոթքը եզրափակել՝ ասելով.**

**«Ես ինձ հայտարարում եմ ՀԻՍՈՒԽԻ ԱՐՑՈՒԽՈՎ պատված» (կարող եք այս նույն աղոթքով Հիսուսի Արյան տակ բերել նաև այլ անձանց կամ ընտանիքների):**

**(Այս վերջին Թ-րդ աղոթքը չարի հանկարծահաս փորձության ժամանակ կարող եք նաև առանձին ասել, քանի որ այդ պահին պատսպարվում ենք Հիսուսի փրկարար Արյան ներքո):**

**Հ. Գ. Իսկ 2019թ. ամռանը Տեր Հիսուսը ժամը 15:00-ի Ողորմության աղոթքի այս կարճ ձեր նաև ասաց, որ կարող ենք ասել. Յ «Հայր մեր», Յ «Ողջու՛յն Քեզ, Մարիամ», 1 «Հավատամք», Յ «Սուրբ Աստված...»: Աղոթքը կարող ենք շարունակել ասել մինչև ժամը 19:00 (Ա. Ղ.):**

## **ԱՍՏՎԱԾԱԹԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱՐԱՆԸ**

Աստծո Ողորմության Պսակը՝ Վարդարանը,  
սկսում ենք աղոթել հետևյալ կերպ՝ ասելով.

**«ՈՎ ՃՈՒՐ ԵՎ ԱՐՑՈՒՆ, որ բխեցիք Հիսուսի  
Սուրբ Սրտից՝ որպես Ողորմության Աղբյուր մեզ  
համար, ես ձեզ եմ ապավինում:**

**ՀԻՍՈՒՆ, ԵՍ ՎԱՏԱՀՈՒՄ ԵՄ ՔԵԶ»:**

Վարդարանի հատիկների վրա սկզբում 1 «Հայր  
մեր», 3 «Ողջու՛յն Քեզ, Մարիա՛մ»,

1 «Հավատամք» և «Փա՛ռք Հոր...», այնուհետեւ  
**Հինգ տասնյակների վրա՝**

**«ՀԱՎԻՑԵՆԱԿԱՆ ՀԱՅՐ, ՔԵզ եմ ընծայում Քո  
սիրելի Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն  
ու Արյունը, Հոգին և Աստվածությունը մեր և  
համայն աշխարհի մեղքերի թողության համար» - 1  
անգամ:**

**Հաջորդ հատիկների վրա՝**

**«ՀԱՆՈՒՆ ՀԻՍՈՒՄԻ ԽԱԶԻ ԴԱՌԸ ԶԱՐՉԱՐ-  
ԱՆՔՆԵՐԻ ողորմի՛ր մեզ և համայն աշխարհին» -  
10 անգամ:**

**Հիսնյակից հետո՝ Վարդարանի վերջում,  
խաչակնքելով՝ ասել 3 անգամ.**

**«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ,  
ողորմի՛ր մեզ և համայն աշխարհին»:**

## ՀԻՍՈՒՄԻ ՎԱՐԴԱՐԱՅԵ

«ՏԵՇ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻՇ ԱՍԾՈ, ՈՂՈՐՄԻՇ ԻՆՉ՝ ՄԵՂԱՎՈՐԻՄ...»:

«Ես ասում եմ ձեզ, որ եթե որևէ մեկն այս Վարդարանի աղոթքով ինձ դիմի, երկինքը կբացվի նրա առաջ և իմ Ողորմությունը կփրկի նրան։ Հաշտվե՞ք ինձ հետ, հաշտություն կնքեք ինձ հետ և ամեն օր խնդրե՞ք ինձ։

«ՏԵՇ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻՇ ԱՍԾՈ, ՈՂՈՐՄԻՇ ԻՆՁ՝ ՄԵՂԱՎՈՐԻՄ» (ասել 10 անգամ)։

Զավա՛կս, սովորեցրո՛ւ քո եղբայրներին այս աղոթքը, սովորեցրո՛ւ նրանց առանձնանալ և լոռւթյան մեջ աղոթել այս Վարդարանը։

Զարդարի՛ր իմ եկեղեցին։  
Ե՛կ, առաջ շարժվիր սրտի մաքրությամբ»։  
(«ՃՇՄԱՐԻՏ ԿՑԱՆՔ ԱՍԾՈ ՄԵԶ» պատգամների գրքից (Վ. Ռ. .))

Այս աղոթքը բուժական մեծ զորություն ունի, եթե կիրառենք չնչառական ոիթմով և ավելացնենք նաև «Աստվածածնով» բառը։ Այսպես.

Խաչակնքելով՝ չնչում ենք՝ ասելով.

«ՏԵՇ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ՝ ՈՐԴԻՇ ԱՍԾՈ, ԱՍՏՎԱԾԱԾՆՈՎ»,



Արտաշնչում ենք՝ ասելով.

**«ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս»:**  
**Օրվա մեջ ասել 40 անգամ, ամենաքիչը՝ 10 անգամ:**

**ԱՂՈԹՔ ԲԱՆ ԽԱ (վախի դեմ)**  
**(Սուրբ Գրիգոր Նարեկացի)**

Ո՛վ ամենօրհնյալ Որդիդ Աստծո,  
Կենդանարար Հոր անքնին ծնունդ,  
Քեզ համար չկա անկարելի ու անհնար ոչինչ.  
Բավական է, որ ծագի անստվեր  
Ճաճանչը փառքի Քո Ողորմության,  
Որպեսզի իսկույն հալվի ամեն մեղք,  
Դեղ հալածվի, հանցանքը ջնջվի,  
Կապանքը խզվի, խորտակվի շղթան,  
Մահացածները կենդանածնվեն,  
Խոցը բժշկվի, վերքն առողջանա,  
Վերանա ամեն ապականություն,  
Թախիծն ընկրկի, ողբը նահանջի,  
Խավարը փախչի, մութը վերանա, գիշերը գնա,  
Զարիքը չքվի, տագնապն հեռանա,  
Հուսահատությունն հալածվի անհետ,  
Եվ թագավորի ձեռքդ ամենակար, քավիչ բոլորի:  
Դո՛ւ, որ եկել ես մարդկային հոգին փրկելու,  
Ոչ թե կորցնելու համար,  
Ների՛ր անհամար չարիքներն իմ  
Ամենառատ Քո Ողորմությամբ,

Զի Դու ես միայն երկնքում անճառ, երկրում անզնին,  
 Գոյության բոլոր տարերքների մեջ,  
 Աշխարհի բոլոր եզրածագերում,  
 Սկիզբն համայնի և ամեն ինչում՝ ամենայն լրմամբ,  
 Օրհնյալ ի բարձունս.  
 Եվ Քեզ, Հորդ և Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք,  
 Հավիտյանս. ամեն:



## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՎԱՐԴԱՐԱՅԵ



**Սուրբ Հոգու Վարդարանը կազմված է յոթ յոթնյակից:** Եթե ձեռքի տակ այս վարդարանի համրիչից չկա, կարող եք սովորական վարդարանով աղոթել կամ՝ մատների վրա հաշվելով:

Սկսում ենք մեղալից՝ ասելով «Հայր մեր», այնուհետև առաջին հատիկի հետ՝

### 1. Ինքնանվիրում Սուրբ Հոգուն.

Ո՞վ Աստծո Հոգի, մենք Քեզ ենք հանձնում մեր անձն ու մեր աղոթքները Մարիամ Աստվածածնի և Վերնահարկում հավաքված առաքյալների աղոթքով։ Խնդրում ենք դաս և նորոգես մեզ և նորոգես աշխարհի դեմքը։

## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՊՈԹՔ

«Ե՛կ, ո՞վ Սուլը Հոգի ու երկնքից առաքիր Լույսիդ  
ճառագայթները,  
Ե՛կ, ո՞վ աղքատների Հայր՝ շնորհքներ պարգևող ու  
սրտեր լուսավորող,  
Ո՞վ փառավոր Մխիթարիչ,  
Ո՞վ մաքուր սրտերի մեջ բնակվող,  
Ո՞վ քաղցրահամ Անդորրություն,  
Դու՝ հոգնության ժամանակ Հանգստություն,  
Տոթի ժամանակ՝ Բարեխառնություն  
Եվ սուզի ժամանակ՝ Մխիթարություն:  
Ո՞վ երանելի Լույս, Քեզանով լիացրու հավատաց-  
յալներիդ սրտերը,  
Որովհետեւ, առանց Քո Կարողության,  
Զկա՛ ոչինչ մարդու մեջ և ոչ մի բան անարատ չէ:  
Մաքրի՛ր, ինչ որ պիղծ է, ոռոգի՛ր, ինչ որ չորացած է,  
Բուժի՛ր, ինչ որ հիվանդ է, փափկեցրու՛, ինչ որ  
կարծրացած է,  
Զերմացրու՛, ինչ որ սառն է, կարգավորի՛ր, ինչ որ  
անորոշ է:  
Տու՛ր Քեզ վստահող հավատացյալներիդ **ՅՈԹ**  
**ՇՆՈՐՀՆԵՐԸ** և պարգևի՛ր նրանց բարեգործության  
առաքինությունը,  
Եվ տո՛ւր նրանց կատարյալ փրկությունն ու հա-  
վիտենական երջանկությունը: Ամեն:

## **Հաջորդ երեք հատիկների հետ ասում ենք.**

1. Ո՞վ Մարիամ, ամբողջությամբ Անարատ Կույս,  
Քո Անարատ Հղությամբ՝ Աստված Քեզ դարձրեց  
Հաղորդության Տապանակը,  
Աղոթի՛ր մեզ համար, որպեսզի գա Սուրբ Հոգին  
և փոխի աշխարհի դեմքը:

**«Ողջու՛յն Քեզ, Մարիամ...»:**

2. Ո՞վ Մարիամ, ամբողջությամբ Անարատ Կույս,  
Դու՛, որ Մարմնավորման Խորհուրդի միջոցով  
Սուրբ Հոգով դարձար Ճշմարիտ Աստվածամայր,  
Աղոթի՛ր մեզ համար, որպեսզի գա Սուրբ Հոգին  
և փոխի աշխարհի դեմքը:

**«Ողջու՛յն Քեզ, Մարիամ...»:**

3. Ո՞վ Մարիամ, ամբողջությամբ Անարատ Կույս,  
Դու՛, որ աղոթեցիր առաքյալների հետ Վերնատանը  
և լցվեցիք Սուրբ Հոգով,  
Աղոթի՛ր մեզ համար, որպեսզի գա Սուրբ Հոգին  
և փոխի աշխարհի դեմքը:

**«Ողջու՛յն Քեզ, Մարիամ...»:**

**Այնուհետև մյուս հատիկի հետ ասվում է.**

- Ո՞վ սիրելի Հիսուս՝ Բարության և Արդարության  
Աստված,

**Երկինք չհամբարձված՝ խոստացար ուղարկել  
Սուրբ Հոգին, որպեսզի իրենց մխիթարի և ամրա-  
պնդի:**

**Ողորմի՛ր մեզ և ուղարկիր Սուրբ Հոգիդ, որ  
սրբացնում է հոգիները,**

**Որ մեզ վրա էլ հանգչելով՝ սրբացնի մեզ և լցնի  
Իր ՅՈԹ ՇՆՈՐՀՆԵՐՈՎ:**

**Այստեղից սկսվում են յոթ խորհուրդները իրենց  
յոթնյակով:**

**1. Արի՛, ո՞վ *ԽՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ* և բնակվիր  
մեր մեջ՝ առաջնորդելու մեզ դեպի լավագույնը և  
մեզ էլ ցույց տուր այն ձեռք բերելու միջոցները:**

**«Հայր մեր...» - 1 անգամ,**

**«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը  
նորոգվի» - 7 անգամ,**

**«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին  
Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և  
Հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ,**

**2. Արի՛, ո՞վ *ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ* և  
բնակվիր մեր մեջ, լուսավորիր մեր միտքը, որպեսզի  
մենք կարողանանք գիտակցել մեր սուրբ Հավատքի  
ճշմարտությունները և նրա խոր գաղտնիքները:**

**«Հայր մեր...» - 1 անգամ,**

**«Ուղարկիր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը  
նորոգվի» - 7 անգամ,**

**«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին  
Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և  
Հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ,**

**3. Արի՛, ո՞վ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ և բնակվիր մեր մեջ, որպեսզի ճանաչենք Աստծուն և ճանաչենք ինքներս մեզ և ուղիշներին, քանի որ գիտելիքը Սիրո հիմքն է:**

«Հայր մեր...» - 1 անգամ,

«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը նորոգվի» - 7 անգամ,

«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ,

**4. Արի՛, ո՞վ ԽՈՐՀՐԴԻ ՀՈԳԻ և բնակվիր մեր մեջ ու լուսավորիր մեզ, որպեսզի իմանանք Աստծո կամքը և զորացրու մեզ, որ կատարենք այն:**

«Հայր մեր...» - 1 անգամ,

«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը նորոգվի» - 7 անգամ,

«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» - 1:

**5. Արի՛, ո՞վ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ, և բակվիր մեր մեջ, լցրու՝ մեր սրտերը Աստծուց և զորացրու՝ մեզ, որպեսզի կատարենք մեր պարտականությունները ազնվությամբ և անկեղծությամբ:**

«Հայր մեր...» - 1 անգամ,

«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը

**նորոգվի» - 7 անգամ,**

«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին  
Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և  
Հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ,

6. Արի՛, ո՛վ **ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ**, և  
բնակվիր մեր մեջ և զորացրու՛ մեզ հարգելու  
Աստծուն և Նրա Պատվիրանները, քանի որ իմաստ-  
ության սկիզբը Աստծո երկյուղն է:

«Հայր մեր...» - 1 անգամ,

«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը  
նորոգվի» - 7 անգամ,

«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին  
Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և  
Հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ,

7. Արի՛, ո՛վ **ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ**, և հանգ-  
չիր մեզ վրա, որ կարենանք հասկանալ, որ Քո լուծը  
քաղցր է ու բեռլ՝ թեթև, և մենք կարող ենք տանել  
այն:

«Հայր մեր...» - 1 անգամ,

«Ուղարկի՛ր Քո Հոգին, որպեսզի երկրի դեմքը  
նորոգվի» - 7 անգամ,

«Փա՛ռք Հավիտենական Հորը, Կենդանի Միածին  
Որդուն, Մխիթարիչ Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և  
Հավիտյանս հավիտենից. ամեն» - 1 անգամ:



## ՏԵՐ ՀԻՍՈՒՄԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(տրված դեռ 10 տարի առաջ ~ 2013թ.)

«Իմ Զեռքը չի կարճացել, որ չկարողանա փրկել Հայոց երկիրը, Հայոց Ազգն ու Հայոց ժողովրդին։ Ցավում եմ, որ համախմբված հոգեոր ուժերը շատ քիչ են կատարյալ հաղթանակի համար։ Բայց ձեր խնդրանքները ես երբեք չեմ կարող մերժել, քանի որ ձեր հոգում իմ Սերն է տնօրինում։ Ապահով զգացեք, ես դեռ շատ անելիքներ ունեմ՝ պահանելու հայ ժողովրդին փրկության գործում։ Ուստի, խոնարհաբար աղոթքի կանգնե՛ք, կանգնե՛ք երիտասարդ խմբերի միություններում։ Տարածեցե՛ք իմ Գործերի Հրաշքները և հանգիստ գտեք ձեր մեջ։ Հայոց ազգը պաշտպանված է իմ և Սուրբ Աստվածածնի Սուրբ Սրտերի զորությամբ։»

Հավա՛տք ունեցեք։ Աղոթեցե՛ք՝ ձեր պաշտպանվածությունը ապահով դարձնելու համար։» (Ս.Ղ.)



# ԱՊՈԹՔ՝ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ ԵՐԿՈՒ ՍՈՒՐԲ ՍՐՏԵՐԻՆ՝

ԱԶԳԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տե՛ր, ինչպես նախասահմանված է  
Քո Սուրբ Խոսքի մարդարեռություններում,  
Մենք հաստատապես գիտենք ու հավատում ենք,  
Որ Քո Սուրբ Սրտի ու Սուրբ Մարիամի  
Անարատ Սրտի հաղթանակը շատ մոտ է,  
Ուստի, խոնարհաբար, Զեր Սուրբ Սրտերին ենք  
Նվիրաբերում մեր անձերը, մեր ընտանիքներն ու  
մեր երկիրը՝ (Հայաստանը):  
Հավատում ենք, որ մեր երկիրը նվիրաբերելով Զեզ՝  
Ազգ ազգի դեմ սուր չի վերցնի ու չի պատերազմի:  
Հավատում ենք, որ մեր երկիրը նվիրաբերումը  
Զեր սիրազեղ Սրտերին, կվերացնի հպարտությունը,  
ամբարտավանությունը, անաստվածությունն ու  
սրտերի կարծրությունը,  
Եվ ամենայն չարիք կփոխարինվի սիրով և բարու-  
թյամբ:  
Հավատում ենք, որ Զեր երկու Սուրբ Սրտերը  
չեն ընդդիմանա մեր հառաջանքներին և մեր կա-  
րիքներին, այլ իրենց Բոցավառ Սիրով մեզ ընդա-  
ռաջ կգան՝ բուժելու մեր խոր վերքերը և մեզ  
խաղաղություն պարգևելու:

ՄՎ Սուրբ Սիրտ Հիսուսի և Անարատ Սիրտ Մարիամի,

Զեր Սրտերից մի կայծ փչեք մեզ վրա՝  
Բոցավառելով մեր սրտերը:  
**Մեր ագդը (և մեր ընտանիքը)**

Դարձրեք Զեր Սրբության կատարյալ Բնակավայրը:  
Բնակվեք մեր մեջ և մենք էլ՝ Զեր մեջ, որպեսզի Զեր  
երկու Սրտերի Սիրո շնորհիվ, մենք ունենանք  
խաղաղություն, միասնություն, դարձ և ապաշխա-  
րություն: Ամեն:

## **ՀԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ԱՐՏԻՆ ՎԱՏԱՎԵԼՈՒ ԻՆԵՈՐՅԱ ԱՂՈԹՔ**

Ո՛վ Տեր Հիսուս, Քրիստոս,  
Ամենասուրբ Սրտիդ եմ հանձնում այս խնդրանքս.  
(նշեք ձեր խնդրանքը և անունը)


Նախ ինձ նայիր,  
Ապա արա այն, ինչ Քո Սիրտն է կամենում:  
Թող Քո Սուրբ Սիրտը որոշի,  
Նրան եմ ես ապավինում,  
Նրան եմ ես վստահում,  
Նրա ողորմածությանն եմ ինձ հանձնում:

Տե՛ր իմ Հիսուս, ինձ հուսախար Դու չես անի,  
Սուրբ Սի՞րտ Հիսուսի, ես վստահում եմ Քեզ,  
Սուրբ Սի՞րտ Հիսուսի, ես հավատում եմ  
իմ հանդեպ տածած Քո Սիրուն:

**Սուրբ Սիրտ Հիսուսի, թող Քո Արքայությունը դա:**

**Ո՞վ Սուրբ Սիրտ Հիսուսի,  
Ի թիվ բազում խնդրանքներիս,  
Հատկապես այս մեկն եմ հայցում.  
Վերցրու այն և դիր Քո Սուրբ Սրտում:  
Երբ երկնավոր Հայրն այն տեսնի՝  
Քո թանկագին Արյամբ պատված,  
Ամենեին Նա չի մերժի,  
Քանզի աղոթքն այս այլևս իմը չի լինի,  
Այլ Քո՛նը, Հիսո՛ւս:**

**Ո՞վ Սուրբ Սիրտ Հիսուսի,  
Քեզ եմ միշտ ապավինում:  
Մի՛ թողնիր ինձ երբեք,  
Որ մնամ ես մոլորված: Ամեն:**



## ԱՊՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐԸ

Հիշե՛ր ինձ, (կարող եք նշել ձեր խնդրանքը)  
Ո՞վ Շնորհընկալ Կույս Մարիամ.

Դեռ չի եղել դեպք,  
Որ պաշտպանությանը Քո դիմեն,  
Օգնություն Քեզնից հայցեն,  
Կամ բարեխոսությունը Քո խնդրեն  
ու մնան անպատճասխան:  
Այս վստահությամբ համակված՝  
դեպի Քեզ եմ գալիս,  
Ո՞վ Կույս կուսանց, ո՞վ իմ Մայր,  
Մեղավոր ու վշտահար՝ դեպի քեզ եմ գալիս  
ու կանգնում Քո առջեւ:  
Ո՞վ Մայրդ Խոսքի Մարմնացյալ,  
Անտես մի՛ արա թախանձանքն իմ,  
Այլ ողորմությամբդ լսիր և տուր ինձ  
պատճասխան: Ամեն:



# ԱՊՈԹՔ ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ

Սուրբ Միքայել Հրեշտակապետ,  
Կռվի օրը պաշտպանի՛ր մեզ,  
Եղի՛ր մեզ պաշտպան՝  
Հնդկեմ չարի և դեերի ծուղակների,  
Թող Աստված սաստի նրանց.  
Մենք խոնարհաբար աղոթում ենք,  
Աղոթի՛ր և դու, ո՛վ իշխան երկնային զորաց.  
Աստծո Զորությամբ դժոխք քշիր սատանային,  
Եվ մյուս բոլոր չար ոգիներին,  
Որ սողոսկում են աշխարհ՝  
Հոգիների կործանում փնտրելու համար։ Ամեն։



# ԱՊՈԹՔ ՍՈՒՐԲ ԳԱՅՐԻԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ

Սուրբ Գաբրիել Հրեշտակապետ,  
Անմահ Արարչի Հրեղեն սպասավոր,  
Որ մեծ Ավետիս բերեցիր  
Կանանցից Ամենօրհնյալ Կույս Մարիամին,  
Որ Սուրբ Հոգին Նրան հովանի կլինի ու կհղիանա,  
Եվ Բարձրյալի Որդուն կծնի,  
Ու Նրա Անունը Հիսուս պիտի դրվի,  
Ով մեզ փրկելու է մեղքից ու մահից,  
Այժմ օգնական ու զորավիր եղի՛ր մեզ,  
Որ մենք էլ ժառանգենք Տիրոջ խոստացած  
Երկնային Արքայությունը: Ամեն:



## ՏԻՐՈՉ ՊԱՏԳԱՄԸ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐԻՄՆԵՐԻՆ

«...Նրանք երբեք չեն երերա և կլինեն  
անվախ, քանզի ես նրանց Արիության  
Հոգի կտամ: Կործանիչ խարազանը չի  
դիպչի նրանց: Նրանք ոչ մի քար  
առանց շրջելու չեն թողնի: Նրանք  
կրնկակոխ կհետևեն մեղսագործներին,  
ամբարտավան հռետորներին,  
մեծամեծներին և հպարտներին,  
կեղծավորներին, իմ Եկեղեցու  
դավաճաններին. Նրանք աննահանջ  
հետապնդելու են նրանց Իմ Խաչը մի  
ձեռքում և Վարդարանը՝ մյուսում: ԵՎ  
Մենք (Հիսուս և Մարիամ) նրանց  
կողքին կանգնած ենք լինելու: Նրանք  
փշուր-փշուր են անելու աղանդները և  
փոխարենը՝ հաստատելու են հավատար-  
մությունն ու ճշմարտությունը: Նրանք  
թույնի դեմ հակաթույն են լինելու,  
քանզի նրանք կրողբոջեն և կծաղկեն  
կոկոնների պես՝ Մարիամի  
Արքայական Սրտի միջից»:

«Ճշմարիտ Կյանք Աստծո մեջ»  
պատգամների գրքից. 03.04.96թ.

**ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ:** Նախքան սույն գըրքույկի տպագրվելը՝ 2023թ. օգոստոսի 31-ին Աստծո Սուրբ Հոգով հանկարծ այնպիսի Ներշնչում եղավ, և ինձ հասկացվեց, որ պարտադիր պետք է «ԵՐԵՔ ԽԱՎԱՐ ՕՐԵՐԸ» Վերջին Օրերի մասին վիրակիր սուրբ հայր Պիոյի և երկու վիրակիր կանանց մարգարեռթյունները Աստծո Պատժի մասին, առանձին բրոշյուրով նույնպես տպագրվի և դրվի այս գրքի հետ։ Այդպես էլ արվեց Աստծո Կամքով։

Այն Քրիստոսի երկրորդ Գալուստից առաջ տեղի ունեցող գալիք իրադարձությունների մասին է, որ ողջ մարդկությունը պետք է ականատես լինի և դրան պատրաստվի, քանզի պիտի կենդանի մնա մարդկության միայն  $1/4$  կամ  $1/3$  մասը։ Այդ Յ խավար օրերին ոչ մի լույս չի լինի ու միայն օրհնված մոմերը կվառվեն... պետք է դուրս չնայենք և աղոթքով ծնկած պիտի լինենք խաչելության առջև՝ Աստծուց Ողորմություն խնդրելով և Վարդարան աղոթելով։



**Թող Աստծո Օրհնությունն ու Ողորմությունը և Տիրամոր Բարեխոսությունը  
մշտապես լինեն այն բոլոր անձանց հետ,  
ովքեր իրենց հանգանակությամբ, սիրով  
մաս կազմեցին այս գրքերի հրատարակմանը:**

**Աշխատասիրությամբ՝  
Սոֆի Հակոբյանի,  
Եջադրող սրբագրիչ՝  
Մեհրուժան Բաբաջանյանի**

**Հնթերցողին խնդրում ենք իրենց աղոթքներում հիշել վերը նշված անձանց և ողորմություն հայցել նաև նրանց ննջեցյալների հոգիների փրկության համար:**

\*\*\*

**Տպագրված է. «ՄՀՄ ԳՐԱԾՈՒՆ»  
ՍՊԸ տպագրատանը:  
Հասցե՝ ՀՀ, Երեվան, 0064, Հ.Ա. Բ-1  
թաղամաս, Բաֆֆու 84/բ, Հեռ/Փաքս  
(+374 10) 72 00 83)**

\*\*\*

**Սոֆի Հակոբյանի էլեկտրոնային հասցեն.  
*sofihakobyan00rambler.ru@rambler.ru***





































































































